7784
7785
7786

910.4(41.... 925
ф-65



# ԽԱՌՆ ՆԱՄԱԿՆԵՐ

## ՈՒՂԵԽՈՐՈՒԹԵԱՆ

ԳՐԵԱՑ

ԿԻՐԱԿՈՍ Ս. ՂԱԶԱՆՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԵԱՆ

—

1887

910.4 (47.925)

# ԽԱՌՆ ՆԱՄԱԿՆԵՐ

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

ԳՐԵՍ.Յ

ԿԻՐԱԿՈՍ Ս. ՂԱՋԱՆՃԵԱՆ

معارف نظارت جلیله‌سنك ٤٤٥ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԲԵԱՆ

1886

6746.17

# ՁՕԼ

## ՆՈՒԻՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ՀՕՐՆ ԻՄՈՅ

# ՍՈՒՔԻԱՍ ՂԱԶԱՆՃԵԱՆԻ

ԾՆԵԱԼ, Ի 1808 ՄԱՐՏ 18

ԵՒ ՎԱԽՃԱՆԵԱԼ, Ի 1880 ՄԱՅԻՍ 15

# ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Այս անգամ դարձեալ Պոլիս գալով, ուրիշ շատ մը փոփոխութեանց հետ տեսայ նաև ուսման յառաջդիմութիւնը շնորհիւ մեր Օգոստափառ Սուլթանի, Օսմանեան բարեխնամ Կայսեր, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ մեծի Ինքնակալին։

Երջանկութիւն է և ուրախութիւն Օսմանեան հպատակաց համար ունենալ մի այսպիսի հզօր և քաջարի գահակալ նման իւր մեծ հօր երջանկայիշատակ (ՁԷՆՆԷԹՄԷՔԵԱՆ) Սուլթան Մահմուտի, բարեսիրտ, քաղցր և ողորմած նման իւր հօր հանգուցեալ Սուլթան Մէճիտ սիրեցեալ Ինքնակալին. իսկ խոհական բարեսիրտ, իմաստուն, հանճարեղ, և ուսումնասէր առաւել քան զամենայն նախորդ գահակալս Օսմանեան։ Տէր տայէ նմա երկար, երջանիկ և յաջող օրեր։

Մեր Ինքնակալի ուսումնասիրութիւնը, Պօլսոյ Օսմանեան նոր թանգարանի հաստատութիւնը և վարժարանաց հոգատարութիւնը, թէ՛ 'ի Պոլիս և թէ՛ 'ի գաւառս նոր նոր կրթութեան մեծ շնորհքները, անթիւ գրքերու հրատարակումը գրգռեցին իմ ցանկութիւնս, որ ես ալ մաս մը ունենամ գրականութեան մէջ։

Եւ որովհետև չունիմ հիմնական մի ուսմունք որպէս զի տպագրութեան արժանի գործ մը հեղինակեմ, որոշեցի իմ ճամբորդութիւնս հրատարակել, գիտնալով որ լի է սխալներով և թերութեամբ, անկանոն է ոճ և դասակարգութիւն, և ուրիշ հրատարակութեանց քով մերը անարժան է տպագրութեան։ Այսու հանդերձ, կարդ մը գրուածքներ ալ կան որք մինչև իսկ մնաս կը բերեն բարուց։ Իսկ մեր տեարակ գէթ մնասակար կողմը չունենալուն, և վստահ ընթերցողաց ներողամտութեան, յանձնեցի տպագրութեան։

Ես ամօթ չեմ համարիր խոստովանիլ իմ անկարողութիւնս. մեր դպրոցի շրջանը չկար ներկայ ուսմունք և դիւրութիւնք,

ինչպէս պիտի տեսնէ ընթերցողը Երգնկայի տեղեկագրութեան մէջ. հետևաբար մեք գրեցինք մեր դաւառական ոճով և մեր գիտցածին չափ։

Գրքուկին անունը կոչեցի Խառն Նոմանէք, քանի որ դասակարգութիւններս ալ խառն են, և տեղեկութիւնս քաղած եմ իմ հանրորդութեան յուշատետրերէս և նամակներէս, և առաջնորդ ունեցած եմ ինձ Տիեզերական Աշխարհագրութիւն Հ. Ղևոնդ Ալիշանի պատուական գիրքը։

Քաղցր է մեզ յուսալ որ ընթերցողը բարեսրտութեամբ պիտի ընդունին մեր այս դեղջական գրուածք, յորմէ քաջալերուելով կրկին աշխատիմք գրել պակաս մնացած մասեր և այլ ինչ։

Ընթերցող Տէր, ես խոստովանեցայ իմ անկարողութիւն, և դուք ներողամտութեամբ կարդացէք իմ սխալներ և թերութիւններ։

Կ. ՂԱԶԱՆՃԵԱՆ

# ԽԱՌՆ ՆԱՄԱԿՆԵՐ

## ՆԱՄԱԿ Ա.

Երզնկայ, 1842—1886.

Ընթերցողք անշուշտ կը ներեն Երզնկայէ սկսելուս համար, քանզի Երզնկան նշանաւոր էր 'ի հնումն իր Ս. նահիտով, և Քրիստոնէութեան առեն Ս. Գրիգոր Լուսաւորիչով, այժմ Օգոստափառ Սուլթանի չորրորդ բանակի կեդրոն ըլլալով, նաև կարևոր իր վանքերով և հնութեամբ, իմ ալ ծննդավայրս ըլլալուն՝ բնական էր որ դէթ այսչափ նախադասութիւն մը նուիրէի իրեն։

### ԵՐԶՆԿԱՑ, ԵՐԻԶԱՑ, ԷՐԶԻՆՃԵԱՆ

Այս քաղաքի ե՞րբ և յումմէ՞ շինուիլը նշանակուած չէ. 'ի հնումն էր Երիզայ կամ Երէզ, հաւանականաբար Եփրատի եզերքը ըլլալուն համար։

Յետոյ եղաւ Եկեղեաց գաւառ 'ի ժամանակս Տրդատի և Լուսաւորչի մերոյ, բաղում եկեղեցիք, վանքեր, մատուռներ շինուեցան. և ապա եղև Էրզինկեան կամ Էրզինճեան յետ անկանելոյ ընդ իշխանութեամբ Օսմանեան կայսերաց։

Ի կողմանս արեւելից Երիզայի է Դերջան. յարեւմտից Բէմախ կամ Անի ամրոց և Կերճենիս. հարաւակողմն Տաւրոս կամ Տուժիկ լերինք և Վերին Կեղի հիւսիսակողմն է Գայլ Գետ նահանգ, Տաճկերէն Բէլէր։

Երկնակայ շրջապատեալ է Տաւրոս լերան շղթայներով, Գոհանամ և Բէշիշ տաղի լեռներով, ամենեքին ապառաժ։

Երկնկայի դաշտին երկարութիւնն է 7 ժամ (12 մղոն) և լայնութիւնը 2 ½—3 ժամ։ Դաշտն է տափարակ և դեղատեսիլ. լեռներու ստորոտը ցրուած կան իր 110 գիւղերը և վանքերը (ոմանք ի միջավայրի). օդը բարեխառն է. տարուան չորս եղանակները անթերի կը կատարեն իրենց զօրութիւն։

Դաշտը զարդարեալ է պտղատու և անպտուղ ծառերով, այգիներով և պարտէզներով։ Եփրատ գետը, Մէրճանի, Գայլ Գետի, Բաղնիքի, Վասկերտի և այլ գետակներ և առուներու ջուրեր կ'ոռոգեն արտեր այգիներ։

Ունի քաղցրահամ ջուրեր մանաւանդ 'ի վանօրայս և 'ի գիւղօրէս։

Կառավարութիւնն է Մութէսարրիֆութիւն ընդ իշխանութեամբ Կարնոյ կուսակալութեան, և ունի իր հսկողութեան ներքև Բէֆռէ, Կերճենիս (Բէֆահիյէ), Գոռբէնց գաւառները և շատ մը գիւղեր բաժանեալ Գոռդեանէ որ կոչի Պոլոդան։

Բերքն է ցորեն, բամպակ, սուսամ, խաղող և այլ պտուղներ. ունի մէկ ջերմուկ տաք ջուրի, մէկ հանքային ջուր որ կը կոչուի Էրէն։ բժիշկք կը նամանցնեն վիշի և այլ հանքաջուրերու, զոր օգտակար կը դանեն քանի մը հիւանդութեանց համար։

Տեղային արհեստներն է տարաղագործութիւն և պղնձագործութիւն, որ կը շինեն մանկաց և խաղալիքներու ամեն տեսակը, բուրդէ շալ, ճերմակ կտաւ, պղնձեայ ամեն կերպ անօթներ, դաւաթներ՝ եւրոպական ապակեղէններու նման. կան վարպետ թիթեղագործ, ժամագործ, դերձակ, ատաղձագործ, հիւսն, և որմնադիրք, սոյն արհեստաւորաց մեծ մասը սորված են Կ. Պոլիս, ինչպէս նաև եւրոպական կօշիկներ շինող, զինագործ, ներկարար, խաղաղորդ, և այլ շատ արհեստաւորք, տաղանդաւոր վարժապետներ, տաճկաբաններ, գծագրիչներ և այլն։

Հայ արհեստաւոր մը կը շինէ նոր տեսակ զէնքեր, կղպանքներ և այլ հնարաւոր գործիներ. ուրիշ մը ընտիր ներկեր. ոմն պղնձեայ ճարտար անօթներ, ինչպէս նաև թուրք արհեստաւոր մը. վերջապէս արհեստի մասին այս քաղաքի ժողովուրդը շատ ընդունակութիւն ունի։

Հայ կանանց մեծագոյն մասը կը գործէ մանկաց, խավլի, շայախ և այլն. հոս կանայք պարապ չեն նստիր։

Ներքին բերքը առատ չէ դաշտի փոքրութեան բաղդատմամբ ժողովուրդի բազմութեան համար, որով արտածութիւնը քիչ է կամ բնաւ. վաճառականութիւնն ալ ծաղկեալ չէ։

Հնութեան կողմանէ կը դերազանցէ ուրիշ շատ մը քաղաքներ. բայց թէ՝ շէնքերու հիմք քար, և պատերը չեփած աղիւս ըլլալով, հնութեանց փլատակները շուտով կը դառնան հողաբլուրներու և քարանց կոյտերու։

Ի նախնումն յաճախ երկրաշարժ պատահելով, կրած է շատ փոփոխութիւնք. այնպէս որ՝ քաղաքին տեղը

քանի մը անգամներ փոխուած է. 1045 թուականին հրաման կը լայ մէն մի տան մէջ ջուրի հորեր բանալ, ուսկից 2–8 կանգուն է ջուր կ'ելլէ։

1784 ին վերջի մեծ գետնաշարժը տեղի կունենայ կէս գիշեր ամառ եղանակի. շէնքերու մեծագոյն մասը կործանելէն վերջ բաղմաթիւ մարդիկ փլատակաց ներքև կը մնան (1). աւանդութիւնք և պատմութիւնք կըսեն թէ Հայերու կէսէն աւելին մեռան կամ վիրաւորեցան. Թուրքերն ընդհանրապէս գիւղերը դանուելով, անոնցմէ կորուստ քիչ է պատահեր։

Սոյն թուականէ վերջ սասանմունք դադարեալ է. երբեմն պատահեր է անկարևոր ցնցումներ, կենաց և շէնքի կորուստ չըլլալով։

Երդնկայ 'ի հնումն թագաւորանիստ քաղաք ըլլալով, շատ անգքեր տեղի ունեցեր է. Ասորւոց, Արաբացւոց և Պարսկաց հալածումները կրելէ վերջ՝ խաղաղեր է ընդ իշխանութեամբ Օսմանեան։

Ի հնումն կը նստէր մէկ պաշտօնեայ պոյվատա անուամբ ընդ իշխանութեամբ Էրզրումի վալիին. իսկ երբեմն կը կառավարուէր տեղացի պէյի մը ձեռքով։

Շատ անգամ Քուրդեր սպառնացեր են, գիւղերը թալլեր և գիւղացիքը հարկատու ըրեր, այլ 'ի վերջոյ հալածուեր և հեռացեր են։

Այս դարուս սկիզբը կամ նախորդ դարուն վերջերը Մըրթոյ անուն Քուրդ մը զօրանալով, բերդ մը

---

(1) Այս ատեն Սիւլէյման փաշայ կուսակալի պաշտօնով Կարին կերթար, սոյն արկածին զոհ կերթայ, և փլատակաց տակ կը թաղուի։

մը կը շինէ Երկան գիւղի լերան միջնավայրը և բաւա-
կան զօրք ունենալով կիշխէ քաղաքին. Կարնոյ վա-
լիի կողմէ պաշտօնեայ մը կուգայ և զօրք ժողուելով կը
յարձակին բերդին վրայ, Մրրթոն կոպաններն, որոյ հա-
րուստ և նշանաւոր կինը կնութեան կառնու Օսման աղա
անուն անձը Քէմախի Ուրֆաթ գիւղէն և հին մի ցեղէ,
որ յետոյ կոչուայ Օսման փաշայ (Թիւրք Օսման փաշայ)
անունով և կանուանի Սերբաստիոյ կուսակալ, ուր կը
մեռնի, որոյ որդին է Հաճի Իզզէթ փաշայ, այժմ կու-
սակալ Ադրիանուպօլսոյ, սորա եղբօր որդին էր Հաճի
Ալի պէյ, որոյ դերդաստանը այժմ Երզնկայի հարուստ
մեծատուններն են, և է նշանաւոր Հաճի Մէհմէտ պէյ,
որդի Հաճի Ալի պէյի։ Այս Հաճի Ալի պէյ նշանաւոր
եղած էր իր քաջ բնաւորութեամբ և սարսափ ձգած էր
Քիւրդերու սրտին։

Այս դերդաստանը ունի յիշատակներ, նոյնպէս
բազում կալուածներ, արտեր, այգիներ, կրպակներ,
խաներ և այլն։

Հաճի Ալի պէյ շինեց 1850ին Եփրատի մեծ կա-
մուրջը. Հաճի Իզզէթ փաշայ կը շինէ մէկ մզկիթ սկսեալ
1871 էն և ցարդ հազիւ կաւարտի՝ ամբողջ քարաշէն
բարձր, որ ցարդ չկայ նմանը շրջակայ գաւառաց մէջ։
Թանզիմաթէն վերջ քաղաքի կառավարութիւնը փոխե-
ցաւ միւտիրութեան (1). չորրորդ բանակի կեդրոնը քա-
նի մը անգամ հաստատուեցաւ Երզնկայ և փոխադրե-

---

(1) Միւտիրութեան առեն ժողով մը կար, մէկ դատի, մէկ
միւֆթիի և վեց Մահմետական անդամներէ, իսկ մէկ Հայ ան-
դամ ՀԱՅԷՐ ՔԷՀԻԼ անուամբ։

ցաւ Քարբերդ և Կարին, այժմ դարձեալ Երզնկայ։

1864ին երբ Ռեշիտ-Ֆ եղաւ, Երզնկայի կառավարութիւնը փոխեցաւ միութեարբիութեան որպէս է ցարդ։ դարձեալ իշխանութեամբ Կարնոյ կուսակալին, և եղաւ նոր ժողովներ՝ անդամոց կէսը քրիստոնեայ ըլլալով։

Ազգային կառավարութիւնը երբեմն Կաթողիկոսներ, երբեմն Հայրապետներ, երբեմն 12 Առաջնորդներ մէն մի վանքի մէջ՝ գիւղեր և թաղեր մէջերնին բաժնելով, երբեմն երկու Առաջնորդ՝ մին քաղաքի և գիւղօրէից, միւսն ալ Մերճանի վանուց և հինգ գիւղերու. 1860էն սկսեալ (Սահմանադրութեան թուականէն) կը նստի միակ Առաջնորդ(1), Եպիսկոպոս կամ Վարդապետ։ ընդ իշխանութեամբ ունելով բոլոր վանքեր և գիւղեր։

Երզնկայ ունի հին ձեռագիր պատմութիւններ, շատ արձանագրութիւններ, բայց ընդհանրապէս կը խօսին անհիւթ և մասնաւոր բաներու վրայ, ինչպէս, արտասո-

---

(1) 1860էն մինչ 1886 Երզնկայ ունեցած է վեց եօթն Առաջնորդներ և Տեղապահներ, որոնք գրելու արժանի յիշատակ մը և գովութեան արժանի ծառայութիւն մը չունենալէ վերջ, տուած են ապիրի կերպ կերպ խռովութեանց, դժտութեանց և երկպառակութեանց. միայն Ալէքսեան Գրիգորիս վարդապետ (այժմ Եպիսկոպոս Տարօնի) չինած է Քրիստոնեան օրիորդաց վարժարանը հանգանակութեամբ, և Հմայեակ Եպիսկոպոս Դիմաքսեան ներկայ Առաջնորդարանը չինելէ վերջ, մեծ զարկ մը տուեց կրթական գործին, և չեղաւ ո և է պատճառ խռովութեան, այլ կառավարեց խաղաղ օգտակար կերպիւ, որ եղաւ Հայ ժողովուրդին սիրելի, պաշտօնէից և Թուրք ժողովուրդին յարգելի։ Ինչպէս որ միշտ դէմ կը խօսինք մեր կղերին, նոյնպէս ալ պէտք է օգտակարները կամ անվնասները քաջալերել։

վոր ձիւն գալ, հիւանդութիւն պատահիլ, փաշաներու երթևեկը, Քուրդերու կռիւներ, ազգային վէճեր, եւ կեղեցիներու շինութիւններ կամ նորոգութիւններ, երեւելեայ մահեր . . . . . .
որոց վրայ գրելը թէ՛ անպատեհ է եւ թէ՛ անկարեւոր։

Երգնկայի հնութիւններն են վանքերը եւ վանքերու աւերակները, քաղաքի միջնաբերդը, գետնուղին, դըմբրեթը, թաշխանը, պէտէսթէնը, Խակէնտէր անուն բաղնիքը, որ Հայք սրբոյն բաղնիք կը կոչեն (նախնուն եկեղեցի), Գուրշունլի մզկիթը, եւ հին քաղաք կոչուած տեղի աւերակները, ուրկից դեռ ես փորելով կը հանեն շատ հասարակ քարեր, երբեմն կը գտնուի հին ոսկի եւ արծաթ դրամներ եւ այլն։

Մզկիթներ շատ կայ, սակայն փայտաշէն ըլլալով մէկ դար հազիւ կը տեւէ, եւ կրկին նորոգուելով արձանագրութիւնք կը կորսուին. միայն Գուրշունլի մզկիթն է քարուկիր եւ ունի արձանագրութիւնք։

Միջնաբերդը շինած են Գենուացիք (Ճենովացիք) որ ռամիկ ժողովուրդ Ճինիվիզ կըսէ։

Բերդը մեծ հնութիւն է. որմերու վրայ կան արձաններ, բայց մէջի շէնքեր մեծ մասամբ աւերակ ըլլալով կը մնայ պարիսպները, որոց քարերու մէկ մասն ալ քակած են, եւ մէջը նոր շէնքեր շինուած է վասն պիտոյից արքունի ղօրաց։

Քաղաքի բնակիչք կը հաշուեն 4500 տուն, որոց 3000ը Թուրք, 1200ը Հայ, 100ը Յոյն եւ Բողոքական, 200ը Քուրդ են, սակայն այս թիւերը վաւերական չէ. կառավարութեան վերջի մարդահամարը աւելի ճիշդ է անշուշտ։

Հայք ունին հինգ եկեղեցի, Ս. Աստուածածին՝ աւերակ, Ս. Նշան (1) և Ս. Փրկիչ՝ քարուկիր, Ս. Երրորդութիւն և Ս. Սարգիս՝ փայտաշէն, ունին մի հրապարակ (Քիկիսէ մէյտանի). Հայոց և Թուրքաց թաղերը զատ է, խիստ փոքր մաս մը կայ խառն։

Ունի վրան գոց վանքառանոց (չարշը), խան, մաղազա, բոլորն ալ փայտաշէն, և միշտ ընդ երկիւղիւ հրդեհի։ Խիստ վայելուչ և հոյակապ շինուած են արքունի շէնքեր, և փողոցներ լայն և ուղիղ են ըստ կարելւոյն, բայց կարօտ բարեկարգութեան. ունի ծառուղիներ թէ՛ ի քաղաքի և թէ՛ ի ճանապարհս հիւանդանոցի մինչ վեց մղոն և Եփրատի երկու մղոն. միւս ճանապարհը ևս կսկսին անդգալի կերպիւ լինիլ ծառուղի։

Հիւանդանոցը և զօրանոցը խիստ ընդարձակ է և կանոնաւոր, պարտէզներով, բաղանեօք և դրախտներով զարդարեալ. շայեռախի մեծ գործարանը (ֆապրիքան), և երկաթի գործարան, կաշիի և կօշիկի գործարան (տապաղհանէ, տիքիմհանէ), որք բանակի զօրաց

---

(1) Այս եկեղեցւոյ մէջ Յովհան Երզնկացիի գտմբանը կայ, որոյ տապանագրին վրայ գրուած է «Այս է տապան Հանդուտեան, Յովհան Պլուզ Ծործորեան, էր վարդապետ Ճարտասան»։ Ցեսս Թորոս Ախպար հատոր Բ. հեղինակութիւն Հայր Գարեգին Վ. Սրուանձտեանցի առաջնորդ Պոնտոսի. այս տողեր գրուած ատեն կը գտնուի Էջմիածին վասն ընդունելոյ զկարգ Եպիսկոպոսութեան։ Այս գերեզման՝ Առաջնորդի աթոռի ներքևը չէ, գերեզմանն՝ զատ է աթոռը. եկեղեցւոյն շինութենէն վերջ փոխագրուած է հոս. յառաջ հին եկեղեցւոյն դրան քովն էր, որ այժմ վարնասուն կրուի կանանց դրան կողմը. կերևի թէ սխալ տեղեկութիւն մը տուած են տեղացիք Ն. Սրբազնութեան։

զգեստուց և կօշիկներու պիտոյքը կը հոգան, թէրզի-հանէ, սարաճհանէ և այլ ամեն պիտանի բաներու հա-մար ունին վարպետ զօրապետներ։

Մէկ տպարան վիմագրութեան, մէկ լուսանկարի գործարան, որք ամենքն ալ բանակին կը վերաբերին։

Բանակի տպարանքն է (պապի միւշիրի) քարաշէն և զարդարանքով, որոյ քովն է զօրային ըիւշախէ վար-ժարանը և նորակառոյց տպարանք կառավարութեան։

Զորրորդ բանակը կը կառավարի իշխանութեամբ բարձրագոյն միւշիրի(1) մոյ, և որոյ իշխանութեամբ է Կարին, Վան, Ցիգրանակերտ, Սեբաստիա և Տրապի-զոն և այլուր գտնուած զօրքեր և զօրապետներ։

Միւշիրէն վերջ կան չորս հինգ ֆէրիզ և 12էն ա-ւելի լիվայ փաշաներ, որոց ամենքն ալ ունին յատուկ պաշտօններ. ունի մէկ ընդհանուր համարակալ (մու-հասէպէճի), և բազում քարտուղարներ, դրագիրներ, և այլն։

Միւս պաշտօններ բաժնուած է զօրապետներու։

Քաղաքի կառավարութիւնն է մութասարրֆութիւն. ունի ժողովները Իտարէ, Պիտայէթ, Պէլէտիէ անուն-ներով։

Իտարէն է վարչական. հաստատուն անդամ են զատի, միւֆթի, առաջնորդ, համարակալ (մուհասէ-պէճի), քարտուղար (թահրիրաթ միւտիրի), և առժամ

---

(2) Միւշիր Տէրվիշ փաշայ մեծ ջանք ըրած է քաղաքի զար-գացման. նոյնպէս ներկայ Նաֆիզ փաշան ուրիշ շատ օգուտ-ներու հետ երկու ապրիւր շնորհեց նորաշէն Հայ թաղերու։ Էրարի և հեղահամբոյր։

եայ անդամ ընտրութեամբ երկու Թուրք և երկու քրիստոնեայ։

Պիտայէթը երկու ճիւղի կը բաժնուի, հուգուգ (իրաւանց) և ճէզա (պատժական). ունին մէկմէկ նախագահ, երկուքը մէկ ընդհանուր դատախազի օգնական, երկերկու ընտրեալ անդամք՝ մին Թուրք և մին քրիստոնեայ, և մէկմէկ փոխանդամ, քարտուղարներ և գրագիր և այլն։

Պէլէտիյէն քաղաքական է որ ամեն տեղ կայ և պաշտօնը յայտնի է թէ՛ ի Կ. Պոլիս և թէ՛ ի դաւառս։

Երգնկայի դատարանաց ենթարկեալ է Տաւրոսի (Տէրսիմ) դատարանները, որոյ կառավարութիւնն է յատուկ վալիութիւն։

Երգնկայի ենթակայ են նաև Բէյմախ, Բէֆահիէ, և Գուրիչայի գայմագամութիւններ, և Պալապանի միւտիրութիւնը։

Գիւղերը ինը շրջանակի բաժնուած է, ունի ինը միւտիրներ, եօթն Թուրք և երկուքն Հայ։

Գիւղեր և թաղեր կընտրեն իրենց մշխթարը, իմամը, փափաղը և Ծերակոյտի անդամները, որոց կըսուի Էխթիյար մէճլիսի, և յարաբերութիւն ունի ընդ կառավարութեան։

Ազգային խնդիրք կը ճանչցուին Առաջնորդարանէ, և Առաջնորդը Ռուէէր կը գրէ ամեն ազգային խնդրոց համար, որք են ընդհանրական և ազգային։

Միւթէսարրիֆը ունի մէկ խումբ ոստիկան ընդ տեսչութեամբ հաղարապետին, և կան նաև շատ պաշտօնեայք, ինչպէս արտօրէից տուրքերու, էվկաֆներու, վարժարանաց և այլն։

Հասարակաց շէնքերու մէջ նշանաւոր է պէյերու և փաշաներու բնակարանները (ղօնախ). Թուրք և Հայ երևելեաց տուները, ամենքն ալ հողէ և փայտաշէն. կանոնաւոր է նոր թաղերու տուներ որք վերջին տարիներ շինուեցաւ և կը շինուի։

Կայ շատ պարտէզներ, այգիներ, մանաւանդ գիւղերը, բնական դեղեցկութեամբ զուարճալի տեսարաններով։

Թուրք բնակչաց մեծ մասը կերթան պարտէզներ մարտէն սկսեալ մինչ սեպտեմբեր, մէկ մղոնէ մինչ եօթը մղոն հեռաւորութեամբ, իսկ Հայերը շարունակ կը մնան ի քաղաքի, և միայն ամրան ջերմ օրերու կերթան օդափոխութեան 'ի վանօրայս և 'ի գիւղօրէս։

Կալուածոց մեծ մասը Թուրքաց ձեռքն է. Հայերը դեռ նոր կսկսին ըլլալ կալուածատէր։

Թուրք և Հայ բնակիչք շատ սիրով են միմեանց հետ. պաշտօնեայք և երևելիք անխտիր կայցելեն Հայոց վարժարանները, Առաջնորդարանն ու տուները. նոյնպէս Հայք։

Ձկայ օտար հպատակ, ոչ հիւպատոս, և ոչ ալ օտարազգի. միայն մի քանի տուն Յոյն դաղթականք և մի քանի տուն ալ բնիկ կամ նորեկ Բողոքականք կան, որ խիստ սիրով են Հայոց հետ. Հայք արդէն ծանօթ են իրենց օտարասիրութեան համար։

Քաղաքի բնակիչք շատնալու վրայ են. Թուրքեր եկած են և կուգան Կարսի և Կարնոյ կողմերէ. Հայք կուգան ՅԱկնէ, Կիւմիւշհանէէ և Գուղուլչանէ։

110 գիւղերը կը բաժնուի չորսի. Էօթէկէչէ, յանկոյս Եփրատի, Սաղկէչէ (դեռեղրի ճահճաւոր գիւղեր),

5746-57

Գրեկէչէ (ընդ ստորոտս Քէչիշ տաղիի եղեալ գիւղեր), և Մըխարկէչէ՝ արևմտեան հիւսիսի գիւղեր։ Յայսկոյս Եփրատի երեք բաժին։

Նշանաւոր գիւղերն են Ճիմին, Մէղուշիկ և Խախ-չըրմէս աւանք արքայական, Վասկերա (Վասակակերտ) և Բումսէրայ, ուր դեղամահ եղաւ Մեծն Ներսէս 'ի Պապէն։

Շրջապատ լերինք ունին հինգ կիրճ, Ճիպլիճէ, Քէ-մահ, Զարտագլի, Մէրճան, Սըփրբոր անուններով, ո-րոնք անցք են 'ի ճանապարհացն Կ. Պոլսի, Պաղտատի, Կարնոյ, Սեբաստիոյ և Քարբերդի։

Նշանաւոր է Թիլն կամ Թիլ աւան և Հայրապետի գիւղերն, որք 'ի կարգի վանօրէից նշանակեալ են։

72 գիւղերու բնակիչք Թուրք են և մանաւոր Գը-զըլպաշ կոչուած Քուրդեր, 30 գիւղերը խառն Հայ և Թուրք, իսկ Մթնի, Կարմրի, Կիւլլիճէ, Մահմուտցիք, Զիքլիկներ, Գարատիկին և Երկանկիլնցիք միայն Հայք կը բնակին։

Ամեն գիւղ ունի մզկիթ և եկեղեցի, միայն 6-7 գիւղերի մէջ չկայ մզկիթ՝ Քուրդ ըլլալնուն համար։

Գիւղերու վարժարանք հինօրեայ դրութեան մէջ են քիչ բացառութեամբ, և գրեթէ փոփոխութիւն չե-զած կը համարուի վերջի 30 տարուան շրջանին մէջ, որ զգալի և մեծ փոփոխութիւն եղաւ քաղաքի վարժարա-նաց վրայ, մանաւանդ վերջին տասնեակի։

1849էն 1856 (իմ դպրոցի շրջանը) Երզնկայի մէջ կար միայն մէկ հատիկ ազգային վարժարան, ուր կար 100ի չափ մանչ և 40ի չափ աղջիկ աշակերտ, և ունէր միայն մէկ վարժապետ և մէկ քահանայ. տարեկան

ծախքն էր միայն 10–20 ոսկի եկեղեցեաց սնտուկներէ։

Աւանդական դասերն էր հայերէն կարդալ գրել և եկեղեցական երգ, փոխ և քարոզ։

Դասագրքերն էին Բերական, Հեղարան, Սաղմոս, Ժամագիրք, (Գործք Առաքելոց կամաւոր) և Նարեկ։

Երբեմն կար մի դասատու Տաճկերէնի, դասագիրք Բերական, Ինչա, Թէօհվէ և Կուլիսթան։

Երբեմն կար Բերականութեան մի տաղանդաւոր դասատու՝ Աւետիս Զիւլալեան Արապկիրցի (աշակերտ հռչակաւոր Յովսէփ վարժապետի). որ դժբաղդաբար մէկ տարիի չափ հաղիւ մնալով դնաց հայրենիք. ահա այս էր այն ատենի ուսման վիճակ, և վարժարանի կառավարութիւնն էր դաւազանի և ֆալախի միջոցաւ։

Շատ հոգ կը տարուէր կրօնական մասին. առաւօտ երեկոյ աշակերտք կսկսէին և կաւարտէին աղօթքներով, և պարտաւոր էին երթալ եկեղեցի. կը սորվէին և մեծ մասը բերան կընէին՝ ինչպէս՝ Եկեսցէ, Հաւատով, Տէր ամենակալ, Ողորմեայ և այլ աղօթքներ, և շատ մը Շարականներ, Փոխեր և Քարոզներ։

Շուկայէն կարգ մը հասակաւոր երիտասարդներ կուգային երեկոյները՝ ձայնագրութիւն և Շարական դաս առնլու։

Մեծ պահոց սկիզբէն մինչև վերջը երեկոյին կը կարդացուէր Յայտնութիւնքէն՝ աւուր պատշաճի եկեղեցոյ ժամասացութենէն յառաջ, և Եկեսցէն՝ ամբողջ վերջը։

Հիմայ բաղդատենք 1886 թուականը 1856 թուականին հետ։

1886ին կայ Երիզայի մէջ 4 ազգային, 2 մասնաւոր

և այլ մանր մունր մանչերու վարժարան, որք ունին 7-800 աշակերտ, և 1 ազգային, 2 մասնաւոր և մի քանի մանր մասնաւոր վարժարան աղջկանց, որք ունին 300 աշակերտուհի։

1856 ին աշակերտաց թիւը հազիւ 130-140 էր. 1886ին աշակերտաց թիւն է 1000էն աւելի (1). վարժապետ, դասատիարակ և այլն կը հասնի 30-40 և տարեկան ծախս կըլլայ 7-800 ոսկի։

Ներկայ դասագիրքերը կը կազմեն երկար մի ցանկ և ուսմունք ոչ թէ միայն հայերէն է. որ 40 «ԲԿՆԵՐ»ու ցանկ մը ունի, կայ նաև Ֆրանսերէն, Թուրքերէն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Գծագրութիւն և այլն։

Ամենասիրելի ժամանակը կերթայ յառաջ հոկայաքայլ. և մեզի կերևի անզգալի. ո՞վ դիտէ 30 տարի վերջ կամ 19դդ. դարը լրանալուն ի՞նչ տարբերութիւն պիտի ըլլայ ներկայիս հետ։

Վարժարաններու վրայ մանրամասն գրել պէտք է, բայց մեր համառօտութենէն վրիպած չըլլալու համար, այսքանը կարծեմ գաղափար մը տուած կըլլայ ընթերցողին։

Պէտք չէ մոռնալ նաև որ Երիզայի վարժարանք չունին մեծ կալուածներ և այլ եկամուտի աղբիւրներ. բոլոր ծախքը Ազգը կը հոգայ եկեղեցւոյ կալուածներէ, տղայոց թոշակներէ, և նուիրատուութիւններէ. դրա-

---

(1) Թէ այսքան ուսանողներէ շրջանաւարտ տղայոց ապագան ի՞նչ պիտի ըլլայ, և Երիզայ ի՞նչ բարեկարգութեան պէտք ունի, պիտի գրեմ ուրիշ առեն։

մական մասը տխուր է քիչ մը. այս քաղաքի մէջ չկայ մեծ հարուստներ, և Ազգը ունի վանքեր, եկեղեցիներ, ո՞ր մէկին օգտեցնէ. թէև ժողովուրդը վարժ է վճարելու, բայց ժամանակի տագնապ մեծ աղդեցութիւն ունի։

## ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ

Այս քաղաք ունի շատ վանքեր, ուխտատեղիներ, մատուռներ, որոց հիմն է Ս. Լուսաւորչի նահատակութիւնը և մասամբ իւիք Ցրդատի առատաձեռնութիւնը։

Բայց, ափսո՜ս, հիմայ ի՞նչ կը տեսնես այն օրերէ և չէնքերէ, եթէ ոչ շատ մը ուխտատեղիներու աւերակներ։

Կանգուն մնացած վանքերն ալ շեղած են իրենց նպատակէն և եղած են լոկ ուխտատեղիներ, կամ տուելի ճիշդն ըսելով՝ զբօսավայրեր (1)։

---

(1) Ո՞ւր մնաց վանօրէից մէջի հիւանդանոցները, ո՞ւր մնաց անկելանոցները. ո՞ւր են այն միաբանները, որք կը սորվէին Աստուծոյ ուսմունքը և կը սորվեցնէին ժողովուրդին Ս. Աւետարանի անգին գանձերը, այն Աւետարանի՝ որ ճշմարտութեան հիմն, արդարութեան մայրը, գթութեան գանձը, ընկերասիրութեան հաստատ կապը, մարդկութեան բարձրութիւնը, և աշխարհի ճրագն է։ Արդեօք ինչո՞ւ և ի՞նչ պատճառաւ գոյութեան ժառանգաւորաց դպրոցները, որ կեդրոնը այս վանքերն էր և կը պատրաստէր սուրբ կղերներ, ժողովրդական հայրեր. ո՞ւր մնացին այն դպիրները, որ Ս. Գիրք կ՚օրինակէին և կը տարածէին աշխարհ։

Ի՜նչ սոսկալի փոփոխութիւն. մէկ Աւետարանը ամիսներով կը գրէին և կը լեցունէին ամեն տեղ, հիմայ տպարանք այս-

## ՆԵՐԿԱՅ ՎԱՆՔԵՐԸ.

Ս. Նիկողայոս ընդ Բթառիճ գիւղի, յարևմուտս քաղաքին, հեռաւորութիւն 4 ժամ. վանապահն է մի քահանայ աշխատասէր, ունի այգի, արտ և ծառաստան։

Ս. Պօղոս Պետրոս, 'ի կողմն հիւսիսոյ քաղաքին և

---

քան դիւրութիւն տալէ վերջ, կղերը (բացառութեամբ) չուզեր Աւետարանը ցրուել կամ քարոզել։

Արդեօք ո՞վ եղաւ պատճառ Հայերու անջատման. ո՛ր կողմը կերթաս Հայ Հռովմէական, Հայ Բողոքական, Հայ Անգլիական, Հայ Յունական և այլ ճիւղերու բաժանեալ. միթէ երկո՞ւ Աւետարան կայ, միթէ երկո՞ւ Քրիստոս կայ, ինչպէս կըսէ սրբազան Առաքեալն Պօղոս. միթէ ամենեքեան եղբարք չե՞ն։

Հիմայ ի՞նչ է և ի՞նչ նպատակի կը ծառայեն վանքեր. եթէ իրրև հնութիւն պիտի մնան, պէտք է քայքայուածներուն և աւերակներուն տէր ըլլալ, նորոգել, և կանգուն եղածները քայքայելէ խնայել։

Եթէ իրրև ազգային կալուած կը պահուի, պէտք է անոնց եկամուտները չատցնելու կամ գէթ չկորցնելու հոգ տանիլ. եթէ իրրև ուխտատեղի և կրօնական զգացմանց վառարան պիտի համարինք, պէտք է մի այնպիսի ձև տալ որպէս զի ժողովուրդի ջերմեռանդութիւնը չի խանգարի, և Ս. Աւետարանի ճշմարտութիւնը քարոզուի. եթէ իրրև զրօսավայր, պէտք է գոնէ կանոնաւորութեան մը ենթարկել և ժողովրդեան բարուց ու վարուց վերաշինութեան օգտակար ընել։

Վերջապէս ես չեմ կրնար գիտնալ թէ ի՞նչ է այս Հայոց վանքերի թեալ վիճակ, սկսեալ մեծերէն մինչև ամենաստոր վանքեր, ամեն տեղի և ամեն գաւառի վանքեր (քիչ բացառութեամբ)։

Ի՞նչ կըլլայ այս վանքերի կալուածներ, ո՞ւր կերթայ այս ջերմեռանդ ժողովուրդի տուրքեր նուէրներ (որ այժմ տակաւ

հեռու 2 ժամ, բարձր դիրքով ընդ Զագրման գիւղի, կէս աւերակ, ունի աշխարհական վանապահ և մի հոգաբարձութիւն՝ Բզվան և այլ գիւղացիներէ. այս վանք երբեմն շինեալ և պաշտպանեալ է Ցատեան գերդաստանի բարերարութեամբ (1)։

Ը. Կարապետ Միաւորու վանք, արևմտեան հիւսիս Եալընըզ պաղ անուն գիւղի մօտ, 3 ժամ հեռու է

---

առ տակաւ քիչնալու վրայ է և օր մ'ալ բոլորովին պիտի դադրի). եթէ վանահայրերը ըսեմ, ասոնց տմենքն ալ աղքատ վիճակ մը ունին, և սակաւաթիւ է բարեկեցիկ վիճակ ունեցող։ Ապա ի՞նչ կըլլայ, պատասխան չկայ. միայն սա պատասխանը քիչ մը կը յարմարի. «Տէր չըլլալուն, Աղգը կանոնի մը տակ չառնլուն, կը փճանայ»։

Քիչ կը մնայ ըսեմ Քրիստոսի տաճարին համար ըսած խօսքը. արդէն եթէ տեսէ այս վիճակ, քանի մը տարի վերջ պիտի ըսեն. «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք արարիք տեղի ոչնչութեան»։

Այս խորհրդածութիւնները միայն Երզնկայի վանօրէից համար չըրի. իմ հայրենիքս ըլլալուն աչառութիւն կընեմ չի հասկընաս սիրելի ընթերցող. Երզնկայի վանքերը առաւելութիւններ ունին ուրիշ շատ մը վանքերէ. ժողովուրդը բաւական հոգ կը տանի իր վանքերի, և եթէ մեծ յառաջդիմութիւն մը չունի, դէթ փլչելու և աւերակ ըլլալու վտանգէն փրկուած է կանգուն մնացածներ։

Մեր նպատակէն քիչ մը հեռացանք։

Մենք պիտի գրէինք վանքերու ներկայ վիճակ, բայց ի՞նչ օգուտ եթէ լոկ պատմութիւն մը գրելով անցնիմք, այլ պէտք է դիտողութիւնք և խորհրդածութիւնք գրուին աղատօրէն, որպէս զի դարմանները չուշանան։

(1) Ժողովուրդը կը յուսայ որ դարձեալ օգնութիւն մը ըլլայ նոյն բարերարներու ժառանգներէ։

քաղաքէ, կէս աւերակ, վանապահ աշխարհական, ընդ հոգաբարձութեամբ սափրիչ արհեստաւորաց որք կը ջանան բարեկարգել և նորոգել։

Ս. Աստուածածնի (Շողակաթի) վանք, յարևմուտ և հուպ համանուն գիւղի, շինեալ նախ 'ի Թադէոս Առաքեալէ ըստ աւանդութեան, և ապա Մեծն Ներսիսէ. աշխարհական վարձակալ, ունի արտ, այգի և ծառաստան։

Կայիլոսի վանք, Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի, բարձր դիրքով ղառ 'ի վեր լերին Շողակաթի և ընդ ստորոտս Գոհանամ լերին. վանահայր քահանայ և յատուկ հոգաբարձութիւն. ցուրտ կլիմայիւ. 3 ժամ է 'ի քաղաքէն. Ս. Մինասի աւերակը մօտն է, որ Երբեւմն (ԺԳ. դարու) Յովհաննէս Երզնկացին պարապէր յուսումն։ Ս. Յակոբի վանուց յանդիման և կէս մղոն հեռաւ կայ մի մեծ խաչարձան որ կանգնեալ է փոքրիկ լեռնադաշտի մը վրայ ուր կոչեն Թուրքք խաչքն տիւղի։

Ս. Կիրակոսի մենաստան ընդ արևմտեան հարաւ, յանկոյս Եփրատի առ Քուրդ գեղիւ, 'ի մէջ ձորի անտառուտ, մի ժամ հեռու. և հանդէպ վանուց կայ մի քարայր որ կոչի մատուռիկ, և 'ի գաթաթս լերին Ս. Եղիա աւերակ և անյայտ. յաճախեն բաղում ուխտաւորք. տեսչութեամբ ներկարար արհեստաւորաց քաղաքին։

Ներսէս Հայրապետի վանք, կամ Տիրաշէն. նախ Տիրանէ շինեցաւ. հոս է բաղուկ Մեծին Ներսիսի Գիւտ նշխարացն. հարաւակողմն քաղաքին հեռաւորութեամբ միոյ ժամու՝ զարդարեալ այգիներով և ծառաստաններով։ Սորա պարիսպն շինեալ է ԺԲ. դարուն և կը մնայ ցարդ.

1880ին ունէր մի վարժարան դիշերօթիկ 40 դիւ-
ղացի աղայոց համար, և ընդ հոգածութեամբ Հմայեակ
Եպիսկոպոս Դիմաքսեանի որ էր Առաջնորդ Երիզայի,
առ ի չգոյէ եկամուտի գոցվեցաւ յետ չորից ամաց։

1883ին նուիրեց 150 Օսմ. լիրա հանգուցեալ Ներ-
սէս Ս. Պատրիարքն Հայոց՝ մի քանի սենեակ շինելու,
ընդ հսկողութեամբ է յատուկ հոգաբարձութեան, և կեր-
պիւ իւիք միացեալ Քրիստոնեան օրիորդաց վարժարանի
քաղաքին։ Ա.յս վանք էր ի նախնումն առաջնորդանիստ։

Ս. Գէորգի վանք, հուպ Երկան և Կեղնցիք գիւ-
ղերու, ընդ հարաւ քաղաքի և հեռու 2 1/2 ժամ, 'ի
ստորոտս Տուժիկ լերանց. այս վանք քայքայեալ էր
բաւական. Ներկայ հոգաբարձութիւն՝ որ գիւղերէ և քա-
ղաքէ են, շինեցին բաւական, և յուսալի է բարեկար-
գութիւն։

Տատասկի վանք կամ Զարշարանաց Ս. Լուսաւորչի,
հարաւային արևելեան կողմն է և չորս ժամ հեռու քա-
ղաքէն, յանդիման Մէրճան կիրճի, և Երեքս Մէրճան
գետին որ կը բաժնուի վանքի քովերէն և կերթայ այլ
գիւղեր. ունի շատ արտեր, պարտէզ և այգի. վեր-
ջին 6-7 տարուան մէջ շատցաւ անպտուղ ծառեր։ Վա-
նահայրն է մի քահանայ ժառանգական, խստակրօն
և աշխատասէր։ Հոգաբարձութիւնն է իր թեմի չորս
գիւղի Հայերէ։ Օդի և ջուրի առողջարար վիճակ և ան-
նման դիրք կը քաշէ ոչ միայն Հայ ուխտաւորք, այլև
բաղում Թուրք պաշտօնեայք և մեծամեծք որ կերթան
ընտանեօք, ոմանք վրաններ կը զարնեն մարգագետինը
և ոմանք կը բնակին վանքի սենեակներ. Թուրքեր աւելի
յարգ կուտան այս վանուց և կը սիրեն վանահայրը։

Հոս պահուած է հին նշխարհս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և ցարդ երբեմն արտերու մէջէ կելլէ երկաթեայ հին տատասկներէ 'ի ժամանակէ չարչարանաց Սրբոյն (1)։

Կայ նաև Սեղուհ Ս. Լուսաւորչի վանք և Աւագ վանք, որոց վրայ պիտի գրեմ Քէմախի պատմութեան մէջ։

Կայ նաև 13 աւերակներ վանօրէից, Քրիստափոր, Ս. Աստուածածին Եղնաբեր, Քառասուն Խաչեր, Առաքելոց, Անարծաթ բժիշկ, Ս. Մինաս, Ս. Եղիա և այլն անուամբ, որոց նշանաւորն է Թիլն աւանի վանք, յարեւմուտս քաղաքին 3 մղոնաւ և յեղերս Գայլ գետի և մօտ Եփրատի, ուր 'ի նախնումն կանգնեալ էր պատկեր Աթանասի (Նանէական դիոց)։

Աստ թաղեցան Ս. Արիստակէս և Մեծն Ներսէս, որոց նշխարհ յայտնեցաւ 1275ին և կանգնեցին եկեղեցի կրկին, և եղաւ աթոռ Հայրապետաց (Կաթողիկոսաց) և կոչեցաւ Ջուխտակ Հայրապետ։

(Այժմ է խափան և աւերակ և միմիայն կոյտ մի քարանց, և ոչ ոք ունի ուշադրութիւն մի այսպիսի հընադոյն և նուիրական տեղի)։

Հայրապետ Ս. Լուսաւորչի վանք, համանուն գիւղի մէջ մէկ մղոն հեռու յարեւմուտս քաղաքին, ունի մի փոքր մատուռ շինեալ 561 թուականին, կէս աւերակ և վերջին տարիներս նորոգեալ սակաւ ինչ, ուխտատեղի

---

(1) Այս վանքին եթէ աւելի հոգ տարուի, պարզապէս համար օգտակար կրնայ ըլլալ իր եղակի օդին, ջուրին, և ընդարձակ արտօրէից պատճառաւ։

Հայոց, և եկեղեցի Հայրապետի դիւղի 10-20 տուն Հայ բնակչաց (1)։

Կայ ուրիշ շատ եկեղեցիներու աւերակներ որ ցարդ կերևի, և շատեր ալ հաւասար եղած են հողի, և երբեմն կելլէ խաչքարեր կեդրոնը երկաթ դամով, ինչպէս երեք տարի յառաջ ելաւ քաղաքէն կէս մղոն հեռաւորութեամբ տեղէ մը բազմաթիւ խաչքարեր (2)։

---

(1) Աւանդութեամբ և հին պատմութիւններէ կիմանամք որ, երբ Տիեզերակոն Ս. Յակոբ գամարեցաւ ի Նիկիայ, Լուսաւորիչ ծերացած ըլլալով իր կազմանէ խրկեց Վրթանէս և Արիստակէս Հայրապետները, որոնք Հաւատոց հանդանակը բերին և Լուսաւորուն գտան Ի նոյն գիւղ ներկայ մատրան տեղը, և մատուցին իրեն Հանդանակը որ կարդայ բարձր ձայնիւ (Հաւատամք Ի մի Աստուած) և այլն, և ապա գրիչ ուղելով խաչակընքեց և գրեց. «Իսկ մեք փառաւորեսցուք զ որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով» որ ցարդ Հայոց Եկեղեցին Հանդանակի հետ կընդունի։

Այն պատճառաւ գիւղի անուն կոչեցաւ Հայրապետի, որ Թուրքերէն ալ նոյն է, և նոյն տեղ չինեցաւ եկեղեցի. ազգը շատ ուշադրութիւն և հոգ կընէ այս տեղի վրայ, բայց ինչ ինչ պատճառներ արգելք եղած են ցարդ նորոգելու։

(2) Այս քարերը ելաւ Թուրք երևելիի մը արտի բովէն որ խրկեց յԱռաջնորդարան. և ոմանք լրագրաց գրելով՝ թիւր մեկնութեամբ խաչը թաճ կարուցուեր է. Պողոս Մէարիֆէն հրաման եկաւ և խաչերը վերցնելով տարին կառավարութեան ապարանք, գծեցին վրայի պատկերներուն օրինակը և խրկեցին Պոլիս, և գրեցին ճշդութիւնը. ապա հրաման զալով խաչերը յանձնեցին Առաջնորդարանի որ առարկայ եղաւ պարապ տեղ. խաչերու վրայ բնաւ չը կար գիր կամ թիւ. ոմանք երկաթէ դամ ունենալով կիմացուի թէ մեծ հնութիւն չէ. ինչպէս յայտնի է, երկաթի դամը վերջէն հնարուած էր, որոյ դէմ գրեց

Երբեմն կելլէ տապանաքարեր 3–4–5 դար յառաջ թուականներով, ինչպէս 1883ին մի տապանագիր գտաւ Տ. Եղեկիէլ քահանայ իւր պարտէզէն, որոյ վրայ կար հետևեալ արձանագիրը.

Այս է տապան Հանդստեան Ըռուզոի փաշային դուստր Ս Յովհաննէսեան որ փոխեցաւ 'ի Քրիստոս ՉՁ. (այսինքն Հայոց 906 թուականին). ըսել է 427 տարուան մի հնութիւն. սակայն չեմք գիտեր թէ ի՞նչ ըսել է Ըռուզոի, և ի՞նչ էր անուն օրիորդի որ Ս գրի նման նշան մը դրուած է, որոյ լուծումը կարօտի հնագիտաց. Նոյնպէս դերեզմաններէ կելլէ ԺԵ. ԺԶ. ԺԷ. դարերու տապանագրեր այս ինչ պէյի, կամ փաշայի, բայց անծանօթ է մեզ թէ այս պէյ և փաշա տիտղոսները պաշտօնական տիտղոսներ էին թէ ժողովրդական։ Հնութիւն մի է նաև Եփրատի աւերակ հին կամուրջը և Արշակի կամուրջը որ այժմ չորը մնացած է։ Ի վերջ բան՝ Երզընկայի քաղաք և գիւղերէք մի հնութիւն է ամբողջ, ամեն տեղէ կելլէ սիւնի քարեր և անկիւններ, սափորներ մեծ ու փոքր, իսկ ոսկերոտեաց չափ և սահման անցած է։

Մեծ հնութիւններ կան ինը ժամ հեռու Սատագ գիւղն, ուրկից ելաւ տապանաքար մը մեծ քարէ դերեզմանի մը մէջ որոյ արձանագիրը Լատիներէն էր և մէջը կար պղտիկ չիշով մը աչքի արտասուք քարացած, որ Քրիստոնէութենէ յառաջ կար այս սովորութիւն։

---

Ցունայ Կիա Մանուէլ կայսրը և Սինոդը, որ մերժեց մեր Կիլիկիոյ Հայրապետը։ (Տես Ընդհանրականի մէջ որ գրուած է երկար բացատրութեամբ։)

Նոյն գիւղ կերևի այժմ ապարանքի և խոհանոցի հին աւերակներ և նշաններ, և գիւղացիք կը գտնեն պղնձեայ և այլ դրամներ ցուռական գրերով և պատկերներով։

Այս գիւղէն եղած էր մէկ հին արձան (մեծ գլուխ մը), գտնող Թուրք երզնկայ տանելով կուզէ վաճառել 400 դահեկանի բայց չի ծախուիր։ Կառավարութիւն ի. մանալով կառնէ և կը խրկէ Կարին (որ մեք տեսանք 1874ին 'ի Կարին), կուսակալ Սամիհ փաշա ալ Պոլիս կը խրկէ. գտնող գեղջուկը Պոլիս գալով ստացաւ 25 ոսկի նուէր և հրամանագիր մը, որ կրկին փորելով գտնէ նաև մարմինը (1)։

Երզնկայի պատմութիւնը այսքանիւ այժմ բաւ համարելով, ուրիշ առթիւ պիտի գրեմք սովորութեանց, հին և նոր դեղերու և այլ նիւթերու վրայ։ Անցնիմք մեր ճանրորդութիւնը շարունակել՝ Դերջանէ սկսելով։

---

(1) Հնախոյզներէ ոմանք կրսեն թէ նոյն գլուխը Փարիզ կամ Լոնտոնի մուզահանէն է և իբր թէ ծախուած է 11,000 ոսկիի, բայց ստուգութիւնը չեմք գիտեր։ Մարմինը գեռ գրտնուած չէ. հնագէտներէ ոմանք կը կարծեն Անահիտի արձանը ըլլալ. աւանդութեամբ լսուած է թէ Անահիտի արձանը Երզնկայի Տատասկի վանուց դէմ Գամբոր անուն Քրդարնակ գիւղի մէջ գտնուած կրկնակի բլուրներու մէջ է, որոնք գետնուզի մ'ալ ունին որ խափանուած է. բայց սոյն բլուրներ կը կարծուի ոսկերոտեաց կոյս մը ըլլալ։

# ԳԱՄԱԿ Բ.

## ԴԵՐՋԱՆ ԿԱՄ ԹԷՐՃԱՆ

1863—82

1863ի աշունը մեք անցանք Դերջանէ 'ի Կարին, և սոյն թուականէ վերջ ալ մի քանի անգամներ այցելեցինք անձնական գործերով և երբեմն պաշտօնով, թէև 1853ին մի անգամ անցած էինք 'ի Մուշ Ս. Կարապետ ուխտի երթալով իմ ծնողաց հետ, վերջապէս համարէ թէ շրջած և տեսած եմ մեծ մասը գիւղերուն, որ քաղաք չունի։

Թէրճան անունը աղաւաղեալն է Դերջանի և էր հնումն այս անուն. չեմ գիտեր անունի ստուգաբանութիւնը, և չեմ կարդացեր պատմութիւն մը թէ ե՞րբ և ո՞վ շինեց, բայց քանի որ չունի կեդրոն մը, անշուշտ չունի աւելի տեղեկութիւն քար ղոր կը դրեմք։

Դերջանի արևելքն է Կարին, հարաւն ստորին Կեղի, հիւսիսն Խազտեայ լերինք (Գօր տաղի) և արևմուտն (Պալապան) գիւղօրէք խառն Գուղչանի և Երիզայի։

Կեդրոնն է Մամախաթուն, ուստեք կարծեցին մանան աղիէ աղաւաղեալ, որ Համանուն ջուրն (Թուղլա սուլի) կը հոսէ իր ստէն և կերթայ Կոթեր գիւղի մօտ կը խառնուի Եփրատի Կարնոյ թևին։

Ասա (Մամախաթուն) կայ մի խան հին քարաշէն, մի մզկիթ, մի բաղանիք և մի շիրիմ որք կաղմեն հնութիւնք, յետոյ շինուած է զօրանոց, կրպակներ և այլն. գիւղն է 50 տուն Թուրք բնակչօք, և է 'ի վերայ Կար-

նոյ-Երիզայի ճանբուն, որոց ճիշդ կէսն է և հեռաւոր 16ական ժամու։

Խանին հնութիւնը և չորս սիւները առակ դարձած է (1), բայց որոշ թուական մը տեսած չեմք. շիրիմը (թիւրպէ) շինուած է Սառակինեան ոճով և ունի 12 դերեզման բոլորակաձև կամարներով բաժանեալ, նշմարի աղբիւրի որ այժմ է աւերակ, դուռն զարդարեալ ծաղկենկարիւք։ Ոճէ անընթեռնլի հին գրերով. աւանդութեամբ կըսեն թէ Սելճուդիներէն արքայազուն իշխանուհի մը շիներ է խանը, որ դամբանն է իւր և իւրայնոց (2)։ Մզկիթն է կոթաձև փոքր և կոկիկ, իսկ բաղնիքը հասարակ։

Կառավարութիւնն է գայմէգամութիւն (տեղակալ) ընդ իշխանութեամբ Էրզրումի, ունի երկու ժողով Իւրոքէ և Պէրոյէր անուամբ (վարչական և դատական), քանի մը քարտուղարներ, պաշտօնեայներ, դանձապետ մը և խումբ մը ոստիկան, կառավարութեան շէնքն է հին և անյարմար։

Դերջանի օդը բարեխառն է, բերքն է ցորեն, կըտաւատ, փեթակ, ոչխար և այլն։

Զունի այգի, պարտէզ, և ոչ ալ անպտուղ ծառեր։ Երկրագործութեան համար ընդարձակ և տրամադիր հող, ջուր և ամեն միջոց կայ. ընդունակ է այգիներու

---

(1) Արձանագրութեանց մին կը յայտնէ իրր սիւներու միոյն ներքև ըլլալ գանձ մը. և չորս սիւնի վրայի արձանագրութիւնք ալ կըսեն «պէնտէ տէյիլ օնտա տը», որով առակի կարգ անցած է Մամախաթուն տիրէյի, կամ պէնտէ տէյիլ շունտա տը։

(2) Շատ տեսակ աւանդութիւնք կան Մամախաթունի վրայ։

պտղալից և անպտուղ ծառերու, բամպակի, կանեփի մշակութեան, բայց ժողովուրդը անհոգ, ծոյլ և ագէտ է. ոչ ոք ուշադրութիւն ըրած է այս գաւառին. ռամիկ ժողովուրդը ամառը աշխատելով՝ հանած բերքերը-նին կը լեցուներն քանի մը անխիղճ վաշխառուներու քը-սակ՝ իրենք դարձեալ մնալով աղքատ և ձմեռն ալ պա-բապ։

Նշանաւոր գիւղերէն մին է Բաղառիճ, 'ի հնումն Բաղայառիճ, ուր կանգնեալ էր պատկեր Հերիեստեայ չաստուածոյ, հիւսիսակողմն Մամախաթունի և 3 ժա-մու ճանապարհ 'ի վերայ ճանապարհին Բաբերդի,

ժողովուրդն է իբր 5-600 տուն Թուրք և Հայ։ Գիւղի կեդրոնն է հին բերդը բնական ժայռերու վրայ որ կազմած է մի բլրաձև լեռ։

Ի վերայ բնական բերդի կայ աւերակ շինուածոյ, ունի դեռնուղի (թոնէլ) ճամբայ փախստեան և ջուր հանելու 'ի բերդն։

Ցափարակ քարերու վրայ կայ սեպագիր կամ բե-ւեռագիր 14 հատ, որձաքարերու մէջ փորեալ։

Մէն մի գրի երկարութիւնն է 6-12 ոտք, և լայ-նութիւնն 1էն 4 ոտք, խորութիւնն 1-2 ոտք, որոց օ-րինակը ուղած էր Կարնոյ Առաջնորդ Յարութիւն Ս. Սրբազանիսկոպոս Վեհապետեան (այժմ Պատրիարք), և գծելով խրկեցինք, որ կարծեմ հնագէտ Մօրթման Գեր-մանացին ուղած էր լուծելու համար (1)։

---

(1) Յարդ տեղեկութիւն մը չունիմ թէ այն գրերը լուծ-ուեցա՞ն թէ ոչ. եթէ լուծուեցան, ի՞նչ է, որ աւանդութիւնք կը պատմեն շատ բաներ։

Բերդի ստորոտն և դեռնուղիի բերանն է Ջուրի աղբիւր մը որ կը բղխի, և դեռնուղին աստիճաններով կելէ 'ի բերդ (1)։

Այս գիւղ կը բնակի հռչակաւոր Գալոյ քէհեայի գերդաստանը, որոյ միակ որդին կայ այժմ Մ. Յովհաննէս էֆէնտի (2)։

## ԿՕԹԷՐ ԳԻՒՂ

Ցաճկերէն Քէօթիւր, Եւրոպացիք կոչեն Քուդդուր, նշանաւոր իր համանուն կամուրջին համար, յանուն հին երկրին Կոտերոյ որ էր միջասահման 'ի՛ Հայս Դերջանի և Եկեղեաց, յորում էին 'ի հնումն աւան Սուրբնաչէն և դղեակ Պարթէնից ժառանգութիւն հօրն Ս. Թէոդորոսի նահատակին յաւուրս տքնութեան Լուսաւորչի 'ի վիրապն։

Ս. Թէոդորոսի մենաստանն է Կոտերի և Երիզայի ճամբէն դուրս Ինձորիկ գիւղի մօտ՝ 'ի մէջ ձորի և դըժուարընթաց ճանապարհներով. վանապահութիւնն է ժառանգական կրկին քահանայից՝ խստակրօն հսկայ պարթեւաձեւ, այժմ բաղմանալով բաժանեալ հինգ վեց

---

(1) Թողնէլ չինող Եւրոպացիք իբր նոր գիւտ ըսելու իրաւունք չունին, քանի որ Անի, Դերջան, Քէմախ և այլ չատ տեղեր կան դարաւոր դեռնուղիներ, ինչպէս նաեւ Բագառիճ, Երզնկայ, Հալէպ և այլն։

(2) Այս անձը բաւական յառաջադէմ է, և երբեմն պաշտպան կը կանգնի ժողովուրդի իրաւանց. իսկ իր ծայրայեղ բնութիւնը միշտ կենթարկէ զինքն վնասուց և վտանգի. են 'ի բնէ հիւրասէր և ունին տուն, պարտէզ և երկիր (արտ) և այլն։

տուներու, կապրին երկրագործութեամբ և վանուց ե-
կամուտներով։

Նշանաւոր է Ծաղկարի Ս. Դաւիթ վանքով Եփրա-
տի երեսէն քիչ հեռի, միակ մենաստան Դերջանի, ուր
կայ մեծ խաչ արձանք, շատ գրերով, որք կը յիշատա-
կեն խաչին հրաշքները. (թուական չունին)։

Ուրիշ շատ աւերակներ կան ուխտատեղի կամ
զբօսավայր, ուր յաճախեն ընտանեօք տօն օրերու, կը
պարեն թմբուկներով և փողերով. . .։

Կօթերի կամուրջը որ նշանաւոր է, աւանդութիւնը
կըսէ թէ շինած է Կօթերցի մի Հայ երկրագործ ԺԴ.
դարուն, որոյ քովը կայ հին խանի մի աւերակ և 'ի
բարձունս մի ուխտատեղի (մատուռի մը) աւերակ։

Հնութիւն է նաև Ճիպիճէի հին խանը և կը կար-
ծուի շինուած ըլլալ Սուլթան Մուրատ չորրորդէ որ ու-
նի շատ կողմեր այսպիսի հոյակապ խաներ 'ի վերայ ճա-
նապարհաց (1)։

Դերջանի Ժողովուրդ են Թուրք, Հայ, Քուրդ. այ-
ժըմ բնակութիւն հաստատել սկսած են նաև Պարսիկ-
ներ. Թուրք գիւղեր ունին մզկիթ, նոյնպէս Հայք ե-
կեղեցի, և ընդհանրապէս ջերմեռանդ ու ռամիկ են։

---

(1) Այս խանի դրան վրայ արձանագրութիւն մը կար. խա-
նը պիտի շինէին հրամանաւ կառավարութեան, (որ պարա-
դայք չը ներելով ցարդ կը մնայ աւերակ,) քարը մէկ կողմ առ-
նել տուած էին կարգալ տալու համար. հին գրիչ գրերով
էր. մօտակայ գիւղացի Քուրդեր աւանդութիւնէ լսած ըլլալով
թէ շրջակայ արտեր կը վերաբերի խանին, գիշերային կը կոտ-
բեն նոյն քարը, առաւօտուն տեսանք կոտրած և կտորները
ցրուած որ անկարելի եղաւ կարդալ։

Քուրդերը չունին մշկիթ կամ աղօթատեղի, ոչ ծամ և ոչ աղօթ.ք։ Հաղբէթի Ալին, կըսեն իրենք, մեր ծամը աղօթ.քը ամենքը լինցուցած է, որոց աղանդներու վրայ ունիմք գրելիք։

Դերջանի գաւառը ուշադրութեան շատ արժանի է. հողերը խիստ ածան է և բերրի, ու երկրագործութեան ընդարձակ ասպարէզ. նաւահանգստին մօտ ըլլալով, Կարնոյ և Ցրապիզոնի խճուղիին կրնայ կցուիլ քիչ ծախսով և աշխատութեամբ, և կրնայ օգտակար գաւառ մը ըլլալ Ցէրութեան և ժողովրդեան համար (1)։

Դերջանի երկիրը շատ յարմարութիւն ունի մեղուաբուծութեան, և կրնամ ըսել թէ մինչև իսկ շերամագործութեան։

Քաղցրիկ յոյսեր ունիմ այս Դերջան գաւառի վրայ որ այսուհետև շնորհիւ մեր Օգոստափառ և հպատակասիրեալ Սուլթանի՝ բանիբուն գայմէգամներ և պաշտօնեայներ ընտրուելով, մէկ կողմէ ժողովուրդի կըրթութեան և միւս կողմէ գաւառի բարգաւաճման հոգատարուելով ըլլայ օգտակար երկիր մը։

Այս երկրի յետադիմութեան պատճառները շատ

---

(1) Հոս ալ կը մոռնամ թէ ամեն կարգի հարուստներ, փաշաներ, պէյեր, և հարուստ վաճառականներ հաղարաւոր ոսկիներ կուտան Պօլսոյ մէջ եալէ մը, տուն մը, կամ մաղազա մը կը դնեն, նոյնպէս գաւառաց կեդրոն քաղաքներու մէջ. արդեօք չըլլա՞ր որ երբեմն ալ այս տեղեր դնեն միակ մէկ հազար ոսկիով ամբողջ մի գիւղ հողեր և իրենց շնորհիւ երկիրը բարգաւաճի, ինչպէս Զարսանճաքը, Բասէնը՝, և այլ շատ մը տեղեր անտէրութենէ, և հարուստներ չգտնուելով ենթարկուած են աղքատութեան և զրկողութեան։

է, որոյմէ մին ալ քաղաք մը, կեդրոն մը չըլլալն է, ինչպէս գրեց Հ. Շիւշէճեան։

Երզնկայի և Դերջանի պատմութեան մէջ, նոյնպէս ուրիշ շատ մը քաղաքաց, յաճախ կը յիշուի Եփրատ գետը. ուստի հետեւեալ նամակս կը գրեմ Եփրատի վրայ, որ այնքան կարեւորութիւն ունի աշխարհագրութեան և պատմութեան մէջ։

## ԴԱՄԱԿ Գ.

### ԵՓՐԱՏ ԳԵՏԸ

Այս գետն է եդեմական չորս գետերէն մին կամ գլխաւորը, թէև չորրորդը։ (Տես Աստուածաշունչի Ծընընդոց Գ. գլուխ 10–14 համար)։

Եփրատի երկայնութիւնը բղխումէն մինչ ծովը թափած տեղը հաշուած են նախնիք 1500 մղոն։

Կը բղխի Կարնոյ սահմանին մէջ Ցումլու անուն լեռնէն որ 19 000 ոտք բարձր է ծովու երեսէն, մասն Պին պիր կէօլ կոչուած ակերու, ուր էր եդեմական պարտէզը ըստ պատմութեան։

Սկիզբը կիջնէ Կարնոյ դաշտ, և կոչի Սև Ջուր և կը միանայ Սէրչէմէ անուն գետակի հետ, կրկին ունելով անուն Սև Ջուր՝ կընթանայ դէպ յարևմուտ ի դաշտն Էրզրումի, և ապա դէպ հարաւ 'ի Դերջան, կը միանայ Մանանագի ջուրի հետ որ կոչեն Թուզլա սույի կամ Թէրճան սույի, մօտ Կօյթերի հռչակաւոր կամուրջին։

Հոս (Դերջանի մէջ) անունը կը փոխուի և կըլլայ

Եփրատ. լռիկ մինչիկ կերթայ հարաւային արևմուտք Երզնկայ (1), նոյն ուղղութեամբ ոլոր մոլոր ճանապարհով Քէմախ, Ակն և Կապան մատէն, ուր էր սահման ի հնումն։ Կարինէ մինչ Մատէն կընդունի անթիւ գետակներ, առուներ և առուակներ իր ծոց, ինչպէս Դերջանի և Պալապանի ջուրեր, Զորբերանի, Բաղնիքի, Մէրճանի, Գայլ գետի, Սև ջուրի, Քէօմիւր սու, Գուրուչայ, Գարարունար, Գուրմա և այլ անուն ջուրերը։

Կապան մատէնի մօտ կընկերանայ իր քրոջ հետ որ գայ յահեկէ Մատէնի, որ է ի նախնումն բուն Եփրատ կամ Արածանի (Ցաճկերէն Մուրատ) որ գայ յարևելից Բագրևանդայ։

Կապան մատէնի քովը կամ ոտքը կըլլայ գետ ահեղատեսիլ նման ծովու, ուրկից ճամբորդք կանցնին էլէկներով (2) կամ կէդով (3)։

Հոս հզօրագեալ մեծն Եփրատ իր հպարտութեամբը խիստ ծանր ծանր ընթանալով կերթայ մինչ Պիր (Պիրէճիկ) թաղելով բաղում քարաւաղ կօշկոռ և խոխում։

---

(1) Երզնկայի դաշտին մէջ երկուքի կը բաժնուի, և քաղաքի մօտ կը միանայ որ կըսուի Մեծ և Փոքր Եփրատ, և երկուքի միջավայրը կըլլայ սեպաձև մի կղզեակ ուր կայ նաև 2–3 գիւղեր։

(2) Շատ մը տիկեր իրար կապելով վրան կը չարեն վայտէ ձողեր, ճամբորդք կը նստին անոր վրայ, և քէլէկճիներ կը տանին ի գէմ։

(3) Կէմի կըսեն Պօլսոյ մեծ մավուռներու նման չինուած խիստ անկանոն նաւակներու, որով կանցնին թէ՛ ճամբորդք և թէ՛ իրենց կենդանիք։

կը ձգէ բոլանդակ Միջագետ. Ասորիք կընթանայ Բաբիլոն (Իրաք Արապի) և կը խառնուի Տիգրիսի հետ 'ի հուպ Խուզնայ քաղաքին, ուր կըլլայ (Շատիւլ Արաբ) և յետ սակաւուց կը թափի ի ծոցն Պարսից։

Այսքան է Եփրատի համառօտութիւն, թէև ունի ընդարձակ մանրամասնութիւնք և շատ բանաստեղծութիւն, երգեր և այլն, որոնք գրած են նախնիք և դեռ կը գրեն ներկայ ուսումնականք։

## ՆԱՄԱԿ Գ.

Կարին, 1863 — 1882.

Առաջին անգամ այցելեցինք ի Կարին 1863ին, և ապա 1863էն վերջը շատ տարիներ մնալով մէկ կամ աւելի ամիսներ մինչ 73, և մնացինք շարունակ 4–5 տարի երբեմն բնտանեօք, և վերջի պատերազմի ատեն մեկնելով, կրկին այցելեցինք 1882ին։ Կարինը իմ երկրորդ հայրենիքս է. Կարին շատ այցելած են և երբեմն բնակած մեր հայրը, պապը և նախնիք, նաև Երզնկայի կեդրոնը, որու կապուած է թէ՛ քաղաքական իշխանութեամբ և թէ՛ վաճառականութեամբ։

### ԿԱՐԻՆ, ԷՐԶՐՈՒՄ, ԹԷՈԴՈՒՊՈԼԻՍ

Հայերէն կըսուի Կարին, (ստուգաբանութիւնը չեմ գիտեր), Յունարէն Էրզրում կամ Արզի-ռում (երկիր յունական), Յունարէն Թէոդուպոլիս։ որ նորոդ շինե-

ցաւ Ե. դարուն ի Թէոդոսէ, երբեմն էր մայր քաղաքաց Յունական Հայ բաժնի։

Եղև միշտ քաղաք անուանի, վասն քաղաքական վարչութեան, ամրութեան և շահաստան վաճառուց, այլ և այլ կարևորութեան, որք պատճառ տուին յոլովակի անկանիլ ի ձեռս Յունաց, Պարսից, Ցրաբացւոց, Թուրքաց, Վրացւոց և Թաթարաց։

Երբեմն ամիրայքովս և հարկատու նստան պեսք և Սուլթանք յաւուրս Բագրատունեաց և Ռուբինեանց... և ապա անկաւ 'ի ձեռս Օսմանեան բարեխնամ կայսրութեան. 1828ին ինկաւ 'ի ձեռս Ռուսաց, ուերեցաւ, աւարեցաւ, անչքացաւ, նուաղեցաւ վաճառականութիւն ևբնակիչք։

Կրկին բարգաւաճեցաւ 'ի խնամս Տէրութեան, պահելով իր նախագահութիւն Օսմանեան իշխանութեան։

Նստած են միշտ բարձրաստիճան փաշաներ, որք կոչին ԷՅՈՒԼԷՐԻ ԷՐԶՐՈՒՄ ՎԱԼԻՆ, և ընդ իշխանութեամբ ունէր էեալէթի Զըլտիր, Կարս, Վան, Հէրքիարի, Մուշ, Բաղէշ, Պայազիտ, Երզնկայ, Տէրսիմ և այլ շատ քաղաքներ։

Կարինը սահման է Ռուսաց և Պարսից. միւս կողմերը կը ձևէ Քարբերդի, Սեբաստիոյ, Տիգրանակերտի և Տրապզոնի վիլայէթները։

Էրզրումի շատ անդամ եղած է երկրաշարժ, սակայն վերջի 1858ին երկրաշարժը մեծ եղաւ և բաւական վնաս տուաւ։

Օդն է ցուրտ և ձմեռային։

ԺԶ. դարու առաջին քառորդին սատանեցաւ ուժգին, և ձմեռը երկար տևեց. բնակիչք գաղթեցին

վախան այլ գաւառներ և Էրզրումը մնաց աւերակ մի քանի տարի։

Յետոյ Քուրդ Հաճի Ալի պէյ անուն մի անձ 12,000 մարդով եկաւ բնակեցաւ 'ի Կարին և սկսաւ շինել և նորոգել ինքնագլուխ, և իրեն ընկերացաւ Մէհմէտ խան անուն Քուրդ մը, և ապա տեղեկագրեց առ Բ. Դուռն Կ. Պոլսոյ, որ հրաման տրուեցաւ իրեն կառավարել իբր վալի. քանի մը տարի վերջ Բ. Դուռը իմաստուն խորհրդով մը խրկեց Ֆէրհատ փաշայ անուն աշխարհաշէն վալին Յաճկայ հիճրէթին 934 թուականին, որ խոհեմութեամբ վարուելով Քրդերու հետ, նորոգեց շինեց քաղաքը և շրջակայից բնակեցուց ամեն ազգերէ Օսմանեան հպատակներ, որուն յաջորդելով մինչև յարդ 252 վալիներ, շքեղացուցին մեծ շէնքերով, աղբիւրներով, և ըրին կրկին շահաւաճառ։

1878 փետրուարին կրկին անկաւ 'ի ձեռս Ռուսաց ոչ թէ պատերազմով այլ դաշնակցութեամբ, որք նստելով 7 ամիս պարպեցին գնացին. այս անգամ ժողովուրդը չը գաղթեց կառավարութեան արթուն տնօրէնութեամբ՝ Ղազի Ահմէտ Մուխթար և Մուսա փաշայից ու Յարութիւն Եպիսկոպոսի մասնաւոր ջանքերովն։ Ռուսք հիւանդութենէ ձգեցին բազմաթիւ մեռեալք որոց 'ի յիշատակ շինած են մի կոթող 'ի գերեզմանատան Հայոց։ Շինեցին քանի մը աւերակներ, և լեցնել տուին փոսերը։ Վարուեցան Թուրք ժողովուրդի հետ, և չեղաւ անտեղութիւնք։

1864 ին Սուլթան Ազիզ երկանկայիշատակ Կայսեր ժամանակ եղաւ Կարինը վիլայէթ ըստ նոր Ռեֆէ-ռի, և բաժանեցաւ ութը միութիւնարքիութեան, 48 դայմէ-

գամութեան և չատ միւտիրութեան քաղաքներու։

Անդրանիկ վալին էր՝ Էմին Մուխլիս փաշայ, որ տուաւ Էրզրումի մի նոր կենդանութիւն, ըրաւ այնպիսի ձեռնարկութիւնք՝ որ եթէ ցարդ տեւէին, Կարինը պիտի տեսնէին ուրիշ կերպ. նորա յաջորդեցին Մէհմէտ Բէշիտ, Հաճի Ահմէտ, Իսմայիլ Հաղդը և այլ փաշաներ, և ապա ներկայ կուսակալ արդարասէր Մուսթաֆա փաշայ որ կոչի Ֆոսֆոր։

Մուսթաֆա փաշա էր զօրապետ (ֆէրիդ) և շինեց Կարնոյ, Կարսի և Արտահանի ամրութիւնքը (խթիհ-քեամ) և Տրապզոնի խճուղին, եղաւ միւշիր չորրորդ բանակին որ կը նստէր յԵրզնկայ. 1869ին միւշիւրութիւն և վալիութիւն միանալով եկաւ Էրզրում՝ իւր հետ բերելով բանակի պաշտօնեայք. երբեմն Պոլիս բարձր պաշտօններ վարելէ վերջ, կրկին անգամ եղաւ վալի. միւշիւրութիւնը բաժնուած էր պատերազմի ատեն. միացեալ պաշտօնը վարեց նաեւ 13 ամիսի չափ նշանաւոր Ղազի Ահմէտ Մուխթար փաշայ խոհական զօրապետը և երբեմն Սամիհ փաշայ։

Քաղաքը շինուած է Կարնոյ դաշտին հարաւակողմը լեռներու ստորոտը 3 մղոն հեռի Տէվէ պօյնի կիրճէն և է բարձր 5740 ոտք (1)։

Կարնոյ դաշտը 32 մղոն երկայն է արեւելից 'ի մուտս, և 10 մղոն լայն հիւսիսէ 'ի հարաւ, շրջապատեալ և դրեթէ ամենուստ պարսպեալ լեռներով որք դաշտին

---

(1) Բարձրութիւնք կը չափուին ծովու երեսէն. աշխարհագրութեան մէջ կարեւոր մաս մ'է բարձրութիւնը. հիմա ժամացոյցի նման գործիք մը կայ բարձրութիւնը չափող։

բարձր են մինչև 6000 ոտք. դաշտը՝ որ կոչի օվ, ունի փոքր գետակներ, առուներ, սև ջուր և սերչէմէ որք կընդունի շրջապատ լեռներէ և կը խրկէ յարեւմուտս կաղմել ղեփրատ։ (Տես երես 36։)

Այս ջուրերն ու ակերը (կէօղէ) կը կաղմեն Կարնոյ շրջէջ լճաձև ճահիճները։

Քաղաքի յատակագիծն է զառ 'ի վայր, տեղ տեղ փոքր բլրակներ. ունի առատ աղբիւրներ պաղ և քաղցրահամ ջուրերով որք ունին անուններ, ինչպէս, Թօփ-հանէ, Գրմզի փունար, Ճէննէթի փունարի, Զէթէճի, Իպրահիմ փաշայ. ունի կրկնակի բերդ, Գարագալէ և Ինչ գալէ անուամբ։ Արաբացիք երբեմն կոչէին զԿարին Գալի գալէ բերդին անունովը։ Միայն մինչնաբերդի մէջ կայ հին շինուածքներէն՝ ապարանք, զինարան, դեռնափոր տեղեր (բանտ կամ դանձատուն) և նշանաւոր աշտարակ մի (1) (Թէփսի մինարէ)։

Մինչնաբերդի պարիսպն է հաստատուն քարերով, անկիւնաւոր և աշտարակաձև. 'ի մէջ երկու պարսպայց կոչեն Հիսար պիչէն կամ Պէտէն արասի, որք հետզհետէ կըլլան աննշմարելի. ունի չորս դուռ, Թէպլրիզ դարուսի, Կիւրճի դարուսի, Էրզինճան դարուսի և Եէնի դարու անուններով։ Մեծ պարսպի մէջն էր խոր խրամները, որ այժմ քիչ տեղը մնացած է. նոյնպէս քաղաքէն քիչ հեռի կար խոր խրամատեղիք զորս դոցեցին նոր ամրութիւնք (խմբիհ.քեամ)։

Քաղաքը շինուած է 'ի մէջ պարսպայն և արտա-

---

(1) Այս մինարէթին վրայ կայ եղեր 'ի հնումն արհեստաւոր մի ժամացոյց, որ 1828ին անհետացեր է։

քոյ. ունի բաղում հնութիւնք որոց նշանաւորներն են հետեւեալք. Ուլու ճամի (մեծ մզկիթ) երկայնութիւն 150 և լայնութիւն 120 հարաւակողմն միջնաբերդի, սաքաշէն և լայն որմերով քարուկիր, չորս կարգ կամարներով, 'ի վերայ 28 որմասիւներու։

Գմբէթն կործանեալ, ունի 7 դուռ, ոմանք որմեալ գոց. և այժմ է շտեմարան. արձանագրութիւնք են աւերեալ կամ անընթեռնլի. ոմանք կարծեն 'ի հընուամն լինել դիւանատուն. մերձ է տապանք (կամարեայ) վկայիցն Յովսէփայ և Յահակայ որք նահատակեցան անդ 808 թուականին (1)։

Զիֆթէ մինարէ, 'ի հնուց աղօթատեղի և ուսումնարան, կրկնակի աշտարակներ մեծ դրան քովերը, դոյնդոյն յախճապակեայ, շինեալ 935 թուականին հրամանաւ Մէլիք խան թագաւորին Խալիլ, ինչպէս կրսէ Պարսկերէն լեզուաւ և քուֆի դրերով արձանագիրն. մերձ է Ուլի ճամի մզկիթին և Թէպրիզ դրան։

Լալէ փաշայ ճամիսի, դեղեցկաշէն, շինեալ Ցանկաց 949ին Լալէ Մուսթաֆայ փաշայէ, որ և կոչի Դէմոնէյի Բեկոզլ, համանձև և համաչափ Մէքքէ քաղաքի Բեհապէին (ուխտատեղի) ամբողջ սրբատաշ և կամարաձև երկք դրունս և ընդարձակ գաւիթ և աղբիւր. զարդարուած է յախճապակիով. ունի բաղում արձանագրութիւնք որոց նշանաւորներն են վեց պատուհաններու

---

(1) Հէօվլիկ հէմամի մօտ տան մը մէջ մի աղբիւրի չափ ջուր մը կելլէ. ջերմ ունեցողք կերթան նոյն ջրով կը լոկնան, և ոմանք կը բժշկուին, անուանն է նահատակի աղբիւր. ըստ աւանդութեան նահատակուած ատենին բղխած է այս ջուր։

դլուխ յախճապակի (մինեղի) և ճեղի (զարդարուն) տա-
ռերով գրուածները։

Լաիլահէ իլլալլահ, Մուհամմէտ ըէսուլ ուլլահ
Լաիլահէ իլլալլահ, Իսա ռուհ ուլլահ
Լաիլահէ իլլալլահ, Մուսա քէլիմ ուլլահ
Լաիլահէ իլլալլահ, Ցավուտ խէլիֆէթ ուլլահ
Լաիլահէ իլլալլահ, Իպրահիմ խէլիլ ուլլահ
Լաիլահէ իլլալլահ, Նուհ նէճի ուլլահ

Թարգմանութիւն

Չիք Աստուած բաց յԱստուծոյ միոյ, Մուհամմէտ առաքեալ Աստուծոյ
Չիք Աստուած բաց յԱստուծոյ միոյ, Յիսուս հոգի Աստուծոյ
Չիք Աստուած բաց յԱստուծոյ միոյ, Մովսէս խօսակից Աստուծոյ
Չիք Աստուած բաց յԱստուծոյ միոյ, Դաւիթ ընտրեալ յաջորդ
Չիք Աստուած բաց յԱստուծոյ միոյ, Աբրահամ բարեկամ Աստուծոյ
Չիք Աստուած բաց յԱստուծոյ միոյ, Նոյ փրկեալ յԱստուծոյ

Նշանաւոր են Գուրշունլի ճամի, Ճաֆէրիյէ, Զինիլի մինարէ, Մուրատ փաշայ և այլ մզկիթներ, որոց շատերը ունին Նոյն անուամբ բաղանիս, աղբիւրներ, Ռէ-ր-պէներ, հոյակապ շիրիմներ շատ մը Քէրէներու և այլոց։
Նշանաւոր է Հայոց միակ Ս. Աստուածածին եկե-

ղեցին մեծ և սրբատաշ և վերջի դարուս առաջին քառորդին կրկին շինուած 26 սիւներով. ունի կցեալ մի մատուռ հին որ կոչի տաճար նաև ուխտատեղի բոլոր աղգաց, ընդարձակ դաւիթ և պարտէզ, հոյակապ զանգակատուն (շինեալ 'ի Փաստրմաճեանէ), կիցն է Հայոց ընդարձակ Արքեպիսկոպոսարանը, պատարագիչ քահանայներու սենեակները, եկեղեցւոյն կալուածները՝ շինեալ 'ի ժամանակի Առաջնորդութեան Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեանի, և վարժարանն տղայոց (շինեալ 'ի Մակարեանէ), և աղջկանց ընդարձակ վարժարան (1) շինեալ Հանգանակութեամբ և յատուկ ջանիւք Առաջնորդին և երիցեալաց Հայոց. և պարտէզին կից է ընդարձակ գերեզմանատունն Հայոց ուր և մասն ունին Հռոմէական Հայք և Յոյնք՝ բաժանեալ թաղերով, ճամբաներ զատուած և անպտուղ ծառերով զարդարեցեալ 1880ին. եկեղեցին մեծ է Ասիոյ հայաբնակ դաւառաց բոլոր եկեղեցիներէն, և ունի կրկնակի պահարան, ամպիոն, չքեղ զարդ, զգեստ եկեղեցական և բաւական կալուածներ (2)։

Կայ մի եկեղեցի Հռոմէական Հայոց որք են 120 տուն 'ի քաղաքի, է պայծառ և ճոխ զգեստիւք, Առաջ-

---

(1) Այս վարժարանի շէնքն առժամեայ կերպիւ տրուած է Սանասարեան վարժարանին, և աշակերտուհիք կը յաճախեն աղջկանց հին վարժարանը որ շինեցաւ 1870 ին։

(2) Կարին միակ եկեղեցի մը ըլլալուն է որ շատ եկամուտ ունի. հայաբնակ շատ մը գաւառներ չորս հինգ և աւելի եկեղեցիներու բաժնուած ըլլալուն, զրամները կը վատնուին, և կը մնան առանց եկամուտի։

նորդարան, վարժարան եկամուտներով. նաև Եպիսկոպոս թեմին Էրզրումի, որոյ կրօնական իշխանութիւնն տարածի բոլոր Կարնոյ գաւառները. ունին օրիորդաց վարժարան ևս։

Կայ մի եկեղեցի Ցունաց Ս. Գէորգ անուն, փոքր և պայծառ, 150 տուն Յոյն ժողովուրդ. սոյն եկեղեցի ուխտատեղի է նաև Հայոց. ունին Առաջնորդարան և դպրոց. նաև մեծապօրէս և իշխէ բոլոր գաւառայն Կարնոյ. սոյն նահանգ սակաւաթիւ է Յոյն ժողովուրդ։

Կայ մի եկեղեցի (ժողովարան) Աւետարանական Հայոց նորաշէն. ունին մեծ և փոքր վարժարաններ, դիշերօթիկ ևս. ընդարձակ տուն վան միսիոնարաց. նաև մի երկու միսիոնար, երէց և քարոզիչ։

Կայ մէկ եկեղեցի Լատինաց, թէև չունի յատուկ ժողովուրդ. յաճախեն պաշտօնեայք հիւպատոսարանաց որք վերաբերին Լատինական եկեղեցւոյն, և Հայ Հռոմէականք։ Նաև ֆռէրներ և գաբուչիններ. ունին աղջկանց վարժարան ընդ տեսչութեամբ մայրապետաց։

Կարնոյ կրթական մասը յառաջդիմութիւն ըրած է ներկայ գարուս կէսէն՝ի վեր. Հայք, Հռոմէականք, Բողոքականք, Լատինք և Յոյնք շատ վարժարաններ շինեցին։

Կառավարութիւնն ունեցաւ գլխաւոր երկու վարժարան՝ Իսլամիէ և Բիւշիէ. Թուրքերը ունին այլ և այլ հասարակ վարժարաններ. վերջին երեք տարուան մէջ հոն բացուեցաւ Սանասարեան հռչակաւոր վարժարանը։ Ուսմունքը յառաջ կերթայ տակաւ առ տակաւ (1)։

---

(1) Դպրոցներու վրայ առանձին խօսել մտադիր էինք, այլ

Ազգային եկեղեցական կալուածները բաւական չատ-
ցան և նորոգեցան՝ խնամօք Առաջնորդին(1) և Ժողովոյ։

Նշանաւոր շէնքերն են կրկին տպարանք կառավա-
բութեան, ղօրանոց (դբշլա) կրկին, տպարան, հիւան-
դանոց, արհեստանոց, արքունի վարժարանք, հպատակ
ազգաց Առաջնորդարաններ, վարժարաններ, հիւպատո-
սարաններ, Թուրք և Հայ երևելեաց տուներ, ամենքն
ալ կէս քարուկիր. հին խաներ, բաղնիքներ, և մեծ
տուներ բաղմաթիւ են. նորերու մէջ նշանաւոր է Վա-
հիտ պէյի, Արապղատէի և այլոց տուները, Փասարը-
մաճեանի խանը, բաղնիքը, տունը, ընթերցարանը ու
վաճառանոցները, որ հինգ տարուան միջոցին հին պա-
ռիսպի խրամները շինեց. այս նշանաւոր շէնքերը (2),
նաև Պալլարեանի, Շապանեանի, Մակարեանի, Տէր Ա-
զարեանի և այլ տուներ. նշանաւոր է ժամուն ճաշարանը
և Շապանեանի ընթերցարանը և գործարանը. կրպակ-
ները շինուած է քաղաքին անուղիղ փողոցներու երկա-

---

քանի որ չատ մը տեղեկագիրներ կը հրատարակուին, մեր խոր-
հրդածութիւնք կը վերապահեմք ուրիշ առթի։

(1) Առաջնորդաց մէջ նշանաւոր էր Գրիգորիս հանգուցեալ
Եպիսկոպոսը. 23 տարի ալ օգտակար կերպիւ վարեց սոյն պաշ-
տօն Վեհապետեան Ցարութիւն Ս. Արքեպիսկոպոսը, որոյ ջա-
նից և գործոց վրայ նամակներուս մէջ ունէի երկար գրուածք-
ներ. այժմ վերուցի զանոնք Պատրիարքութեան բարձր ամոռը
նստած ըլլալուն համար։ Պատրիարք Սրբազանէն վերջ 1880ին
Առաջնորդ ընտրուեցաւ Դեր. Մ. Ի. Վ. Օրմանեան, որ այս
տարի ընդունեց Եպիսկոպոսութեան բարձր աստիճանը։

(2) Աւա՜ղ որ ինքը չը կրցաւ վայելել իր աշխատութեանց
պտուղ, որոյ կենսագրութիւնը կայ անտիպ։

բութեան անկանոն և անյարմար. ունի պէտէսթէն քարու-
կիր, և եկեղեցւոյ մաղաղանները և այլ քանի մը անոնց
նմաններն են կանոնաւոր. խաները բաց դաւիթ չունին
ձմրան երկիր ըլլալուն։

Ամեն կերպ արհեստաւոր կայ. նշանաւոր է էհ-
բամը, թուճեղէնը, արծաթեայ և պղնձեայ անօթք ու
կաղմածք, սառաճիէն, և այլն, որ մեծ մասամբ կըս-
պառի թէ՛ Կարին և թէ շրջակայ դաւառս. վաճառա-
կանութիւնն թէև անկեալ է իր նախնի վիճակէն, սա-
կայն դարձեալ է վաճառաշահ քաղաք ճոխագոյն քան
զբաղում շահաստանացն Ասիոյ։ Վաճառքներ կուգան
Կովկասէ, Պարսկաստանէ, Հնդկաստանէ, Կ. Պոլսէ,
Հալէպէ, Եւրոպայէ, և Տաճկաստանի այլ և այլ կող-
մերէ որք վաճառին և սպառին շուտ ընդ փոյթ։

Բերքն է ցորեն, կտաւատ և այլն. չունի այդեստ-
ան կամ պարտէզ՝ առ 'ի ցրտութենէ կլիմայի։

Կառավարութիւնն է կուսակալութիւն. նստի վալի
և ունի մի մի համարակալ, քարտուղար, կեդրոնական
կառավարիչ, և բաղում պաշտօնեայք, տեսուչք, թարգ-
ման, դրագիր, և գունդ մի ոստիկան ընդ տեսչութեամբ
գնդապետի (ալայ պէյի), Նախնական և վերաքննու-
թեան իրաւանց ատեանք և պատժական, վաճառական-
նութեան և վարչական, և մի քննիչ Ատիէի, (սոյն տո-
ղերը գրած ատեաններս սոյն պաշտօն ջնջուեցաւ,) ընդ-
հանուր դատախազ, օգնական, և Պէլէտիէի ժողով(1)։

Անգլիոյ, Գաղղիոյ, Ռուսիոյ, Իտալիոյ և Պարսից

---

(1) Պաշտօնէից իրաւասութեան, ժողովներուն իրաւանց և պարտուց վրայ գրածներ ունիմք։

տէրութեանց կողմէն նստի մի մի հիւպատոսք հանդերձ պարագայիւք։

Մոռցանք գրելու քաղաքէն քիչ հեռաւորութեամբ Ապտիւրրահմանի Ղազի անուն Տաճկաց ուխտատեղին, որոյ մզկիթը նորոգել տուաց Հաճի Իղղէթ փաշայ Երզընկացին. նաև Փաշա քէօշկիւ կոչուած մեծ շատրուանը, պատշգամը, որ այժմ է իբր պարտէզ հասարակաց, շինեալ է Հիճրէթին 1209 թուականին Մատէն էմինի Եուսուֆ փաշայէ կուսակալին Կարնոյ, որ յետոյ եղև Մեծ Եպարքոս։

Թողլով Կարնոյ մանրամասնութիւնը կուզէի գրել հին գերդաստանաց անուններ, բայց Կարնոյ քրիստոնեայք (հին ցեղեր) դաղթած ըլլալով, ներկայն կը կազմէ նոր դաղթականութիւն մը եկեալ հաւաքեալ տարբեր քաղաքներէ. ընտիկներն են Պալլարեան, Փաստրմաճեան, Տ. Ազարեան, Խոսրովեան, Տէօքմէճեան և այլ մի քանի տուներ, որ 1828էն վերջ մնացեալք հաղիւ կըլլային 40 տուն. 'ի վերջոյ հաստատուածներուն նշանաւորներն են Շապանեան, Մակարեան, Եկաւեան, Հանէսեան, Տ. Ներսիսեան, Խարաճեան, Եօրկի, Հէմամճեան, Գունտախճեան, Ճիվանեան, Մրսրրեան, Ֆէրմանեան, Երկանեան, Տիլպէրեան, Նշկեան, Աղաճանեան, Հէքիմեան, և այլ շատ վաճառականք, ազատ արհեստաւորք, և հասարակ արհեստաւորներ. կղերական դասուն մէջ նշանաւոր է Կարապետ վարդապետ, Տէր Գրիգոր Աբծրունի, և դասատուաց ծերագոյնը Կարապետ վարժապետ, և պատմագէտ Պօղոս վարժապետ, և այլ տաղանդաւոր անձինք։

Թուրք ժողովուրդի մէջ կայ նշանաւոր և հանճարի

տէր անձինք, որք թէ՛ 'ի հնումն և թէ՛ ներկայս կը վարեն Տէրութեան կարևոր պաշտօններ։

Քիչ մ՚ալ գիւղերը շրջելով լմնցուներնք Էրզիւրիւմի պատմութիւնը։

Կարնոյ դաշտին և լերանց սահմանը սիռեալ կայ 150ի չափ գիւղեր. գլխաւորք են՝ Իլիճէ կամ Կլիճայ, հեռի 9 մղոնաւ յարևմուտս քաղաքին 'ի վերայ մեծ խճուղւոյն Տրապզոնի, մերձ 'ի շամբն կարնոյ. ունի երկու ջերմ աղբիւր բաղանիս (իլիճէ) որք յիշին Ե. դարէն. յաճախեն ժողովուրդք սկսեալ մայիսէ ցվերջն սեպտեմբերի. սոյն բաղանիք օգտակար են յօդացաւի և այլ հոլային հիւանդութեանց. գիւղն բնակիչք են 60 տուն Թուրք և Հայ որք ունին մի դպրոց և եկեղեցի. սրճարանք (ախոռք ջորեպանաց) շատ են, և է կայան բոլոր կարաւանաց Պարսից և Տրապզոնի։

Մուտուրկայ գիւղ, առ որով վանք Մուտուրկայ յանուն Ս. Լուսաւորչի, ստորոտս լեռան Տէվէ պոյնի, կէս աւերակ և անբարեկարգ նման այլ բաղում վանուց Հայոց։

Հինձ կամ Հնձուց գիւղ, 30 տուն Հայ Հռոմէական, ունի մի մատուռ կամ ուխտատեղի յանուն Յովհաննու Կոզրան. մերձ է Կարմիր վանքն, հիմնարկեալ Մեծին Ներսէսէ յանուն Ցիրամօր. վանուց մօտ 'ի ձորամէջի կան քարայրք Հռիփսիմեանց (աւանդութիւն մը կայ թէ՝ Ս. Լուսաւորիչ երբոյ մէջ կը տեսնէ զՍուրբ Աստուածածինն կարմիր դգեստով, յորմէ կը սուի Կարմիր վանք։)

Գրզբլ քիլիսէ և Ծաղկի գիւղ, յարևելեան հիւսիսակողմն քաղաքին, ստորոտ Ցումլու լերին։

Սերչեմէ կամ Սարչամ, առ Համանուն լերան, և վտակաւ։ (Տես Եփրատ գետ, երես 36։)

Ստորոտս լերանց կայ Խաչկավանք, ուխտատեղի և խաչափայտ, աւաղան խիստ ցուրտ ջրոյ, ուր թագուցեալ խաչափայտն (ըստ աւանդութեան) 'ի դարձուցեալ զնա Կ. Պոլիս ձեռամբ Հերակլեայ կայսեր, ուրիշց բազխեցաւ ներկայ ջուրն։ Արծամի կամ արծիի ունի ջերմուկ. բազմամարդ էր նախնում որ գաղթեցին Ռուսիա 1828 ին։

Քարուր կամ Քարոր, ուր կայ անուանի քարայրք(1)։

Գարարդ, Վաղաւեր, Ղուշճի կամ Ցուշճի առ Սև Ջրով. 'ի հնումն էր շահաստան քաղաք մեծ. անդ կոտորեցին Սելճուկեանք առաւել քան ղչորեքտասան բիւր մարդիկ և ազատեցին 1049 ին.

Գաղատաւիճ կրկնակի (մեծ և փոքր), հնումն խաղտայ առիճ, ուր արգելաւ պահ մի Գեռատարձ Պետրոս Կաթողիկոս, հրամանաւ Վասիլ կայսեր։

Սօվուղ ջերմուկ, ունի պաղ աղբիւր բաղանեաց և է օգտակար մարթային հիւանդութեանց և ջերմի։

Կան (Բեան), Կէղ, Զիթիլիք, Ըղտաձոր, Զիթավուղ և այլ գիւղս բազումս, որոց չէ հարկ յիշել մի ըստ միոջէ։

Գեղջական ժողովուրդն է երկրագործ, որ մշակեն ընդարձակ հողեր հին դրութեամբ. ոչ մի գիւղի մէջ չը

---

(1) Այս քարայրներն են իբր մենարան Ֆէրհատ և Շիրին կոչեցեալ սիրելեացն, որ վիպասանք հիւսած են մի տեսարակ 'ի վերայ ամոլացն, է հետաքրքրական։

կայ այդի կամ պարտէզ. տեղ տեղ կը գործածեն գոթան և կէս գոթան (1)։

Գիւղացիք երկրագործութիւնն կիմանան միայն ցորեն և գարի ցանել, իրենց և կենդանեաց ուտելիքը ղատել և աւելին պարտքերնուն տալ. բնաւ չեն գիտեր նոր բան մը հնարել, ձմրան աշխատութիւն մը մտածել կամ մեծ ուսմանց հետևիլ. հարիւրէն տասը միայն կարդալ գիտէ, այն ալ հասարակ կարդալ, եկեղեցական առացմունքներ և Շարականներ և այլն։

Կարնոյ և Հանուր Հայաբնակ գաւառաց գիւղացի խեղճերը քրտինքով կաշխատին և բնաւ բանի մը տէր եղած չեն. վաստկածնին կառնեն վաշխառուք. և երբ գիւղացիք ընեն մի քիչ տրտունջ, կը պատասխանէ «ա՛յ ախպէր, չե՞ս գիտեր որ Ս. Գիրք կըսէ թէ քրտամբ երեսաց քոց կերիցես զսև հաց (2). հաց կուտես, ջուր կը խմես, հանգիստ կը քնանաս, ալ ի՞նչ կուզես». և գեղջուկն ալ «այո՛ ախպէր ատանկ է, փառք Աստուծոյ» ըսելով կուտայ իրեն ցորենը և այլ ունեցածը փոխարէն վաշխի։

Հոս բնաւ չեն գիտեր և չեն ուզեր գիտնալ ծառանկել, նոր պտուղ կամ բոյսեր հասցնել, մեղու շատցունել, պանիր շինել և այլն. գիւղացիք ամեն տեղ մի և նոյն գիրքն ունին, բայց տեղիս տեղիս մեծ տարբեր-

---

(1) Գոթան է արտ վարելու գործիք, որ 12 զոյգ եղնեբով կամ գոմէշներով կը քաշեն, իսկ կէսը 6 զոյգով, որ նոյ նահապետի ատենէ մնացած է։

(2) Այս պատգամը այժմ կը վերաբերի միայն գիւղացիներու. . . . . .

բութիւնք կերևի. Քարբերդի և Երիզայի գիւղացիք աւելի յառաջ կերթան Կարնոյ, Բասէնի և Դերջանի գիւղացիներէն. իսկ Տրապիզոնի և այլ կողմերու գիւղացիք կը գերազանցեն Երզնկայ, Քարբերդ և շատ տեղերի գիւղացիք։

Ասիոյ շատ գիւղերը բարեկարգութեան կարօտ է. այս բարի ժողովուրդը, որոնցմէ կը շատնայ քաղաքաց ժողովուրդը, կաճին կենդանիք, և կարտադրեն անչափ բոյսեր և բերքեր. մէկ խօսքով քաղաքներ կապրին գիւղերով, և չեն սիրեր գիւղացիքը. իրենց շահը գիւղացուցմէ կախեալ է, և չեն ջանար յառաջ տանիլ զգիւղացիս. վերջապէս մեծ կարօտութիւն ունին խրատու, օրինակի, ընկերութեան, վարժարանի, և այլ շատ բաներու, ինչպէս, երկրագործական նոր գործիքներու, մեքենայներու և մանաւանդ հարուստ հողատէրերու (1)։

(1) Թէև մեք չենք պահանջեր որ գիւղերն ունենան բարձր վարժարաններ և ուսումնարաններ, բայց գոնէ սորվին ապրելու միջոցները, ճանչնան պարտք և իրաւունք, սորվին առողջարանական կանոնները, սորվին երկրագործութեան վերաբերեալները, ինքզինքնին ճանչնան, և գիտնան թէ ի՞նչ է Աստուած, և ի՞նչպէս պէտք է պաշտել, ի՞նչ է Ս. Աւետարանը, ի՞նչ է եկեղեցին, ի՞նչ է քահանան և ի՞նչ է ժողովուրդը, որ այժմ մեծաւ մասամբ չեն գիտեր, և քահանայք չեն սորվեցներ, կամ չեն ուզեր սորվեցնել, կամ չեն գիտեր որ սորվեցնեն. վերջապէս ամեն տեղ խեղճ ժողովուրդը գործիք եղած է ագէտ կղերին, քէհեային, այս և այն վաշխառուին . . . և չը կրնար վայելել Աստուծոյ շնորհքը որ Աւետարանով պարգևեալ է մարդկանց, և ոչ ալ բարեխնամ Տէրութեան շնորհքը որ արդար օրէնքներով շնորհեալ է հպատակաց . . . որքան տաղանդաւոր, ճարտար և ուշիմ անձինք կը գտնուին գիւղեր և այնպէս կը կորսուին առանց օգտակար ըլլալու։

Գիւղերու կրթութեան մասը տխուր է, ոչ թէ միայն կարնոյ գիւղեր, այլ համարէ թէ Ասիոյ գիւղերի մեծ մասը զուրկ է լոյսէ, և չունին վարժարաններ(1)։

Ահաւասիկ հոս կաւարտեմք Էրզրումի տեղեկագիրը, որ դեռ ևս ունիմք շատ բան գրելու. և սոսկալի կը թողուցմք ուրիշ շատ մը տեղեկութեանց հետ պատեհ ժամանակի։ Հիմայ ընթերցողը պիտի տանիմք Կարին՝ Բասէն, Կարս, Շիրակ, Անի, Կիւմրի, Էջմիածին, Երևան, և անտի կրկին վերադարձնելով։ Ոչ նուազ հետաքրքրական տեղեկութիւնք դրած եմք վերջի պատերազմին վրայ, բայց թէ երկար և թէ ժամանակն անյարմար ըլլալով, յետաձգեցինք։

---

(1) Գիւղային ծրագիր անունով չնած եմ մի կանոնագիր և ցարդ շատ տեղեր փորձ ըրած եմ ընդունել տալ և չեմ յաջողած, որովհետև ժողովուրդը իր կամքով ինաւ չուզեր նոր բան մը, նոր բերք մը ցանել կամ հնարել. ուստի պէտք կըլլայ Կառավարութեան միջամտութիւնը, հարուստներու հոգատարութիւնը, և հանրութեան ուշադրութիւնը, քանզի Օսմանեան երկրի բոլոր ոյժը երկրագործութեան մէջ պիտի փնտռենք. և մեծ հարստութիւնը երկրագործութենէ կրնայ գոյանալ։

# ԵԱՄԱԿ Ե.

## ԵՐԵՒԱՆ

1868 Հոկտեմբեր.

1868 ի աշունը Երիզայէն մեկնեցանք շատ ընկերներով և գնացինք Ս. Էջմիածին՝ Միւռոնի օրհնութեան հանդէսը վայելելու, որ կատարեց Գէորգ Դ. Կաթողիկոսը՝ նոր ընտրուած տարին. Երևանը Էջմիածնից հեռի է միայն 4 ժամ. ուխտաւորք մեծ մասամբ այցելում են նաև Երևանը. և մեք հետևելով այլոց, Երևան երթալով շրջեցանք երկու երեք օր, ուր քաղեցինք մեր տեղեկութիւնք։

Երևան նշանաւոր էր 'ի հնումն, որպէս և այժմ։ Երևանի շուրջն է դաշտ Վաղարշապատի, լերինք Գեղամայ, Շարուր դաւառ, Հրազդան գետն (Զէնկի չայ) և Գըրգ պուլադ։

Երևան աւան էր 'ի հնումն. շինողն է անյայտ։ Երևան Ը. դարէն վերջ անկաւ 'ի ձեռս Հաղարացւոց, Պարսից, Օսմանցոց, և կրկին Պարսից, ուր իշխէր մի բարբարոս իշխան Սէրտար Հասան խան, ինչպէս նաեւ կիշխէ։ Էջմիածնի և շրջակայից. հակառակ հրամանացն Պարսից Շահերու և միջամտութեան Օսմանեան կայսերայ (1) և Ռուսաց, Սէրտար և ենթակայք գործէին

(1) Օսմանեան կայսրներէ և փաշաներէ շատ ֆէրմաններ և հրամաններ գրեալ են 'ի պաշտպանութիւն Էջմիածնի և Հայոց, նոյնպէս Ռուսից կառավարութենէն, Վրացւոցմէ, որոնց շատերը պահուած կան ցարդ 'ի Ս. Էջմիածին։

անլուր բարբարոսութիւնք, որոյ անշուշտ պիտի յաջողէր անկումն։

1827ին Ռուսք գրաւեցին զԵրևան և ընդ նմին Էջմիածինը, Շագի, Նախջուան և այլ շատ քաղաքներով, ձեռամբ Պասգևիչ զօրապետին (որ կոչեցաւ Երևանսքի), և աջակցութեամբ Ներսէս Եպիսկոպոսի (յետոյ Կաթողիկոս Աշտարակեցի)։ 1841ին Երևանը եղև կուսակալութիւն (կուվեռնաթէօռ) որոյ իշխանութեան ենթարկեալ է Կիւմրի, Սարտարապատ, Ապարաններ և այլ շատ քաղաքներ։

Երևան ունի մի հին բերդ հողաշէն, որոյ մէջն է նշանաւոր Սէրտարի պաղը (պարտէղ), ապարանքը, յախճապակեայ պատշգամը և ջուրի աւազանը (1)։

Ռուսք նորոգեցին ամրոցը, շինեցին դեռի կամուրջը, կառավարութեան ապարանք, դպրոցներ, առևտրական հրապարակ, հասարակաց պարտէզ և այլն։

Քաղաքի շէնքերու ամբողջութիւն է աղիւսէ և հողէ, շուկան խիստ կանոնաւոր և աղիւսեայ կամարով, և դուրսի ծայրերը խաներ շինուած է որ կոչում են Քէրվան սարայ։

Երևանի արտաքին տեսարան գծուծ, օդը անառողջ, ձմեռը ցուրտ և ամառը տաք և ջերմուտ է,

Բնակիչք հաշուում են 4000 տուն, կէսը Պարսիկ,

---

(1) Ասոնց և Երևանի այլ տեղերի վրայ «ՀԱՅՔՆԵՐ յօրինած են շատ տեսակ խաղեր, երգեր, Թուրքերէն, Հայերէն և Պարսկերէն, որոյ ժողովուրդ արդէն սիրահարած է երգելու մանաւանդ Պարսիկներ։ Երևան նշանաւոր է պոյեմնի անուն երգերը։

երեք ութերորդը Հայ, և մէկ ութերորդն ալ խառն Ռուս, Վրացի, Թաթար, և այլն։

Նոր թաղը, որ վերաբերում է Հայ դաղթականաց, ունի մի հին եկեղեցի և մի մատուռ, ստորերկրեայ շիրիմ Անանիա Առաքելոյն։

Նշանաւոր է Հայոց Ս. Սարգիս եկեղեցին իր պարտէզներով և դպրոցներով. ունի սենեակներ Էջմիածինէ Երևան այցելող ուխտաւորաց համար. կայ նաև ուրիշ եկեղեցիներ ալ։

Արքունի վարժարանը բարձրագոյն է, ուր կը յաճախեն Հայ և Պարսիկ Երևանցի աղէք (1) և շրջակայ գաւառներէ դալողներ, որք քիչ կուգան օդի դէշութեան համար. նոյնպէս բարձրագոյն է հայ օրիորդաց վարժարան, որ շրջակայ գաւառներէ ալ կը խրկեն աշակերտուհի. օդը կոգնէ անոնց (2)։

Կառավարութեան ապարանքը մծատ է հրապարակին և որոյ առջևն է հասարակաց ընդարձակ պարտէզ, որ ունի ջուրի աղբիւր (չատրուան) և է բաց ժողովուրդի։

Քաղաքի հին փողոցներ նեղ՝ և նորեր կանոնաւոր է. տուներ ունին ընդհանրապէս դեղեցիկ պարտէզներ. սիրահար են ծաղկանց ամեն տեսակին։

Ժողովուրդն է վաճառական, արհեստաւոր՝ այդե-

---

(1) Ռուսահայոց լեզուն կերպ մը քաղցրութիւն ներշնչելուն, տեղ տեղ հետևած էինք նոյն ոճի, այժմ կը պահենք անփոփոխ։

(2) Երևանի օդը իր ՀՕասակարութեամբ շատ առողջարար է իգական սեռի համար, ուր կանայք և օրիորդք միշտ առոյգ և դեղեցիկ են ընդհանրապէս։

գործ՝ մեծագոյն մասամբ Հայք. վասն զի հոս կարող չէ ըլլալ Հայ մը հացագործ, նպարավաճառ և այլն, որովհետև Պարսիկք չեն դներ այն ուտելիքը որուն դպած ըլլայ Հայու ձեռք. նոյնպէս իրենց (Պարսիկներու) ծախած ուտելիքի վրայ պէտք չէ դպիլ Հայու ձեռք. եթէ դպի, կըլլայ անսուրբ և ապրը մեղանչող։

Այս սովորութիւն անցած է կրօնական արարողութեան կարգ որ ցարդ չի միջամտեր Ռուս կառավարութիւն կրօնից աղատութեան տեսակէտով (1)։

Ժողովուրդի ապրուստ աղէկ է երկրին առատ բերքերովը. շերամ, բրինձ, բամպակ և պաղենի բաղում. կայ նշանաւոր այգիներ և պարտէզներ։

Հայոց նշանաւորն է Ղէհրիման աղէն (2), Ղահրիմանեան հին գերդաստանէն և ազգական Վրաստանի վերջին թագաւորին։ Ղահրիման աղան (3) է խոհուն, հիւրասէր, բարեսիրտ և ազնուական մի մարդ 60 տարեկան, լաւ կազմուածքով. ունի բաղում հող, կալ-

---

(1) Այս նախապաշարումը կայ նաև Պարսկաստանի Շէյ կոչուած ցեղին մէջ և է վազեմի. աւանդութիւնը կըսէ. Պարսիկք խիստ նեղէին զՀայս. Շահը ուզելով արդիլել, ախոռնի (կղեր) մը ձեռամբ հրատարակեց թէ, «Հայու հաց ուտողը, Հայու ծախած ուտողը կըլլայ մեղապարտ». այն առեն մեծ օգուտ քաղած են Հայք այս ծէսէն, այժմ ալ կը տուժեն։

(2) Ռուսահայք աղէ կըսեն աղայի տեղ և երբեմն պարոն. էֆէնտի ածականը չեն գործածուր։

(3) Մեք տեսակցեցանք անձամբ, որ պատուեց, և հետաքրքրութեամբ հարցուց Օսմանեան երկրի սովորութեանց և Հայերի վրայ շատ բաներ. ունէր հրապուրիչ խօսուածք և պատկառելի դիրք։

ուած, խան, բաղնիք, կրպակներ և այգիներ, մեծաշէն տուն և պարտէզ. ունի կրկնակի թոչակ կառավարութենէ, մին մեր կողմէ որ ազգական է Վրայ թագաւորին, միւսն իւր պաշտօնին համար. է միրավայ սուտ (նախագահ առևտրական տեղին), կը վճռէ նախնական դատեր Երևանի, և կը վերաքննէ գաւառներէ գալած վճռագրեր (իլամներ).

Պարսիկների մէջ կայ նշանաւոր անձինք. անշուշտ չէք զարմանար եթէ լսէք որ կայ նաև մէկ Քուրդ ճաֆէր ագայ անուն, բոյդովնիկ (միրալայ) և ցեղապետ Զիլանցի «ՇԸՐԷՐԻՆ» որք են 3000 տուն այն կողմեր.

Պատկառելի է յաչս պաշտօնէից և ժողովրդեան. ինքն է յաղթանդամ և զգեստն է շալէ չէոյէն. բրթական և ուսերու վրայ ունի «ՔԷԼՄ». 63 տարեկան ճարտարախօս իշխանապէտ, կը սիրէ և կը յարգէ Օսմանցիները (1). կայ Պարսիկ զօրապետներ.

Նաև կայ նշանաւոր վաճառականներ և ուսեալ վարժապետներ, արհեստաւորներ, մէկ երկու ուսեալ քահանայ. Ժողովուրդի սովորութիւնք մեծ մասամբ է պարսկական, թէև մեր է ռուսական և հայկական սովորութիւնք.

---

(1) Մեզ հանդիպեցաւ 'ի ճանապարհի, հետաքրքրութեամբ դիտել մերջ ձիով մօտեցաւ մեզ հարցնելով «ՔՂՕՍՄԱՆԼՈ՞» մի «ԸՂ» և երբ ստացաւ պատասխան, ձիէն իջնելով շատ յարգանօք խօսեցաւ, և խնդրեց երթալ Երևան իրեն տուն հիւր ըլլալ. տունն էր ընդարձակ կրկնակի պարտէզներով. զմեզ պատուեց չափազանց և ուրախ եղաւ Օսմանցի հիւր մը ունենալուն համար. միշտ կը պատմէր հին եղելութիւնք.

Քաղաքի հիւսիսակողմը (ի Կոնդ թաղ) կայ մի բլուր Կոզէռ անուամբ, մասուռն և տապան Յովհաննու Կոզռան (1) և տապան Մովսէս Կաթողիկոսի՝ նորոգողին Էջմիածնի, և այլ գերեզմանք Հայոց։

Ունի ընդարձակ և բազմամարդ գիւղեր. բերքերն են խիստ առատ. բրինձը կը դիզեն 'ի հրապարակ և ծախում են Խելֆեր ըսուած չափով՝ իրր 400 քաշ որ մի հարիւրորդի կըսեն դրնան իրր 4 օխայ մեր ողջ դրամով 60 փարայ։ Բրինձը(2), բամպակը և խաղողը ամենառատ և աժան են անհաւատալի գիներով. այս տարի (1868) Էջմիածին 30,000 մարդոց բաղմութիւն ըլլալով դարձեալ մէկ օխայ խաղողը 10 փարայ էր (իրենց դրամով) որ ըսել է 6 փարայ, կամ ուրիշ տարիներ մինչև 3 օխան 10 փարայ։ Խաղողը շատ ընտիր է և ունի շատ տեսակներ, ինչպէս անկուտ խաղող որ կուտ չունի (բիշմիշ իւղիւմիւ). նոյնպէս սեխ, խնձոր և այլ պտուղներ առատ և աժան են. խաղողի առատութեանը համար ժողովուրդը կըսէ թէ՝ Նոյ նահապետի և որդւոց անկած որթերուն և սուսերուն մնացորդը ըլլալուն է (3)։

Ցեռանք թէև մի քանի գիւղեր, այլ ես ցանկանում էի տեսնել զՄասիս աւելի մօտէն, Գեղարդի և այլ նուի-

---

(1) Զմռռնանք Կարնոյ Արծրթի գիւղի սոյն անուամբ եղած տապանը։

(2) Բրինձի արտեր միշտ ջուրի մէջ ըլլալով կը նմանի լիճերու, յորմէ կապականի օդ, եւ գոյանայ մալարիոնաւոր մընձըղ (սիվրի սինէկ)։

(3) Մասիս լեռը մօտ է Երեւանի, եւ ամեն կողմէն կերեւի։

բական վանքեր, և Գառնի՝ որ կոչի Թաղա Տրդատայ, թէև աւերակ է այժմ բոլորովին, բայց ի՞նչ քաղցր կը նկարագրէ Հ. Ղևոնդ Ալիշան՝ ի մէջ բերելով Խորենացւոյն հետևեալ հատուած։

«Որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և «կապարով մածուցեալ, յորում չինեալ և տուն հո«վանոց, մեհարձանօք, սքանչելի դրօշուածովք բարձր «քանդակաւ՝ ի համար քեռ իւրոյ Խոսրոփիդխտայ և «դրեալ՝ ի նմա զ յիշատակ իւր հելլենացի գրով»։

Երևանի վրայ այսքան մը գրելէ վերջ կը բաժնուինք, բայց ի՞նչ տխրութեամբ, ընթերցողը չը կրնար զգալ մինչև որ չի այցելէ. որ կողմէն նայիս այն խարտիդաւոր լեռը աչքիդ առջև է, որոյ բոլորաշուրջն է վանքեր, աւաններ, դիւղեր, նուիրական վայրեր, նախնի յիշատակներ Քրիստոսէ 3000 տարիներ յառաջ. ի՞նչպէս բաժնուիմ, ի՞նչպէս լռեմ առանց տեսնելու, առանց բան մը գրելու. և որովհետև մարդիկ միշտ չեն կրնար լրացնել իրենց փափաք, մերն ալ կը մնայ կիսատ, ճանապարհների երկիւղալի լաբերուն և ընկեր չը գտնելուս համար. եթէ գտնէի ալ, ի՞նչ կրնայի գրել. ասոնց նկարագրութիւնն հատորներու կարօտ է, և բանասեղծներու, պատմագէտներու և հնագէտներու։

Վերջապէս տեսնելով որ չը պիտի կրնամք՝ ի մօտոյ տեսնել այն Նոյեան աշխարհահռչակ լեռը, նստանք Բարձր թաղի Մարտիկ աղի այգին՝ հանդէպ Մասիսի, նստանք այն հինաւուրց խնձորենիի շուք, զուարճալի և տխրաւետիլ. մի կողմէ ճաշեցինք Նոյեան տունկերու

անոյշ խաղողներ, 3000 տարի վերջ(1). միւս կողմէ ալ օրինակեցինք հետեւեալ գողարիկ կտորը Հ. Ալիշանեանի թանկագին գիրքէն, որ կը նկարագրէ զՄասիսն և զբժբաղդ Ա՛ռ՝՝՝ռ՝՝՝ն։

«Ի հարաւակողմն արեւելից գաւառին Սուրմաւոյ, միջասահման բաժնի երիցն ինքնակալութեանց՝ ընդ որս այժմ բաժանեալ է աշխարհս Հայոց, ամբառնան յաւերժական արձանք երկրի տիեզերահռչակ ԼԵՐԻՆԲ Ա-ՐԱՐԱՏԱՑ, յանուն մեծի դաշտին (յորոյ հարաւակողմանն կան), և զլեռաւորի աշխարհաց կամ նահանգաց երկրիս Հայոց՝ Ա.յրարատայ, և սա յանուն Արայի Գեղեցկի, ըստ հնապատում աւանդութեանց ազգիս. յիշեն և Ս. Գիրք զլերինս Արարատայ 'ի սկզբան անդ պատմութեան աշխարհի, 'ի ձեռն Մովսէսի մարգարէի, որ չորիւք և եթ դարուք յետ Արայի կացելոյ. և 'ի նոսին վկայեն զնիստ տապանին։

«Բնիկ անուն լերանցս՝ առ տեղացիսն պահի առ Հայս, ՄԱՍԻՒ կոչեցեալ և Լերինք Մ՝՝՝ռ՝՝՝ոց, և յաճախ ևս Մ՝՝՝ռ՝՝՝ զբարձրագոյն կատարն իմանալով. և զայս՝ յանուն Սմասիա նահապետի նախահաւուն Արայի առեն կոչեցեալ. (որ և շինեաց յարևմտից հիւսիսոյ լերինն զՓ՝՝՝ռ՝՝՝ռ՝՝՝ և զՅ՝՝՝ռ՝՝՝ լեանս), և կամ Մար-

---

(1) Այսպէս կանցնին հազարաւոր տարիներ եւ յիշատակը աշխատասիրաց կը մնան անմահ, (Տես Ֆաթիհ Սուլթանի չինարներն). Նոյնպէս գրաւոր յիշատակներ, բարեգործական եւ նուիրական շինքերու հեղինակներ՝ օրհնութեամբ կը յիշուին հազարաւոր տարիներէ վերջ։

սակայ ընդոծնի Աբրահամու հատուածելոյ յիսահակայ 'ի Հայս, ըստ այլոյ պատմչի։

«Կոչի և այլ պէս պէս մակադրական անուամբք, Աշոտ, Աւոտ, Թուոտ, Մրէն, Սեռ-լեռն և 'ի ռամկայ Մուշեռոհ, լեռն Նոյէ 'ի Պարսից, և Աշոտ կամ Սհոտ տոշ 'ի Թուրքաց։

«Անուանի 'ի սկզբանցն և այսր, վասն տապանին 'ի նմա հանգստեան, և երկրորդ խանձարուրք մարդկութեանս լինելով, յոր սակս և արդարապէս կարգի ընդ արքաղաքն տեղիս. և ուխտադնացութեամբ պատուեալ է անդստին 'ի վաղ ժամանակաց հեթանոսութեան և 'ի դարս քրիստոնէութեան։

«Եւ բաղում առասպելս և զրոյցս յօդեալ է զնմանէ վիպասանիցն Հայոց դիցապաշտից. նշանաւոր է և վասն բարձրութեանն, զի յետ Կովկասեանն Էլպուրզա առաջին է բարձրութեամբ 'ի լերինս արևմտեան Ասիոյ, ունելով յերեսաց սեաւ ծովու 'ի վեր 16254' և ևս առաւել վասն բարձրադիտակ կերպարանացն շեղջաձև ամբարձմամբն, որպէս յարևմտեան Հարաւային կողմանց՝ յերեսաց դաշտին Երասխայ վերամբառնայ ոտս ոչ պակաս քան զ13,500, ահեղ լեռն և դերահրաշ տեսլեամբ, զոր գրեա թէ չիք այլ ուրեք տեսանել, ոչ 'ի Կովկաս և ոչ 'ի հսկայսն երկրի 'ի լերինս Հնդկայ և Անդեայց Ամերիկոյ. այսպէս և ըստ հեռուստ վայրաց ի տես գալոյ՝ ըստ ոմանց գրեա թէ զամենեքումբ գլէ, հաւասարելով յայսմ ծայրագունին լերանց Հիմալայայ, նշմարեալ յափանց Կաղբիականին 'ի բացէ 200 և աւելի մղոնաց։

«Երրորդ անգամ, զարմանալի և բնութեամբն, այ-

սինքն է կաղմուածոցն, դոլով միասանի որձաքար պորփիւր ցցուեալ յերկրի, և հրաբուխ ահաւոր շիջեալ ի հազարաց ամաց, այլ ոչ խսպառ դադարեալ. հիւսիսային ստորոտքն երկայնեալ տարածին 'ի դաշտն Երասխայ, խորոփեօք և քարակարկառ կոհակօք, արեւելակողմն խճախառն և աւազուտ, ըստ հարաւոյ կուսէ անձուկ լեռնադաշտակաւ կցեալ ընդ այլում լերին որ Փոքր Մասիս կոչի, և երրորդ է բարձրութեամբ 'ի չափեալ կատարս լերանցն Հայոց, ունելով 12254', իսկ արեւմտեան ոտքն 'ի լերինս մանուսս հանդին։ Ի հասարակի ստորին կողմանքն աւազուտք և առապարք են, միջավայրքն բուսաբեր և քարուտ, և քարինքն յաճախակի լաւ, պորփիւր, բուցցղեան հող, աւազ և աղ ինչ. այլ բաղում ուրեք անհեղեղք և խառն 'ի խուռն իմն կառուցեալք, 'ի մեծ և 'ի բուռն ցնցմանց երկրի կերպարանեալք. և վերնակողմն յ12,000 ոտից և 'ի վեր համակ ձիւնապատ է 4000 ոտնեայ վերարկուաւ անլուծանելի սառամանեաց. և 'ի քղանցից անտի սառամանեացն 'ի հիւսիսոյ կուսէ ցգեօղն Արկուռի՝ պատառեալ է լեառնն 6000 ոտս ընդ խոնարհ. 'ի վաղնջուց ուրեմն հրաբուխ վերաշնչմանց, զոր յիշէ և մերս վիպասայը Մովսէս Խորենեցի, և Վէհ Մասեաց կոչէր կամ Փլոգն Դէշ, յորում արգելեալ ասէին վիպասանքն Հայոց զԱրտաւազդ արքայ և 'ի Քաջաց պահեալ, զի մի ելեալ և աշխարհի աւեր և վախճան հասուսցէ. ընդ այն խաղային ուղիք 'ի հալից ձեանց։ Ի կուշտ մի քարակոհակ վէհին շինեալ էր մենաստանն Ս. Յակոբ, 'ի տեղւոջ դադարման Մծբնեցւոց հայրապետին՝ յելանել իւրում 'ի խնդիր փայտից Նոյեան տապանին, ըստ ազգիս մերոյ աւանդու-

թեան, մենաստան փոքր և պարտէզ. և ի վերայ լուսաղբիւր ընկիչ մարախոյ յ7620՝ բարձրութեան։ Ստորև քան զսա կայր Անոռ կամ Աբէոռ գիւղ 'ի 5982՝ բարձու, 'ի տեղւոջ այգւոյն տնկելոյ 'ի Նոյայ, ըստ աւանդութեան, առ որոյ յիշատակէ տնկեալ դարմանէին այգիք ստորև 'ի 4013՝ բարձու. իսկ 'ի գեղջն ընակէին 300 տուն Հայոց, և ունէին եկեղեցի հին և դերեզմանատեղի հաղարամեայ արձանագրովք, ցամ Ցեառն 1840. յորում 'ի քսանեերրորդի աւուր ամսեան յունիսի՝ սասանութիւն մեծ եղև 'ի դաշտին և 'ի լերինս Արարատայ, որ և ընդհատ և նուազ ժամիւք տեւեաց աւելի քան զերկու ամիս, կեդրոն ցնցմանց ունելով զբարձրն Մասիս. որոյ յետ բաղում դարուց 'ի յուշիմն բերեալ զնախկին հրամուղ եռանդնն, ահեղ որոտմամբ և վերապատառմամբ արձակեաց բոցախառն ծուխ սեաւ. և մեծապէս շարժեալ դղրդեցաւ, ինքն և դաշտն առ հասարակ և անդրադոյնք և զսահմանք. և մինչդեռ բաղում ուրեք երկիրն խորխոլեալ պատառէր, և շինուածք տապալեալ կործանէին, և դեռն Երասխ օժանդակօք իւրովք ալեկոծեալ ընդ հուն վազէր և տեղափոխէր. վէմ մի կարմրագոյն բլրահասակ փրթուցեալ ի բարձանց լերինն, և թափ ընդ թափ յոլովեալ ցուլեալ ընդ քարինս և ընդ սառոյցս՝ գահավիժեալ անկանէր կիսով յորկորս վէրին մեծի, և կիսով խոնարհագոյն ևս թաւալ առեալ՝ զմասն մի վանաց Ս. Յակոբայ և զնորին աղբեր հարեալ՝ կորզեալ արկանէր 'ի վերայ գեղջն Ակուռոյ, և նոքիմբ զգիւղն կործանեալ աւերէր ջնջէր հեռախաղաղ առնէր. տամբք և ընտանեօք և ստացուածովք կորուսեալ զտեղին, և զառ ստորև նորին տա-

ւաղեալ վրանաբնակ Քուրդս, յորոց սակաւք ոմանք կարացին անձնապուրծ լինել. և ծուխ հրախառն փո-թորկեալ զհետ մեծի թաւալոցին՝ ճարակեաց թխացոյց զմնացուածս չինին և ծառաստանին, և ծածկեաց տը-գեղծ աւերածովք. որք յետ ամսօրեայ աւուրց (՝ի 24 յուլիսի) քայքայեալք սորսորեցան ի՛ի խոնարհ ՝ի դաշտավայրսն, վարեալք ՝ի հեղեղեալ քարանց զերծե-լոց և ՝ի սկախառն հոսանաց կաւոյ և տղմոյ. յորոց դարձեալ ոչ սակաւ աւերմունք եղեն. և ցարդ նշմարին ողորմելի մնացուածք գեղջն և մենաստանին մասամբ ի տղմի խրեալք և մասամբ ՝ի խառնակոյտս անկերպարանս, և մեծագոյն ևս մասամբ՝ անհետացեալք։

Բայց առ յիշատակէ գեղջն հնոյ կանգնեցաւ Նոբ Ա։՝՝՝։ ՝ի ստորոտս լերինն, և բնակեցաւ ՝ի Հայոց իբր 180 տանց։ —Գագաթն լերինն ի հանդարտութեան օդոց՝ մառախլապատ տեսանի, իսկ ՝ի շնչել ի նմա հողմոց՝ պարզ և սպիտակափառ և պաղպաղուն փայլէ վսեմահայեաց. բայց և հողմքն և մառախուղք, և սառամանիք նորին և ապալեր ուղղաբերձ կողք և աւաղն սահագնաց, և ա-մարանի հեղեղք ձիւնահալ հոսանաց, և բրդածք հիւ-սոյ, դժուարինս և վտանգաւորս գործեն ղելս լերինն, և գրեա թէ անմատոյց՝ զսրբազան գագաթն զասպնջա-կան տապանին. յոր նախ առաջին առ մեօք յամին 1829 յիններերրորդումՄ աւուր ամսեան հոկտեմբերի եղ գիտուն բնախոյզն Բարրոդ Գերմանացի ընդ Ֆէստորովի չափա-բերի և այլոց ոմանց, և եռես բլուրս երիս սառաման-եաց ի վերոյ քան զպատառածն մեծ, և ի գագաթան տեղւոջն տափարակ իբր 200 քայլիս չրջապատաւ, ուս-տի երևէին համօրէն Այրարատ և կողմանք Սիւնեաց.

անդ կանգնեաց խաչ փոքր, և խաչ մեծ ի ստորև՝ յառաջին ելն. յետ նորա ելին և այլ բնակիչք ի գաղանան նուագս և հաւաստեալ ստուգեցին զքննութիւնս Բարրոդեանց։ — Փոքրն Մասիս որ կոնաձև ևս քան զԱրարատն ամբառնայ ց9560՝ յերեսաց դաշտին Երասխայ, յամարան զերծանի ի ձեանց, և դիւրելանելի է, թէպէտ և աւազուտ և սա. ի գագաթանն ունի լճակ ըստ օրինի հրաբխաց, և եղերքն քարախիտք. իսկ ի տեղւոջ տափարակի վէմք մեծամեծք թաւալեալք կան, զորս Օշոդ կամ Հսկայից դերեզմանս ասեն լինել։ Ի լեռնադաշտի կցուածոյ կրկին լերանցն կարծի յոմանց նիստ տապանին։ Ի հարաւոյ կուսէ խառնին ոստք Մասեաց ընդ լերինս Պայէզիտոյ, արևմտից ընդ լերինսն որ սահման հատանեն ընդ դաւառս Պայէզիտոյ և Մուրմառոյ, և երթեալ կցին ընդ Բարդողայ. համօրէն լեռնադաշտակքն բերեն զհրաբուխ երկրի կերպարանս, սպնդաքարիւք և յաւաքարիւք, որք յաճախագոյն ևս գտանին ի հիւսիսային կողս լերինն, մանաւանդ առ ակամբք Սէոլէրոյ։ ուր և մօրավայրք են, և բազմութիւն ջրասէր հաւուց։ Հաւուցս վայրենեաց և որսականաց առատութիւն է և ի ստորոտս լերինն, ուր և որսան բազմիւք, իսկ չորքոտանիք չեն առատ ի Մասիս, ի գաղանաց երեւի երբեմն և յոմանց։ նուազեալ է և բուսաբերութեամբ. ծառք սակաւք են ինման և գտանին ցարձրութիւն 7800-8000 ոտից. անտի և ի վեր այլեան բոյսք որք ժամանեն ց12,000 և ոգիք ինչ ց13,000։ Առ ակամբք գետոյդ յիշելոյ ի սահմանս Արկուսոյ՝ եղեալ Արատաւոյն արքայի յորս կնճիռ և ցուցք խարդաւանեցաւ ի վիհն. լեռնակոհակն այն կոչէ որ հինսն Գէնոյ լեառն կամ

Բլուր և դեան Գինեցոյն, թուի թէ ի յիշատակ գինւոյն Նոյի։ — Ի հիւսիսային Մասեաց ոտին կան գեղեղն Սեւ-պաղան, Աբուլբի, Հասանաղա և այլն»։

Ընթերցողաց ուշադրութիւնը կը խնդրեմ այս գեղեցիկ գրուածքին վրայ, որ կը պարունակէ Մասիս լերին ու Ակուռի դժբաղդ գիւղին ամբողջ պատմութիւնը. և ապա կը հրաւիրեմ ի Ս. Էջմիածին։

---

## ԳԱՄԱԿ Զ.

### ԷՋՄԻԱԾԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

1868, Հոկտեմբեր.

Աշնան միջին ամիսն է մը, և օդերու յարմար ժամանակում. հովերը փչում են անուշիկ և զով. առաւօտեան արեւու ճառագայթ սիրուն է իր լոյս. գոյն և ջերմութիւն ի վերայ խորհրդաւոր դաշտին Եղիվարդի, Մուզնի, Օշական, Աշտարակ, Վաղարշապատ և այլ գիւղերի. հաւք և թռչունք երգում են քաղցրիկ բնական նուագարանով. վճիտ առուակներ հոսում և կարկաչում են, և օձապտոյտ դնում են։

Այգեաց և պարտիզաց ծառեր, տունկեր, ծաղիկներ և խոտեր փայլում են գոյնզգոյն, և գիշերային ցօղերու մարգարտանման հատիկներ բերում են ի տես. ոչխարներ, գառներ, և այլ կենդանիք մնում են գնալ արածիլ դաշտեր և ձորեր. հովիւք և հովուուհիք փչում են իրենց սրինգներ։

Մեր կարաւան՝ յետ երկարօրեայ յոգնութեան՝ կը տեսնէ Էջմիածնի գմբէթներ դաշտի մէջ փայլած. ինչ ուրախութիւն. ոմանք կը խաչակնքեն զուարթ և ջերմեռանդ երեսով, ոմանք երգում են եկեղեցւոյ անուշիկ երգեր. վերջապէս խիստ զուարթ կերպիւ կը հասնիմք այն ազբիւր և հանգիստ կառնէ կարաւան, ուրկից կերևի ամբողջ դաշտն Էջմիածնի և Վաղարշապատի։

Ի կարին միացած էին մեզ Տիգրանակերտի, Քարբերդի և Էրզրումի ուխտաւորք ևս. մեր թիւ կը հասնէր 80ի. ջորեպանք և ֆէ-ֆէ-ն 100ի մօտ։

Քարբերդցի Եպգուպեանի հետ յառաջացանք կարաւանի օթևան ճարելու համար, վասն զի լսած էինք ուխտաւորաց բազմութիւնը, վանուց հիւրանոցներ և վրաններ լցուիլը, և Վաղարշապատի շատ մը տուներու վարձու բռնուիլը։

Հասանք ի Ս. Էջմիածին սեպտեմբեր 23ին՝ Վարագայ Խաչի պահոց երեքշաբթի օրն. (Ս. Միւռոնի օրհնութիւն պիտի կատարուէր կիւրակէ օր.) ահա ինչ կը տեսնեմք, բազմութիւն ուխտաւորաց եկեալ շատ մը քաղաքներէ, Պարսկաստանէ, Ռուսիայէ և Թուրքիայէ. լցուած էր բոլոր սենեակները և վանուց կողմէ պատրաստեալ վրանները։

Գտանք հիւրընկալ Ներսէս վարդապետը և խնդրեցինք բնակարան, և առինք եղբ-ոյ, էֆ-ոյ պատասխանը, յաւելցնելով թէ ուշացել էք և պէտք է երկու պզտիկ խուցով գոհանաք։ Մութ, խոնաւ և փոքր էին և հաղիւ կը բաւէր մեր կարաւանի գոյքերը լեցնելու։

Բախտը կամ ուխտաւորաց ջերմեռանդութիւնը օգնելով, պատեհ հանդիպմամբ ներկայացանք Վեհ. Ս.

Կաթողիկոսին ամենայն Հայոց Գէորգ Դ.ի, ի գաւիթ եկեղեցւոյն, ուրկից կանցնէր բաղմութեամբ։

Նորին Վեհափառութիւնը լսելով հեռաւոր երկիրներէ և Թուրքիոյ ներսերէ այսքան ուխտաւոր գալը, շատ ուրախ եղաւ, և Օսմանեանց վրայ յատուկ խնամք ունենալով, իսկոյն հրամայեց հիւրընկալ Հայր սուրբին պարպել ձեմարանը, մէկ կողմը յատկացնել Կարնեցւոց և Երզնկացւոց, միւս կողմը Քարբերդցւոց և Տիգրանակերտցւոց (1). անմիջապէս կատարեցաւ հրաման Վեհափառի, և կարաւանը ուրախութեամբ տեղաւորեցաւ։ Դպրոցի մահճակալներն ալ յատկացաւ ուխտաւորաց (2)։ Ուխտաւորաց բաղմութիւնը արդէն խռնեալ էր, որոց թիւը մինչև 30,000ի կը հասնէր։ Այս թուոյն ենթակայ չէ Ռուսիոյ մի վաշտ զօրքը, պաշտօնեայներ, միաբանութիւն վանուց, Վաղարշապատի 1000 տուն երկրագործ Հայեր և շրջակայ գիւղօրէից Պարսիկներ, Հայեր, և առևտրական գործով գալողներ։

Էջմիածնի պատմութիւնը գրելու համար կայ առատ նիւթ. այլ մեք կը գրեմք համառօտիւ։

---

(1) Բոլոր ներկայ գտնուողք ծիծաղեցան երբ Վեհափառը հրաման բրաւ հիւրընկալ Հայր Սուրբին որ իր սենեակը պարպէ և յատկացնէ մեզի, և ինք հիւր ըլլայ Աբէլ սրբազանին իրր պատիժ Օսմանցւոց յարդ չի տալուն համար. քիչ մը վերջ բաղ մեցանք ընդարձակ և կահաւորեալ սենեակը։

(2) Վեհափառը ամեն պարագայի մէջ կը նախադասէր Օսմանեան Հայերը որոյ շնորհիւ վայելեցինք հանդստութիւն և ամեն կերպ դիւրութիւն. Միաբանութիւնն ալ յատուկ յարգանք կը տածէր Օսմանցի Հայերուն նկատմամբ։

Էջմիածնի վանք շինեալ է ի դաշտին Վաղարշապատ, ի հնումն կարբի կամ գլխաւոր մասն Այրարատի։ Էջմիածնի շրջապատն է Երևանը, Արայի լեռը, Հրազդան գետը, Երասխը (Մայր Արագսին, Արաքը)։

Դաշտի յատակագիծը կընման կարնոյ կամ Երիզայի դաշտերին. ունի միակ առուակ մը ջուրի որ կանցնի վանքէն կերթայ կը լցուի մեծ աւազանը՝ մեծ անտառը ջրելու համար. ջուրը և օդը առողջարար չէ. նման է Երևանի։

Այս աշխարհածանօթ տեղը նախ շինեց Երուանդ, հայրն Տիգրանի, Քրիստոսէ 700 տարի առաջ, որոյ քեռայրը Վարդգէս նորոգեց՝ առաջին աւանն անուանելով Արդաշատ։

Յետ բաղում ժամանակաց կամ հազար տարիներու, Վաղարշ հաւ Տրդատի նորոգելով կոչեց Վաղարշապատ, այսինքն նոր քաղաք կամ դաշտի քաղաք, ուր գարնան երանակի բնակէին Խոսրոփ և որդին Տրդատ։

Աստ ետես զտեսիլն հրաշալի Գրիգոր լուսատուն Հայոց, ինքն Մէծն Բանին և զբաղխելն ուռամբ զհիմունս երկրի. վասն այսորիկ կոչեցաւ «Էջմիածին»։

380 թուականին կործանեց այս քաղաք Մեհրուժան, սակայն կրկին նորոգեցաւ, և է շէն ու պայծառ մինչև այսօր։

Նշմարք հին պարսպի ցարդ երևին ի Վաղարշապատ գիւղ, որ նորոգեց Վահան Մամիկոնեան և յանձնեց տեսչութեանն Ղազար Փարպեցւոյն։

Կրեց պէս պէս փոփոխութիւնք, երբեմն անշքացաւ. 1441 թուականէն սկսեալ պայծառանար երբ բաժանեցաւ աթոռէն Սսոյ. և եղև աթոռ նախապատիւ

քան զամենայն աթոռս Հայոց, ինչպէս մինչև ցայսօր։

1441էն մինչ 1868 նստան 47 կաթողիկոսունք յԷջմիածին 427 տարուան մէջ (1)։

Իսկ վանուց շէնքեր և պայծառութիւնք կսկսի 1600էն որ շինեցին մեծամեծ շինութիւնք՝ Մովսէս, Փիլիպպոս, Ղազար, Սիմէօն, Ներսէս Աշտարակեցի և Մատթէոս կաթողիկոսունք։

Սիմէօն կաթողիկոս շինեց վանքի ներկայ արտաքին հաստատուն պարիսպը, որ ունի չորս դուռ և բուրգեր։

Ղազար կաթողիկոս շինեց ընդարձակ հիւրանոցը որ կոչի Ղազարապատ, հաստատուն կրկնայարկ բաղում սենեակներով։

Ներսէս Աշտարակեցին շինեց մեծ աւազանը որ ունի 300 ոտք երկայնութիւն, 300 ոտք լայնութիւն և 20 ոտք խորութիւն, ողջ սրբատաշ քարերով. վանքի առուն գիշեր և ցերեկ վաղելով աւազանը հաղիւ կրնայ լեցուներ 15 օրէն, որ կոռոդէ մեծ անտառը նոյնպէս շինեալ Ներսիսէ. շինեց նաեւ շատ շէնքեր, դրաւեց վանքի բոլոր հին կալուածները և հողերը, մինչ Աշտարակ շինեց ծառուղի և այլ օգտակար բաներ. երջանկայիշատակ կաթողիկոսի մեծագործութիւններն անթիւ անհամար է (2)։

---

(1) Տես Պատմութիւն Եկեղեցական, որ գրեաց Ամենապատիւ Մելքիսեդեկ Մուրատեան սրբազան Արքեպիսկոպոս Զմիւռնիոյ։

48 րդ. Կաթողիկոսն է ներկայ Ս. Մակար Կաթողիկոսը։

(2) Ներսէս Կաթողիկոսի կենսագրութեան վրայ ժողուած էի բաւական տեղեկութիւնք, բարեբախտօրէն ձեռքս անցաւ մէկ տարի վերջ իր կենսագրութիւնը։

Մատթէոս Կաթողիկոս շինեց մեծ վաճառատունն արտաքոյ պարսպաց՝ 4 դուռ 160 կրպակներով։

Ներկայ Վեհափառը (Գէորգ Դ.) սկսած է զարդարան մը շինել, և մտադիր է կառուցանել շատ շէնքեր և ուսման յարկեր (1)։

Վանուց միջնապարիսպը բաժանեալ է կրկնակի քառանկիւն, կրկին պարսպաց միջավայրն է բաղնիքը, ախոռներ և այլ շէնքեր. իսկ միջնապարիսպէն ներս անկիւնները զարդարուած է, Վեհարան, Ս. Սիւնհոդատեղի, սենեակք Միաբանից, նոյնպէս եկեղեցւոյ դաւիթում սեղանատուն, վարժարան, տպարան և այլն։

Եկեղեցւոյ շուրջը դաւիթ է ընդարձակ. Վեհարանի դաւիթը կայ դեղեցիկ պարտէզ մը, սեղանատուն (2) և այլ շէնքեր. եկեղեցին շինուած է դաւիթին ուղղակի կեդրոնը, այն տիեզերահռչակ Կաթողիկէ եկեղեցին, Մայր եկեղեցին, Լուսաւորչաշէն եկեղեցին, Տրդատաշէն եկեղեցին, հայատանեայց սուրբ և անդրանիկ եկեղեցին։

Ս.յս հոյակապ եկեղեցի շինեալ է նախ Գրիգոր Լուսաւորչէ և ապա Տրդատէ, ի վերջոյ նորոգեալ Վահան Մամիկոնեանէ 433 թուականին, վերակացութեամբ

---

(1) Գէորգ հանգուցեալ Ս. Կաթողիկոսը սկսած էր շինել եկեղեցւոյ խորանի կից ուր պիտի դրուին սուրբ անօթք, որք գեղանափոր տեղեր կեղծանէին. այժմ այցելուք անշուշտ կը տեսնեն թէ ինչ օգտակար եղած է. շինեց նաեւ Գէորգեան ճեմարանը և այլ շէնքեր։

(2) Սեղանատունը կրկին է ամարայնոց և ձմերայնոց. ամարանոցը կը պարունակէ 250–300 մարդ։

փարպեցւոյն անխոտոխ պահեալ ղտեղի Իշման և յիշատակ Լուսաւորչին։

Է. դարուն Կոմիտաս Կաթողիկոս կրկին նորոգեց և շինեց քարակերտ մեծ դմբէթն, կրկին նորոգեալ մաս մի ներսէս շինողէ, յաւելեալ խորաններ և դմբէթներ. կրկին մեայ անխոտոխ հնութիւն եկեղեցւոյն, լայնածաւալ սիւներուն և զարմանալի կազմութեանն. ունի 3 դուռ, 7 խորան և 4 խիստ մեծ սիւներ. արևմտեան մեծ դուռի վրայէ եռայարկ և բարձր զանգակատուն, որ ունի ահագին զանգակներ, որոց մին եկեալ է աշխարհէն Թաթարաց և ունի դրօշմեալ սրբազան ճշմարտութիւնք Թաթար տառերով։

Եկեղեցւոյն մէջտեղն է Էջմիածնի Ս. խորանը որոյ վրայ է այն մեծ կաթողիկէն բարձր 70-80, եկեղեցւոյ երկայնութիւն 100 և լայնութիւն 90, վայելուչ և սքանչելի. կրկին ամբողջ հայրապետական, մին հուալ խորանին Իշման, միւսն ի դասուն, քանդակեալ և զարդարուն։

Վանքը ունի նաև ճոխ թանգարան և մատենադարան, բաղում ձեռագիր գրեանք, սառնատուն որ միշտ անպակաս է սառոյցը ամրան եղանակին. նոյնպէս առատ է գինին. ունի մոմատուն, խոհարանք և այլ բազմաթիւ շէնքեր ամենքն ալ քարակերտ։

Վանքի պարսպաց շուրջն է կարծեօք Զմրոնի չափ. արտաքոյ պարսպաց է մեծ աւազանը, անտառը Գայիանեաց, Հռիփսիմեանց և Շողակաթի վանքերը(1) (մօտ Էջմիածնի վանուց), վաճառատունը և մեծ հրապարա-

(1) Որոյ աղագաւ կոչի Ուչ քիլիսէ։

կը, յորմէ անդին է Վաղարշապատ գիւղը և Էջմիածնի գերեզմանատունը, ուր կայ հոյակապ շիրիմներ Կաթողիկոսաց։

Շուրջի երեք վանքերու եկեղեցիք պայծառ են, իսկ ուրիշ շէնքեր աննշան. ասոնց մօտն է վանքի ախոռներ որ ունի բազմաթիւ ձի, եզ, կով, ոչխար, խոզ. Վաղարշապատի հողեր և այգիներ կը վերաբերի վանուց, որ կը մշակեն 1000 տուն Հայք. ունի նաև ուրիշ շատ գիւղեր, ագարակներ և կալուածներ։

Անտառը կարծեօք երկու ժամու շրջապատ ունի, (անդին հարստութիւն). վանքի եկամուտներ և ուխտաւորաց նուէրք և փոխարէն ծախքեր կը գործադրուին Սինոդի որոշմամբ. նստի մի պաշտօնեայ (պրօկուրօր) Ռուսիոյ տէրութեան կողմէն՝ Պալաժէնիա անուն կանոնագրքի տրամադրութեամբ, որ կը վերաբերի վանուց կառավարութեան, հաստատեալ 1837 ին։

Տպարանը հրատարակում է մի թերթ Ս. յրարատ անուն, և եկեղեցական դրեանք. թանգարանը ճոխ է ձեռագիր և տպեալ գիրքերով։

Եկեղեցին ունի բազում սուրբ անօթ, զարդեր և զգեստներ, ոսկեզօծ և արծաթեայ թագեր, խաչեր, քշոցներ, գաւազաններ, ոսկեթել զգեստ և արծաթապատ Աւետարաններ և այլն. խաչերու և թագերու վրայ կերևի նաև քարեր, միլիոնաւոր հարստութիւն՝ իբրեւ արքայական։

Վանքը ունի սրբոց մասունք որ կը բաղկանայ հեռաւեալ նուիրական նիւթերէ։

Աստուածամուխ Ս. Գեղարդն երկաթեայ.

Մասն Նոյեան տապանի (թղաչափ).

Այն Ս. Գրիգոր Լուսաւորչի (արծաթապատ).

Այն Ս. Արիստակէս Հայրապետին (արծաթապատ).

Այն Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին »

Պատկեր ձեռակերտ Յովհաննու Սեբաստացւոյն (փայտեայ).

Ա.յլ մաս Նոյեան տապանին (փայտեայ).

Գաւազան Ս. Հռիփսիմէ կուսին.

Ս. Խաչեր մի քանի հատ, մաս և նշխար Սրբոց (ոսկիէ և արծաթեայ ոսկեզօծ). ասոնք կը պահուին մեծ խնամքով և մաքրութեամբ։

Հռիփսիմեանց վանքն է տեղի նահատակութեան հրաշագեղ կուսին Հռիփսիմեայ 32 ընկերօք, որ կոչեցաւ Մայր Հայոց. հոս է հնձանք արքունի շինեալ նախ Լուսաւորչէ, ապա Մեծն Սահակէ և նորոգեալ Կոմիտաս Կաթողիկոսէ որ հանդչի ասա և ունի դամբան. ինչպէս նաև հոս է գերեզման Փիլիպպոս Կաթողիկոսի։

Ս. Գայիանեայց վանք՝ ուր նահատակեցաւ մայրն կուսանաց երկու ընկերօք՝ շինեալ Լուսաւորչէն Հայոց. ընդարձակեց Եղր Կաթողիկոս 630ին, ի վերջոյ Փիլիպպոս և Եղիազար Կաթողիկոսունք նորոգեցին. հոս է գերեզմանք Եղր և Եղիազար Կաթողիկոսաց։

Շողակաթի վանքն է տեղի նահատակութեան միակ հիւանդ կուսին, նորոգեալ Նահապետ Կաթողիկոսէ(1)։

Ս. Միւռոնի օրհնութիւնն սկսած էր Վարագայ Խաչի կիրակիէն 40 օր յառաջ, որ ամեն ժամերգութենէ

---

(1) Ընդարձակ պատմութիւն Կուսից, տես Վարք Սրբոց անուն գրքին և Ազգային պատմութեանց մէջ։

վերջ կը կարդան. շաբաթ օրը կատարեցաւ Վեհափառի ծննդեանն հանդէսը խիստ շքեղ կերպիւ. դիշերը հրախաղութիւն և այլն. Վեհափառը եկեղեցիէն ելլելուն բոլոր զօրքեր բարեւի կայնած, նուագարանք, երգեր և ճառեր կը յաջորդէին, կեցցէներու ձայներ և հուրրաներ օդը կը թնդացնէին։

Կիւրակէ առաւօտ եկեղեցւոյ ժամերգութիւնը լրացաւ սովորական մինչև Հայր մեր խորհուրդ խորհին, և եկեղեցին աւարտեցաւ. յայտարարեցին թէ մէկ ժամ վերջ (1) պիտի սկսի Պատարագը և Միւռոնի օրհնութիւնը։

Կէս ժամ վերջ ուխտաւորք խռնած էին եկեղեցւոյ դաւիթը, տանիքները և այլուր. զօրքեր շարուած էին հրացան ի ձեռին բարեւի, ահա երևցաւ Վեհափառ Հայրապետն զգեստաւորեալ թանկագին կերպասիւք, և ընդ նորա զգեստաւորեալ երկոտասան Եպիսկոպոսունք ծանրագին զգեստներով, թագերով և դաւազաններով,

Վեհափառի դլխին կար մի ամպհովանի զարդարուն որ բռնած էին չորս յատուկ անձինք. երգելով մտան յեկեղեցի. Վեհափառը պատարագիչ էր, ահա սկսաւ պատարագի խորհուրդը. 12 Եպիսկոպոսունք ունէին ի ձեռին Ս. Մասունքներ և Միւռոնի աղաւնակերպ անօթը և ծաղկանց հիւթը։

Պատարագը սկսեց խիստ շքեղ և բացառիկ հանդիսով. բոլոր վարդապետք և քահանայք, դպիրք

---

(1) Սթոռի սովորութիւն է հանդիսաւոր օրեր առաւօտեան ժամերգութիւնը և պատարագի արարողութիւնը զատել և երկուրի մէջ մէկ ժամ միջոց տալ (թէյ խմելու և նախաճաշելու)։

և այլ եպիսկոպոսունք զգեստաւորեալ էին եկեղեցական շքեղ համազգեստներով. բոլոր խորաններ զարդարեալ էր խաչերով, Աւետարաններով և ծաղիկներով. եկեղեցւոյ բիւրեղեայ բոլոր ջահեր և արծաթեայ կանթեղք լուսափայլ աննման տեսարանով։

Զօրաց սպայներ հագած էին մեծ համազգեստներ, և զօրքեր նոր զգեստներով կարգ կարգ բաժնուած էր եկեղեցւոյ մէջ տեղեր, դուռներ, դաւիթներ և վանքի բոլոր շէնքերու կարգեր և պարսպայ դուռները. պատարագը լրանալու մօտ Առաքելոցի առեն սկսեց Վեհափառ պատարագիչը բարձր ձայնիւ Լ. ռուսերէն ուղղագրած կայսրն ուղնայն Ռուսոց և այլ տիտղոսներով, և ապա թագուհին և գահաժառանգը և այլ կայսերազունս յիշատակել (1)։

Վեհափառը խօսեց կարճ և ազդու մի քարոզ, օրհնեց կայսրութիւնն Ռուսիոյ և Օսմանեան, օրհնեց ազգը, եկեղեցին, միաբանութիւնը, ուխտաւորները, գրրուատեց Օսմանցի Հայոց հեռաւոր երկիրներէ ջերմեռանդութեամբ եկած ըլլալնին. համառօտիւ բացատրեց Միւռոնի արարողութիւնը և ո՛ր թուականէն սկսիլը, և կրկին օրհնութեամբ վերջացուց։ Ապա սկսեց Միւռոնի օրհնութիւնը (2) և լրացաւ չորս ժամէն (պատարագի սկիզբէն մինչև ցաւարտ)։

---

(1) Ռուսահայոց եկեղեցիներում կայ մի ապեալ թուղթ որ կը մնայ խորհրդատեղերի մէջ. պատարագիչ վարդապետ կամ քահանայ նախ պարտի յիշել Կայսրն, կայսրուհին և կայսերազունք և ապա Կաթողիկոսը, որոյ կը հետեւին նաև դպիրք։

(2) Միւռոնի օրհնութիւնը 40 օր կը տեւէ. 39 օր առաւօտ

Ի համբոյր ուխտաւորաց դրուած էր տօնի օրէն յառաջ և վերջը Միւռոնի խալկինը որ ուխտաւորք կը համբուրէին։ Կիւրակէն լմնցաւ. երկուշաբթի առաւօտէն ուխտաւորք սկսան վերադառնալ, մինչև երեք օր համարեթէ ուխտաւոր չէր մնացած։ Նոյնպէս վերադարձաւ մեր կարաւան և մեք մնացինք մի քանի օր, քանզի բաղմութեան մէջ չունէինք դիւրութիւն ամէն կողմ պտըտելու, վանուց և շրջակայից առարկայք տեսնելու։

Յայնժամ աղատ կերպիւ տեսանք վանքի բոլոր շէնքերը, եկեղեցւոյ անօթները և զարդերը, գիրքերը, մօտակայ երեք վանքերը, շիրիմները, Վաղարշապատ գիւղը և եկեղեցին, մեծ անտառը, մօտակայ մի քանի գիւղերը և այլն։

Սոյն հանդիսի ներկայ էին Տ. Մկրտիչ վարդապետ Թրիմեան և Երեմիա վարդապետ որք եկած էին Եպիսկոպոսութեան բարձր աստիճան ընդունելու. մեք շատ կը փափաքէինք տեսնել նաև ձեռնադրութեան հանդէսը մանաւանդ Հայրիկի ձեռնադրութիւնը, դժբաղդաբար չկրցաւ մեր փափաք (1) և մեք վերադարձանք ի Կիւմրի։

---

Ներ եպիսկոպոսունք և քահանայք կը կարդան Մարգարէից Առաքելոց թուղթերը, Աւետարան, Նարեկ, Շարական, Սաղմոս, Մաղթանք և այլն, որ մէն մի օր կը տևէ մի ժամ. 40րդ. օրը կը լրանայ, և կը նմանի Ծննդեան տօնի առաւօտ (յետոյ ջրօրհնէնք) ի արարողութեան, «Առաքելոց աղաւնոյ» ըսելով հին Միւռոնը կը լեցնէ Վեհափառ պատարագիչը պատրաստ խալկինի մէջ և ապա խալկինի բերան կը դոցուի։

(1) Վեհափառը ճաշի մը ատեն յայտարարեց իր յոգնած

Վանքը կը կառավարի Սիւնհոդի որոշմամբ և կընտրուի ամեն պաշտօնեայք, ինչպէս համարակալ, դանձապահ, տպարանի և թանգարանի տեսուչք, մատակարար, կալուածական տեսուչք, նուիրակք և շատ մը եկեղեցական և քաղաքական պաշտօնեայներ։

Վանքի կանոնադիրքն է Պալաժէնեան և որոյ դորձադրութեան կը հսկէ պրօկուրօրը։

Սիւնհոդի նախագահն է Ս. Կաթողիկոսը կամ փոխանորդը. Կաթողիկոսը բացարձակ տէր և իշխանն է վանուց և նորա սեփհականութեան։ Կաթողիկոսն է դատաւոր միաբանութեան և վանքի երկրագործ ժողովրդեան։

Կառավարութիւնը կը ճանչէ իբրև գերագոյն Եպիսկոպոսապետ, տրուած է բաւական արտօնութիւնք և մեծ յարգանք։ Զօրքեր և զօրապետք կը բարևեն կը յարգեն Կաթողիկոսը ինչպէս բարձր նախարար մը (1)։

Կաթողիկոսական իշխանութիւն խիստ բարձր է, մանաւանդ Կաթողիկոսը եթէ ըլլայ օրինաց հմուտ ինչպէս Ներսէս Աշտարակեցին, այն ատեն խեղդիրը կիսոխուի։ Ներսէս Կաթողիկոս կառավարեր է վանքը և ադգը ինք-

---

ըլլալը, և հաղիւ 20–25 օրէն կրնալ ձեռնադրելը։ Հայրիկը մեզ ըսաւ թէ «մի սպասէք», ձմրան մօտենալը և ճանապարհներու երկիւղը, Վեհափառի յոգնութիւնը, զրկեցին զմեզ մի այդպիսի չքեղ հանդէս տեսնելու։

(1) Ռուսիոյ զօրքերը կը բարևեն Եպիսկոպոսը իբրև ժէնէրալ (լիվա), վարդապետը իբրև պոյդովնիկ (գնդապետ) և քահանայն իբրև մայոր (հազարապետ). այս է իրենց Ռեշրեֆոռեֆ կարգ։

Նիշխան կերպիւ, սարսափ ձգեր է շատերի վրայ. Պարսիկ ժողովուրդը անգամ Կաթողիկոսի կը դիմեն եղեր իրենց դատերին համար։ Միաբանութիւնը կը բաղկանայ կարծեօք 300 անձէ. կայ մէջերնին խոհուն, քաղցր և բարի մարդիկ։

Մեր վայելեցինք համակրութիւն Վեհափառէն և միաբանութիւնէն, ի մասնաւորի Ս. Արէշ և Պետրոս եպիսկոպոսներէն, հիւրընկալ Ներսէս վարդապետէն (այժմ Եպիսկոպոս)։

Տեսանք Ռուսիայի 30–40 քաղաքներէ շատ Հայեր, որոց մէջ կային բարձր դիրքի տէր անձինք, ուսումնականք, վաճառականք, որ խիստ կը յարգէին Թրքահայերը։

Տեսանք Նիկոլ Իշխանը, Տփխիսի Փոխարքային տեղապահը, որ եկաւ Էջմիածին շատ ուռուանով (1), գնաց եկեղեցի և անտի Վեհարան. մեկնեցաւ մէկ ժամէն։ Տեսանք կայսերական դերդաստանէ մի դշխոյ որ դալով գնաց եկեղեցի և անտի Վեհարան, ապա շրջեցաւ կրկին վանուց շատ կողմերը, ջերմեռանդութեամբ համբուրեց սրբոց Նշխարքը, և երկու ժամէն մեկնեցաւ։ Տեսանք Խրիմեան Հայրիկը, Երեմիա վարդապետը, Պոլսեցի Բէիսեան Մկրտիչ պէյը, և այլ շատ ազգայինք զանազան տեղերէ. տեսանք առարկաներ, նոր տեսակ ծառեր, պտուղներ, սիրամարգ, բրինձի մշակութիւն և այլն. տեսանք Երեւանը, Վաղարշապատը, Օշականը, Աշտարակը, Մուղնին և այլ նշանաւոր գիւղեր. տեսանք

(1) Ռուսահայք սալթանաթ բառի տեղ կը գործածեն սանսանաթ, այսինքն չքեղութիւն։

Ս. Էջմիածինը և շատ ուրիշ վանքեր. տեսանք Կաթողիկոսաց շիրիմներ, ոմանք դմբէթաձև, ոմանք դրքաձեւ, կերպ կերպ արձանագրութեամբ։ Ամենէն պարզն է Ներսէս Ե.ի գերեզմանը, հրապուրիչ և խորհրդաւոր (1). տեսանք, շրջեցանք, վայելեցինք, ուխտեցինք, վերջապէս դարձանք դոհ և ուրախ սրտիւ. կը փափաքիմ սիրելի ընթերցողք, որ դուք ալ պատեհութիւն ունենաք վայելելու մի այսպիսի Ս. Աթոռի տեսութիւն որ լի է բաղում հին և նոր յիշատակներով, որոց նկարագրութիւնը պէտք է լեցունէ ամբողջ հատորներ (2), մենք հաղիւ կրցինք գրել այսքան մը, և անցանք ի Կիւմրի որ է Աղէքսանդրապոլ։

---

(1) Բոլոր ուխտաւորք կղմայլէին այս գերեզմանին որ Էջմիածնի եկեղեցւոյն գաւիթն է, և է մի պարզ մարմարիոն, որ պիտի պատմեմ Նորին կենսագրութեան մէջ։

(2) Անշուշտ հատորներ կը լեցունէ եթէ պէտք ըլլայ գրել վանից պիւտճէն, նիւթական եկումուտ, վարժարանաց և ուսումնարանի ծրագիր, աշակերտաց թիւ և ուսման եղանակ, թանգարանի և մատենադարանի հին գրեանց ցանկեր, արձանագրութիւնք, յիշատակարաններ, միաբանութեան դրութիւն, Պալաժէնեայի թարգմանութիւն, վանուց նիւթական և նուիրական հարստութիւն, Օսմանեան Սուլթաններու և այլ կառավարութեանց ֆէրմաններ և այլն։

# ՆԱՄԱԿ Է.

## ԿԻԻՄԲԻ

1868, Սեպտեմբեր.

Կարսէն գնացինք Կիւմրի, և Էջմիածնէ վերադարձին եկանք դարձեալ. երկու անգամին մնացինք երբ 8 օր։

Մեր պատմութիւն կսկսի Կարսէ մեկնելու ատեն, որ նոյն օրուան գիշեր անցուցինք Փալարուան գիւղ, և առաւօտեան ժամը 3 ին հասանք Պաշ գօրտօն՝ մօտ 0. ճաղ ղուլի գեղջ. գօրտօնք (պահականոց) շինուած են Ախուրեան գետի (Արբա չայի) եղերքին և գետն է սահման Ռուսաց և մեր (Օսմանեանց)։

Մեր գօրտոններ կար ղօրապետք և մաքսաւորք, որք պաշտօն ունին քննել անցնելի անձանց անցագիրները և գոյքերն ու վաճառքները։

Մեր պաշտօնեայք ընդունեցին զմեզ խիստ քաղցր եղանակաւ, յարդանք ցոյց տուին կարաւանին, և անցանք Ախուրեան գետ որ սահմանագիծ ըլլալուն կամուրջ չունի։

Գետի միւս կողմն է Ռուսաց պահակները, մաքրանը (գարանթին) և մաքսի տեղեր. մեր և Ռուսաց կողմը ցիցերու վրայ չուանների քաշուած է իբրև սահման և ունի միմիայն դուռ որ կսպասէ ՀՐՈՒՇԼ։

Ռուսաց կողմը որ ոչ ծառ կար և ոչ շուք, գետեղը կը նեղուէինք արեւու տաքութենէն, և երբոր

Ռուս պաշտօնեայներէ և սոլտատներէ կը ինդրէինք դուռը բանալ, շնչեցեալ (ի՞նչ կը խօսի.ը) պատասխանը կառնուէինք. վերջապէս եկան Կիւմրիի Հայերը դիր հարցընելու և մեք հասկցանք որ սպասել պէտք է եղեր 3 ժամ. ետինքի ատեն միայն կը բացուի դուռը օրը մէկ անգամ որ ռուսերէն կըսեն ոչոչ (1)։

Մեք ստիպուեցանք գրել Կիւմրի Զիթողցեան (2) աղաներու (որոց հետ Կարինէ ունիմք բարեկամութիւն) կէս ժամ վերջ կառքով եկաւ Յարութիւն աղան հրաման ի ձեռին և մեք գացինք Կիւմրի որ հաղիւ կը տևէ մէկ քառորդ ժամ։

Կիւմրի էր մի գիւղ անշուք. 1840ին դաղթականք Հայոց եկեալ ի Կարնոյ, Պայէզիտէ, Կարսէ, Բասէնէ, Դերջանէ և այլ տեղերէ, ոմանք մնացին Կիւմրի և գիւղերը, ոմանք ալ գնացին Ցվիխիս, Ախլցխա և այլուր. 1828էն սկսեալ շինեցին շէնցուցին և մեծցուցին։

Քաղաքը շինուած է բարձրաւանդակի վրայ՝ պատերազմական խորհրդաւոր դիրքով, կոչեցին Աղէքսանդրապոլ 1834ին Աղէքսանդր Բ. կայսեր անուամբ

---

(1) Հոս ժամերու սխալութիւն մը զմեզ ստիպած էր առաւօտեան ժամը 3 ին գտնուիլ սահման, մինչդեռ եորոպական ժամը 3 ին կը բացուի եղեր։

(2) Զիթողցեան գերդաստանը Կիւմրիի առաջին երևելի տունն է, որք դաղթած են Կարնոյ Զիթավուզ գիւղէն 1828ին. են հարուստ և պատուաւոր, ունին մեծ շէնքեր, վայելուչ տուներ և այլն. կղրաղին Տէրութեան գոնթրաթներով, վաճառականութեամբ, և ունին պատուանշաններ։

որ էր թագաժառանգ ամենաողորմած(1) Նիկոլա կայսեր։ (Այժմու կայսրն է Գ. Աղէքսանդր։)

Ռուսաց չինեցին ամուր բերդ մի, զօրանոց, հիւանդանոց, վայելչագեղ եկեղեցի, ռազմական ամրութիւնք և այլ շէնքեր։

Արտաքոյ բերդի կայ երկու աշտարակ Գըզըլ դուլէ և Գարա դուլէ անուամբ, որք ամրացեալ են մեծ և փոքր թնդանօթներով։

Կառավարութիւնը ունի ատարանքներ, մաքսարան և մաքրարան, զօրանոց և շատ պահակներ դէպ յԱխուրեան. փողոցներն են լայն, միաձև և ուղիղ՝ բաժանեալ թաղերու։

Բնակիչք 4000 տուն Հայ. հաղիւ կելլէ 200 տուն խառն ազգեր՝ Պարսիկ, Վրացի և Ռուս։

Քաղաքի շէնքեր շինուած են՝ սև, կարմիր, ճերմակ, գորշ և գեղեցագոյն քարերով՝ մեծ մասը սրբատաշ և միայարկ(2)։

Քաղաքի մօտ ձորի մը մէջ կայ մի պարտէզ հատարակաց Զերքէզի ձոր անուամբ, զատիվար և վեր. բնական գիրքը և ծառեր աուած է մի զուարճալի երևոյթ։

Հայք ունին երկու եկեղեցի և երկու վարժարան. երրորդ եկեղեցւոյն պատերը լմնցած է և կը կենայ կիսատ՝ կառավարութեան հրաման չիտար կրկնայարկ չինելու՝

---

(1) Ռուսաց մէջ կայսեր տիտղոսն է ամենաողորմած, կարծեմ ռուսերէնէ թարգմանեալ է, ինչպէս մեք կը յիշենք. մեր Օգոստափառ Սուլթանը, բարեխնամ կայսրը, Թուրքերէն չէվքէթ մէտալ էֆէնտիմիզ, Հիւնքեար էֆէնտիմիզ և այլն։

(2) Կառավարութիւնը հրաման չիտար կրկնայարկ չինելու՝

կապ խիստ վայելուչ ընդօրինակութիւն Անիի Մայր Եկեղեցւոյն(1)։

Վաճառաշահութիւնը աղէկ է՝ բանակի կեդրոն և միշտ զօրք ըլլալուն համար. կան բաւական հարուստ Հայեր՝ քաղաքի փոքրութեան հակառակ։

Բարք և սովորութիւն բաղմակերպ է. ոմանք պահած են Օսմանեան հին Հայ սովորութիւնք իրենց բնիկ երկիրների հետևութեամբ՝ Կարնեցի, Կարսեցի և Պայեազիտցի. ոմանք հետևած են Ռուսաց կամ Վրացւոց, ոմանք Եւրոպացւոց։

Նոյնպէս արանց և կանանց զգեստներ բազմատեսակ է. ամեն ոք իր ճաշակի համեմատ՝ Եւրոպական, Վրացւոց, Պարսից, Ռուսաց, Թուրքաց և այլ կերպ կերպ զգեստներ. կը գործածեն գլխարկ (շապկայ) շատ տեսակներ, փափաղ, ֆէս և այլն։

Ժողովուրդն է հիւրասէր, և համակիր առ Օսմանեան Հայս. նշանաւորք են Ջիթուղյեանք, Տիգրանոֆ, Պապայոֆ, Սիրականոֆ և այլք. կան տաղանդաւոր անձինք։

Կառավարութիւնն է Մութէսարրֆութիւն ընդ իշխանութեամբ Երևանի. ունին մի պաշտօնեայ առևտրական դատերու և ուրիշ մը պատժական ճիւղի, (տավղաթ կառավարութեան) իբր դատախազ և այլն. քիչ

---

ազգական կանոնի մը համար. կրկնայարկ կրնան շինուիլ եթէ երկու յարկը հաւասարի միայարկ տանիքներու։

(1) Այն եկեղեցի աւժ.լրացած է և ականատեսք կը պատմեն չքեղութիւնը։

մարդով կը կառավարեն. չունին ժողովներ կամ ժողովրդական անդամք։

Դատարանները խիստ լքեալ են եղեր ի հնումն. այնպէս որ՝ ՀՓՊԷ (վաղը եկուր) բառը առակ դարձած էր. յետոյ բարձրագոյն հրամանաւ մը բարեկարգեցաւ որ գոհ էր ժողովուրդը, դատերը շուտ վերջանալուն համար։

Առաջնորդը սոսկ քարոզիչ մ'է. բնաւ չի միջամտեր քաղաքական գործոց և է ընդ իշխանութեամբ Ս. Էջմիածնի։

Ժողովուրդը ունի մի ժողով ԲԷԷՈԲԷՆ անուամբ 10–15 անձէ բաղկացեալ. ամեն տարի նոր ընտրութիւն կը լլայ և կառավարութիւնը ասոնցմէ մին կընտրէ թէփութէթ (իբր նախագահ) ասոնք կը բաժնեն տուրքերը, կը վճռեն մանր մունր վէճերը և ունին բաւական կարևորութիւն իրենց սահմանի մէջ։

Քաղաքը չունի ծառ կամ ծառաստան և ոչ այգի պարտէզ. կլիմայն է ցուրտ. փայտը կուգայ Սօղանլիի մեծ անտառէն և ներսերէն. արհեստներն են սովորական. ժողովուրդը կը գործածէ մեծ մասամբ ներքին բերք և տարաշ. Եւրոպայի ապրանաց վրայ ծանր մաքս դրուած է (իմաստուն հեռատեսութեամբ) որով ժողովուրդը տրամադիր կը լլայ ներքին ապրանաց. դարձեալ կսպառի օտար ապրանք, այլ օրէ օր նուազելու վրայ է այս սպառումն։

Ժողովուրդի կեցութիւնն է խաղաղ, ուրախ և ղըւարթ. են կրթասէր, պարկեշտ, հմուտ. դատած չէ Ռուսիոյ ներքին քաղաքաց այն սովորութիւնք որուն Եւրոպա և Ռուսիա կրսէ ազատութիւն։

Մեծ ծախսեր ունին սեղաններու, թէյի, ըմպելեաց և սառակով խաղերու։

Սովորապէս օրը երկու անգամ թէյ, և երկու անգամ ճաշ. կէս օրի ճաշէն վերջ երկու ժամ գոց է պաշտօնատունը իրր միջոց ընանալու։

Ճաշէ յառաջ մանաւանդ երեկոյթի, անհրաժեշտ է ղէոռուկ (1) (նախաճաշ մը) և ապա ճաշի սեղանը որ կը տեւէ կէս ժամէն մինչ 3–4 ժամ, պիտի ըլլայ կախէրդի և Շամբանեայի գինի (2). կարծես հացի հետ կապուած է նաև գինին. առանց գինիի ճաշերը նշան է աղքատութեան (3). ճաշը կսկսի կենաց բաժակներով և հոգիներու (կեցցէ) ձայն կը շարունակի։

Կը խմեն հիւրերու կենաց, տան տիրոջ և զաւակաց. պաշտօնական սեղաններու մէջ կայսեր և ղօրապետաց և բարձր պաշտօնէից ըստ վերարերութեան, աղգային սեղաններու մէջ Կաթողիկոսի, Պատրիարքի, Առաջնորդի, աղգային պաշտօնէից և այլն ըստ կարգի։

---

(1) Զագուսկին կը բաղկանայ՝ ապուխտ, ղուրկիլ և շամայի ձուկեր, երշակ, կարագ իւղ, պանիր, աղցաններ, խաւեար և այլն, որ կը տեւէ կէս ժամ. զաքուսկիի տեղն կը գործածեն օղի կամ գոնեաք, իսկ սեղանի վրայ՝ գինի եւ շամբանեայ։

(2) Որոց շիշը մէկ մանէթնոցէն մինչև վեց մանէթնոցը կայ։

(3) Ներքին կողմերը եկեղեցւոյ մէջ աղքատի ծանուցում ըրած տեղն քահանայն աղքատի կարօտ ըլլալը խմացնելու համար կըսէ. «ժողովուրդ այնքան աղքատ է որ առանց գինիի կը ճաշէ»։ առ հասարակ ժողովուրդի մէջ ալ կը գործածուի. այ_ախպէր աղքատ է. գինիի փող անգամ չունի։

Սեղաններն են ճոխ և զուարթ, հեռի վիճաբանութեանց և քաղաքական խօսակցութեանց (արգիլեալէ)։

Սեղանին կը յաջորդէ նուագ, պար և երգ՝ երբ գտնուին իգական սեռէ. կը յաջորդէ խաղի թուղթեր՝ երբ ըլլան միայն արականք։

Ստակով խաղ խաղալը սովորութիւն եղած է պաշտօնէից և հարուստներու. յատկապէս Գլիւպ մը կայ գիշերները զբօսնելու կամ խաղալու համար. խաղամոլութիւնը թեթև է Կիւմրիի մէջ, և աւելի տարածուած է Ռուսիոյ ներքին կողմեր, զի օրինօք չունի արգելք (1)։

Քաղաքի մէջ կայ շատ վարձու կառքեր որոշ և չափաւոր դիներով, որք կը փոխադրեն ղժողովուրդ վայրէ ի վայր և մինչև իսկ մէկ երկու ժամ հեռի ի քաղաքէ։

Ողէքսանդրապոլ չունի հնութիւն. ամեն բան նոր է և չինեալ 1828էն ասդին. միայն եկեղեցւոյ մէջ կայ հին զգեստներ, անօթներ և զարդեր. կայ նաև հնաւանդ աւելորդապաշտութիւնք ինչպէս շատ տեղեր։

Զուներով դրելի ինչ ի վերայ Կիւմրիի, շարունակեցինք մեր ճամբայ. նոյն օր մեկնելով 4-5 ժամէն հասանք ի Ղըպչաղ վանք յանուն Ս. Աստուածածին, և վայելեցինք հանդիստ վանուց օդի և կանոնաւորութեան շնորհիւ։

Ղըպչաղ է անուն մօտակայ համանուն գիւղի և կը համարուի ստորոտն Արագած լերին. գիւղի անունով կոչեն Ղըպչաղի վանք և երբեմն ալ Հառճոյ վանք. շին-

---

(1) Օսմանեան օրինագիրքը արգիլած է ստակով խաղալը, բայց Ճարդարոց օրէնք ոչ գոյ։ . . .

եալ է հայակապ եկեղեցին Զաքարիա սպասալարէ 1201 ին. զարմանալի է շինուածք եկեղեցւոյն՝ սրբատաշ յատուկ ներքնագաւիթով որոյ ձեղունն է տափարակ և ոչ կամարակերպ, քարեր կցեալ և ագուցեալ միմեանց հիանալի ճարտարութեամբ և ապա քանդակեալ ծաղկանկարիւք։

Այս վանք ունի մի վարժարան յանուն Ժառանգաւորաց ընդ տեսչութեամբ Տ. Յովսէփ արժանընտիր քահանային. աշակերտաք շրջակայ գիւղերէ և քաղաքէ թիւ 35 գիշերօթիկ, որոյ ծախք կը հայթայթէ մի ընկերութիւն։

Մեծ դրան դէմ մի ժայռի վրայ կայ մատուռ մի աւերակ՝ ճգնարան Սիմէօն Սինակեցւոյն (աւանդութեամբ)։ Ունի շատ արձանագրութիւնք եկեղեցւոյ մէջ և խորանի արտաքին ճակատը (1) մեծ դրերով։

Առաւօտեան ճամբորդեցինք գոհ մնալով վանքի բարեկարգութեանց և վայելեալ հիւրասիրութեանց. անցանք Արագած (2) լեռն (12,800 ոտք բարձր) որ

---

(1) Դժբաղդաբար կորուցեր եմ շատ մը այսպիսի արձանագրութեանց օրինակներ որ գրած էի կտոր կտոր թուղթերի վրայ. նոյնպէս Թուսահայոց խաղեր, առածներ, երգեր և ոտանաւորներ։

(2) Բնական արձանս լերին Արագածի, Հայկայ որդւոյն Արմենակի անուամբ, բարձրագոյն քան զամենայն լերինս բայ ի Մասիսէ, շեղջաձև և քառահերձ գագաթաթով իր հրաբուխովը կանուխէն կամ առաջին հրաբուխ հին աշխարհին, իր գետովը որ կոչի Միամոր կամ Շամբի ջուր, ուր կայ շատ եղջեր, (աւանդութեամբ) ասա ինկաւ Տրդատ իբր խոզաձև. Արագածի հարաւակողմն է Սարտարապատ, ընդարձակ և խորհրդաւոր գաւառն. իսկ մեք չունիմք առայժմ գրել ինչ. . .

կոչի Ալէքսէյ դուզ և է երկրորդ Մասիս. ունի պատմական շատ աւանդութիւնք։

Այս լեռան կիրճի անցքը խիստ երկիւղալի է աւազակներէ, որոյ սորոսորը կայ մի պահականոց և կազդներ (ձիաւոր զօրք) կը հսկեն, և ընկերացան մեզի տասնի չափ, ըստ հրամանի Կիւմրիի Դուլբէկին(1) (մուխթասարրիֆ). հասանք Պաշ ապարանի գիւղերէ Ալի քիւչիւկ անուն մի հայաբնակ գիւղ, որ մէկ ժամէն հաղիւ բարեհաճեցան տալ մեզի մի մի բնակարան մեր դրամներով (ինչպէս վերադարձնուս կրեցինք Ցամա կիրմէդ գիւղ մի այսպիսի չարչարանք Հայ Լուսաւորչական ժողովուրդից. այս կողմերի 100ի չափ Հայ գիւղացիք են Ջերմեռանդ, բայց իբր մնապաշտ և տմարդի մեզ կը չարչարեն մէկ գիշեր հիւր ընելու մեր դրամով, և մեր ձեռքեր ու աչքեր կը համբուրեն Ս. Միւռոն տեսած ըլլալնուս համար. բէ՛ւբ կեցցեն մեր երկրի գիւղացիք որ ունին Աբրահամեան հիւրասիրութիւն)։

Այն ծերունիք որ 1828էն դաղթած և դեռ ողջ են, կը պահեն Օսմանեան երկրի հիւրասիրութիւնը և հայրական գթութիւն կը տածէին մեր վրայ. ոմանք յուզեալ կարտասուէին և անյաղ կը հարցունէին իրենց բնիկ գիւղերը ու հայրենեաց առարկաները։

Այն գիւղէ մեկնելով այցելեցինք շատ գիւղեր և մի քանի աւերակ և նշանաւոր մենաստաններ։

1. Սաղմոսաց վանք կամ Սիոնի վանք. եկեղեցին

---

(1) Մեք ունէինք չորրորդ բանակի միւշիրէ և Կարնոյ վալիէ յատուկ յանձնագրեր (պույրուլտի), որ ներկայացինք Կիւմրի և ըստ այնմ հրաման խրկեց անդ։

կէս աւերակ, իսկ վանքը բոլորովին. Խորաձոր գետի մօտ գժուար ճանապարհաւ. (աւանդութեամբ) հոս եղած է գանձարան և ապաւէն պահպանութեան ի Հայս։

2. Եղիվարդ Ս. Լուսաւորիչ, ի հնումն նշանաւոր։ Եղիվարդ գիւղէ կէս ժամ հեռի, բոլորովին քայքայեալ, ուստի էր Մովսէս Բ. Կաթողիկոս որ շինեց Ցօմարն Հայկական 320 թուականին. Եղիվարդ գիւղ ոտս Արայի լեռան, քայքայեալ մնայ միայն եկեղեցին հոյակապ ութ անկիւնով կիսակործան գմբէթով, շինեալ Գ. Մամիկոնեանէ Է. դարու։ Այս գիւղի դաշտավայրն է ահեղատեսիլ, ուր մղեցաւ պատերազմն Արայի ընդ Շամիրամ թագուհւոյն Ասորւոց՝ Քրիստոսէ 2000 տարի առաջ. ապա Փոկաս կայսր ընդ Պարսից Է. դարու, և յետոյ Օսմանցիք ընդ Թահմազի կամ Նատր Շահի։

3. Յովհաննու Ս. Կարապետի վանք, ռամկօրէն Հաննա վանք, որ և Սիւղի կամ Սովի վանք, մեծ և ի հնումն անուանի, այժմ լքեալ, նախ շինեալ Ս. Լուսաւորչէ, և ապա նորոգեալ Մեծն Ներսիսէ, ունի բաղում արձանագրութիւնք եղծեալ։

Հոս էր (աւանդութեամբ) վարչական Քրիստոսի, և այլ նշխարհ սրբոց. Եկեղեցւոյ դրան վրայ կայ մի խաչ Լուսաւորչի հասակաւ, կրսէ Զաքարիա սարկաւագ պատմիչն։

Այս վանքէն կը տեսնէ կէս ժամ Մուղնի և Սերկևիլի գիւղ, ուր սպանեցին Վասակ Պահլաւունի՝ հայրն Գ. Մագիստրոսի։

Այս վանքի հիւսիսակողմն է Կարբի գիւղն հինգ աւերակ եկեղեցիներով, նոյնպէս մօտն է Ուղի գիւղ, ուր պահուած էր նշխար Սրբոյն Սարգսի զօրավարին

ձեռամբ Ս. Մեսրովպի, էր ուխտատեղի մինչ ԺԷ. դարս և տեսուչ նշանաւոր Ոսկան վարդապետն։

4. Մուղնի Ս. Գէորգի վանք, հոյակապ եկեղեցի, ընդարձակ շէնքեր, հիւրանոց, ամուր պարիսպներով ՀանՆավանքէն ասա փոխադրեալ է նշխարհ Սրբոյն Գէորգայ. (հոս տեսինք առաջին պտղատու ծառն, այդի և պարտէզ, որ վրիպած էր մեր աչքերից սկսեալ Երզընկայէ իբր 300 մղոն ճանապարհ)։

5. Օշական գիւղ, առապար Օշականի, ասա պատահեցաւ նշանաւոր դէպքն Վահան Մամիկոնեանի. ասա հանդչի Ս. Մեսրովպ թարգմանիչն Հայոց. շիրիմը գիւղի մօտն է զառիվայր մի բացադեայ տեղ. ոմանք ասեն եկեղեցւոյ մէջ թաղեր է Վահան Բ. Ամատունի. եկեղեցւոյ մօտ կայ աւերակք, ոմանք կարծեն ըլլալ ապարան և մահարձան Մեծին Վահանայ։

Այս գիւղի մօտն է փոքրիկ լիճն կոչեցեալ Այղըր կէօլի իբր անյատակ այսինքն խիստ խոր. այս գիւղ ունի մի գեղեցիկ կամուրջ եռասիւնման Մուղնիի կամուրջին։

6. Աշտարակ գիւղ, ունի 3 եկեղեցի և խաչ վէմք դամբանաց, գեղեցկատեսիլ և զուարճալի նման և միմեանց առաւել հրապուրիչ են Մուղնի Օշական և Աշտարակ գիւղերը, շէն և զարդարեալ պարտէզներով և ծառաստաններով։

Այս գիւղացի էր (Աշտարակեցի) Ներսէս Ե. մեծագործ Կաթողիկոսն որ կոչեցաւ «Պաշտպան Հայրենեաց» որոյ յաջորդեց Մատթէոս և այժմ (1868) Գէորգ Կաթողիկոսունք. հիմայ կը վերադառնամք դարձեալ Կիւմրի որոյ կցեցինք այս վանքեր և գիւղեր, և կերթանք Կիւմրիէն Անի...։

# ԴԱՄԱԿ Ը.

## Ա.Ն Ի

1868, Հոկտեմբեր.

Մեկնեցանք Աղէքսանդրապոլէ՝ անցնելով Ախուրեան գետն, սակաւ մի հանգիստ առինք մեր (Օսմանեան) գօրտօնը, որոյ պահապան զօրապետք և մաքսի պաշտօնեայք ընդունեցին զմեզ յարգանօք, և մեք զդացինք հանգստութիւն ընդ կոխեալ կրկին ի հող Օսմանեան բարեխնամ Պետութեան. յետ թափառելոյ իբր մի ամիս օտար տէրութեան երկիր որոյ բոլոր սովորութիւնք կերևէին մեզ տարբեր. որքան ալ կը դանէինք յարգ և համակրութիւն, դարձեալ կարծես սրտնեղութիւն մը կզգայինք, ինչպէս ծանօթ է օտար երկիր այցելողներու. Ախուրեան գետը անցնելով կարծեցինք հասած ըլլալ մեր հայրենիք.

Երեկոյին հասանք Պաշ շէօրէկել ի դաշտն Շիրակայ, ի տուն (1) Թաչոյ քէհեայ հին տանուտէր ցեղէ հարուստ երկրագործ աղդեցիկ և հիւրասէր անձին.

Կարաւանէն զատուած էինք արդէն ի Ս. Էջմիածին, այժմ ընկերնիս էր ընիկ Երիզացի և այժմ Կար-

---

(1) Զարմանալի տարբերութիւն Ախուրեանի երկու եղերաց գիւղերի Հայոց մէջ, միևնոյն եկեղեցւոյ զաւակների, միևնոյն ազգակցաց մէջ. անդ կը նեղուէինք մի բնակարան գտնելու, ասա կը դիմաւորեն իբրև բարեկամ իրենց տան հիւր ընելու.

սեցի Գէորգ էֆէնտի Էնրամճեան սիրելի և խոհական բարեկամնիս, և հօրեղբօրս որդին ընտանեօք։

Ճանապարհները շատ երկիւղալի էր, և ունէինք միայն մի ոստիկան (Կարսի)։ Թաչոյ քէհեան հաճեցաւ ընկերանալ մեզ և ապա մի Պարսիկ Ռէբէյեմ որ երբեմն ըրած է աւազակութիւն, և այլ մի Հայ աւելի հռչակաւոր կարիճ... ապա վստահ եղանք ճամբորդութեան որ գիւղացիք կը կարծէին խիստ վտանգաւոր, և Շիրակի գիւղերէ որ կանցնէինք, Հայեր կը ջանային համոզել զմեզ և դարձունել ի Կարս, «յայտնապէս դուք ձեզ վտանգի կը դնէք» ըսելով. բայց մեք մէկ անգամ մըտադիր և փափաքող, շարունակեցինք ճամբան վստահելով աւելի Աստուածային ողորմութեան քան թէ զօրաւոր ընկերաց, որ արդարև չեմք կրնար ուրանալ անոնց օգուտը. գողեր և աւազակներու լրտեսներ կուգային, և երբ կը դիտէին կօրագլուխ կը դառնային(1)։

Առաւօտուն կանուխ եղած էինք. Պաշ շէօրէկէլէն անցանք բոլոր դաշտն Շիրակայ շատ տեղեր ամայի և աւերակ. հասանք Անի. և ի՞նչ կը տեսնեմք։

Մի քանի ամայի շէնքեր, կոյտեր աւերակներ։

Յառաջ շատ զարմացայ թէ այս է այնքան հռչակեալ հեղ քաղաք. բայց շրջելով սկսեց նոր տպաւորութիւն ներգործել ի վերայ իմ և ընկերացս։

---

(1) Ոստիկանը Կարսի կառավարութենէն էր և այն կողմերից. Թաչոյ քէհեան շատ ազդեցիկ և պատկառելի էր ամբողջ Շիրակի. Էնրամճեան էֆէնտի արդէն մեծ նշանակութիւն ունէր Կարս և Շիրակ. թէրէքէմէ և Հայ կարիճներ ի վաղուց սարսափ ձգած էին այն կողմեր։

կը վայելէ կարդալ ողբ Շնորհալւոյն որ երգեաց ի վերայ Եդեսիոյ.

Արդ ողբացէք եկեղեցիք, հարսունք վերին յառագաստի. Քորք և եղբարք իմ սիրելիք, որք ընդհանուր կողմն աշխարհի։ Քաղաքք և գեօղք առհասարակ, ազգ և ազինք որ էք երկրի։ Հաւատացեալք Քրիստոսի, երկրպագուք սրբոյ Խաչի, և այլն։

Աշխարհի պատմութեան մէջ չը կայ այսպէս շուտ հռչակեալ և շուտ լքեալ մի քաղաք. 600 տարիէ ի վեր առարկայ եղած է պատմաբանից, և 60-70 տարիներէ ի վեր գրաւած է ուշադրութիւն Եւրոպոյ. բաղումք այցելեցին, քննեցին, երգեցին, զարմացան, տեղեկագրեցին, պատմեցին, բայց և ոչ մին կարողացաւ իր զենութիւնն կատարելութեան հասցնել (1), քանզի այս մի քանի աւերակ շէնքերու, դերբուկներու, պարսպաց, միակ մզկիթի, գեանուղւոյն և այլ վայրից պատմութիւնը լրացնելու համար պէտք է Հայր Ալիշանեանի և իր հետ մի քանի հնագէտներ անձամբ այցելել և ապա ձեռք առնուլ այն գրիչը որ ընթերցողաց սքանչացում և հայ գրականութեան մեծ փայլ տուած է ցարդ։

Մեք մնացինք միայն երկու օր և շրջեցանք հազիւ 16 ժամ, չափելով նաև մեր անկարողութիւն, ըն-

---

(1) Անիի վրայ ամենքէն ընդարձակ և սքանչելի կերպիւ գրած է Հ. Ալիշանեան իր Տիեզերական աշխարհագրութեան մէջ, և վերջերս հրատարակած Շիրակ անուն գործով, որ ցարդ չկրցինք տեսնել. Պոլիս և ոչ մի գրավաճառի քով չը կայ. ոմանք կըսեն թէ արդիլեալ է. մեք կը կարծեմք թէ սխալ ըլլալու է, վասն զի Հ. Ալիշան միշտ սիրած է Օսմանեան երկիրը և Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը, որոյ վրայ գրած է գովեստիւք։

թերցողը թող համարի իբր մի հարևանցի տեղեկութիւն զուրկ ամեն պարագայներէ. փափաքողք թող կարդան յիշեալ Շիրակը (եթէ գտնեն), Տիեզերական աշխարհագրութիւնը Օսմանեան Ի. երես 28-36 Բազմավէպը տպեալ ի Ս. Ղազար հատոր Դ. 324 և Է. 5, և այլ գրութիւնք որ ունին պատկերս մանրամասն տեղեկութեամբ։

Անի երբեմն շքեղաղարդ թագուհի քաղաքաց, բնակարան... և պատուար Այրարատ աշխարհի, իսկ այժմ պատսպարան բուերու, իժերու, գողերու, և բազմախոտ արօտավայր ոչխարաց և այլ կենդանեաց։

Անի 1001 եկեղեցիք և տասը բիւր (80,000) բնակարանք որ առակի կարգ անցած է հռչակմամբ, ինչպէս պարունակած էր ներկայ սահմանը. եթէ երթանք մինչև Քիւչիւկ Անի գիւղն, անհաւատալի պիտի թուի, քանզի Ե-Զ. դարու մէջ այսպէս անհետ եղած է նշմարք և դերբուկք անգամ դարձած են արօտավայր. հաւանականաբար կերևի թէ նուիրական և պաշտօնական շէնքերէ զատ միւսներն էին հողաշէն որ շուտով հաւասարեցան հողի։ Հող էիր անդրէն և ի հող դարձցիս...։

Անի է արևելեան կողմն Կարսի իբր 20 մղոնաւ, եղերս յաջակողման Ախուրեան գետի, ի վերայ քարուտ բարձրաւանդակի բարձր յերեսաց ծովու իբր 4500 ոտս. յատակագիծն է եռանկիւնաձև իբր թերակղզի. արևելից պատած է քարաժայռ ձորն, հարաւէն Ախուրեանը 2-300 ոտք խորութեամբ, արևմուտքը ընդարձակ ցամաքով Ծաղկոցաձորն, հիւսիսն խորթ և հարթ կըցեալ դաշտին Շիրակայ, որ մի մասն չունի ձոր կամ գետ, և է գլխաւոր անցք կամ իբրև կիրճ քաղաքին։

Ներկայ քաղաքի տրամադիծն է 1 մղոն երկայն և կէս մղոն լայն, բայց այս շրջանակէ դուրս ունէր սահման ինչպէս կը վկայէ նշմարք Քիւշիւկ Անի քրդաբնակ գիւղի, որ հեռի է իրր 2 մղոնաւ. կրնայ մակաբերուիլ Ներքին քաղաք կամ արտաքին քաղաք։ Առաջնոյն մէջ կը տեսնուին հոյակապ եկեղեցիք և այլ շէնքեր, հետեւութեամբ կրսեմ թէ Ներքին քաղաք էր տեղի ազնուապետութեան և արտաքին մասն ժողովրդեան, յորմէ բնաւ չի տեսնուիր աւերակ մը կամ դերբուկ մը բաց ի Քիւշիւկ Անի գիւղէն, որով արտաքին քաղաքի վրայ բառ մը անգամ գրելու առարկայ չունիմք, կը գրեմք միայն Ներքին քաղաքի վրայ։

Ճանապարհորդ մը՝ այցելելով Ներքին քաղաքը, պատշաճ կը համարէր հետեւեալ վերնագիրը գրել ի վերայ դրան Անւոյ, որ երգեց Ցանթէ քերթողահայրն Իտալացւոյ։

«Ընդ իս են մուտք ի Քաղաքն ցաւագին։

Եւ ապա կսկսի գրել.

«Մելամաղձիկ յոյժ զգացմունս ազդէ ի սիրտ տեսարան քաղաքիս այս անապատացելոյ. եկեղեցիք նորա լքեալք յուշ իմն այսպէս առնեն. եթէ ազգ հզօր քրիստոնեայ անկեալ է աստանօր ընդ բազմակրկին հարուածովք . . . . . .

Շինուածոցն անեղծ մնացութիւն՝ յերկրայս արկանէ զկիրս միայնութեան, և յանդգնութիւն՝ յանդգնութեան։ Ոչ այսպիսիս ներդործէ ի սիրտ ազդմունս տեսիլ նշխարեալ աւերակաց հնութեան զառանցելոց ժամանակաց, անկերպարան հողաբլուրք Բաբելոնի՝ երևին հանդոյնք կմա-

խաց մեռելոտուց. իսկ ամայացեալս այս և տակաւին կանգուն քաղաք, նմանեալ Թուի դիտական այն ինչ անշընչացելոյ, յորում դեռ ևս նշմարիցին տիպք կենդանական և այլն»։

Քաղաքի անուն համաձայն է Քէմախի անուան (Ա. նի) և պատմիչք չսասուգեցին դեռ թէ ե՞րբ շինեցաւ. ոմանք կարծեն Դ. դարու ըլլալ մի բերդ որ Ցրդատ պարդևեց Շիրակի հետ տանն Կամսարայ, ինչպանէ պայազատեցին Բագրատունիք Ը. դարու։

Ամրացոյց նախ Աշոտ մսակեր 783ին, և Աշոտ Գ. ըրաւ մայրաքաղաք Ժ. դարու, Սմբատ Բ. շինեց ներքին և արտաքին պարիսպները 964ին, զարդարեց եկեղեցիներով, որ եղև նաև աթոռ կաթողիկոսական։

Պարիսպներ ըսելով չիմանամք հասարակ պարիսպ, այլ արդիւնք բացառիկ ճարտարագիտութեան, մաքուր սրբատաշ գոյնզգոյն քարերով (կարմիր, սև, գորշ, դեղնագոյն, ճերմակ) բոլորշի, քառակուսի անկիւնաւոր տեղիս տեղիս կրկնայարկ և եռայարկ, և զարդարեալ դրուագ արձանագրութեամբ խաչարձան և ի վերայ դրան միոյ առիւծ և ինձ։

Երկու դուռ կերևի արտաքին պարսպի և հինգ դուռ ներքին պարսպի, որ կոչի միջնաբերդ. յետ պարբսպաց շինուածոց զարմանալիքն են՝

Ա. Գետնափոր ճանապարհը (թունել) քաղաքէն Ա. խուրեան դեպի ներքևէն շինուած իբր 6 մղոն (2 ժամ) ճանապարհաւ, քարակերտ աղիւսեայ կամարով (թոլոս). պատմիչք կը նմանցուցեն Թայմղի (ի Լոնտոն) գետնուղւոյն, մուտքն է ի մէջ Անիի և Երքն յանկոյս Ախուրեանի, այժմ խցուած է և տեղ տեղ փլած. տեղացիք կոչեն Կիտէր կէլմէզ սօլ։

Բ. Ծաղկաց ձորին խճախառ քարերու մէջ կարգաւ փորուած կայ շատ մը մատուռաձև խորշեր, ոմանք կարծեցին սենեակ (իրարու դուռնելով հաղորդակցութիւն ունենալուն համար) ոմանք փոքր տուներ բնակութեան, և ոմանք կարծեցին գերեզման. իսկ հաւանական դատան ինչպէս և մեք կարծեմք ըլլալ կրպակ, վաճառատուն, շատերու մէջ դարակի ձեւով խորշեր ըլլալուն և այլ մանրամասնութեանց համար։

Գ. Եկեղեցիք, որ դարուս սկիզբը 40ի չափ կերևէր կանգուն, այժմ հաղիւ 14 կայ, մնացորդք հազար ու մէկ եկեղեցեաց։

Նշանաւոր է Կաթողիկէ կամ Մայր Եկեղեցին (1), որ 110 ոտք երկայն և 72 ոտք լայն է համակ սրբատաշ և գունաւոր քարերով. քարերու շարք զետեղուած է այնպիսի ճարտարութեամբ մը որ ցարդ երևի միակտոր. հարաւային որմի արտաքին երեսի վրայ նկարեալ և քանդակեալ է աղաւնի, արծիւ և ծաղկունք։

Ներքին ձևը, հինգ աստիճանները, չորս խաչաձև սիւները, վեց որմասիւները և անոնց կամարները, գրմբէթը, կրկնակի մատուռ կամ աւանդատունք կրկնայարկ, խորանը և իր տասը խորշերը սքանչելի շինուածք է և գլուխ գործոց ճարտարապետութեան։

Այն հրաշակառոյց գմբէթը որ կործանեցաւ 1820ի ատենները, ունէր 92 ոտք բարձրութիւն և 28 ոտք բոլորակին տրամագծով. այս գմբէթէն կախուած էր այն

---

(1) Որոյ հիշգ նմանութեամբը շինած են Աղէքսանդրապոլի Հայոց նորաշէն եկեղեցին, թէև հին ճարտարութիւնք ունին առաւելութիւն։

նշանաւոր բիւրեղեայ ջահը բերեալ Հնդկաց աշխարհէ, և ի վերայ դմբէթին մարգաչափ արծաթեայ խաչ իբր պահապան քաղաքին . . . : Սոյն եկեղեցի հիմնարկեալ է Սմբատ Բ. է և աւարտեալ Կատրամիդէ դշխոյէ 1008–9 թուականին, աջակցութեամբ Սարգիս Կաթողիկոսի : Ունի բաղում արձանագրութիւնք :

Մայր եկեղեցիէն զատ կան նաև՝

1. Տիրամօր կամ Հռիփսիմեայ եկեղեցի :

2. Ս. Փրկիչ. շինեալ 1037ին Ապլղարիպէ, հօրեղբայր Գ. Մագիստրոսի :

3. Ս. Լուսաւորիչ, շինեալ 995ին Ապուղամրի որդի Գրիգորէ, հրամանաւ Գագիկայ :

4. Առաքելոց եկեղեցի, շինեալ 1033ին :

5. Վանք կամ մենաստան Ս. Լուսաւորչի, եկեղեցին շինեալ 1215ին, նորափայլ քան զայլ եկեղեցիս, որ այժմ կոչի Նագշի քիլիսէ, ունի արձանագիրք յունարէն և արձանք որ գրեալ է 1320 և 1344 թուականներով. ի հնումն առատ էր մատուռ Ս. Աստուածածնի :

6. (Խաչի) եկեղեցի քառակուսի խաչաձև ներքին և արտաքին տեսարանով անսիւն և դմբէթաւոր, արձանագիր եղծեալ :

7. Հովիւի (Զօպան քիլիսէսի) (1) արտաքոյ պարսպայ

---

(1) Աւանդութեամբ հովիւի կինը մայր եկեղեցին երթալով տեղ չեն տար, սրտակոտոր կը դառնայ և կը պատմէ ամուսնոյն. ամուսինը որ էր հովիւ, կը շինէ այս եկեղեցին իր քսակէն և կինը կըլլայ նոյն եկեղեցւոյ դիւցազնուհին. կեցցե՜ն, հանողը եկեղեցի մը կը շինէր և ոչ օք չէր մտաբերեր դպրոց կամ արուեստանոց շինելու կամ ապագան մտածելու :

փոքրիկ եկեղեցի. կան այլ և այլ 6-7 նշմարք և կոյակ եկեղեցեաց որք խափանեալ կործաներ են և չէ յայտ ձև և այլ ինչ։ Այս ամեն եկեղեցիք շինուած են մին առաւել ճարտարութեամբ քան զմիւսն որ չեմ կարող նկարագրել։

Միակ մզկիթն է մօտ Առաքելոց եկեղեցւոյն, երկայնաձև և քառակուսի, կամարակապ երկու կարգ սիւներով, ներքնատուն և աշտարակ (մինարէ) ութանկիւնի չէնք սքանչելի, ճարտարութիւն նման եկեղեցւոյ շինուածոց. ի վերայ որմին արևմտեան կայ արձանագիր Պարսկերէն.

«Էպուսայիտ Պահատուր Խան հրամայէ մաքսաւորաց չը նեղել զԺողովուրդն Ինիի»։ (Թուի գրեալ 1319։)

Այս մզկիթի և Առաքելոց եկեղեցւոյն մօտն է մեծ սալայատակն կամարակապ և աստիճանաւոր, ճանապարհ զառիվայր ի գետափն Ախուրեանի, ուր կայ նաև մի եկեղեցի երկու մատուռներով անգիր (աւանդութեամբ) շինեալ դշխոյէ միոյ որոյ ապարանքի աւերակ նշմարին ի մօտ։

Պալատն է ահաւոր տեսարան, թանձր և հզօր պարսպօք բերդաձև, թէև չունի նրբութիւն միւս շինուածոց. բայց հաստատուն իրբև բերդ թխագոյն քարերով սառակիներան ոճով. երկու կողմն Ծաղկոցաձորէն բարձրացեր է պարիսպը ահեղատեսիլ և մեծ դուռն է ի վերայ քաղաքի դէպ արևելք որ բարձր է Ծաղկոցաձորէն իրբ երկու յարկ, և յետ այնու շինեալ բարձր 2-3 յարկ, որոց ներքին յարկերն են իրբ գետնափոր. ոմանք կարծեն բոլոր քաղաքի յատակը ըլլալ գետնափոր հաղորդ պալատան. արտաքին տեսքը թէև չէ վա-

յելուչ, բայց ի վերայ մեծ դրան կայ գեղեցիկ և խիտ դրուագ, խաչարձան, զարդ և այլն, և ի վերայ հիւսիսային պարսպի քանդակեալ պատկեր զինուորակերպ մարդոյ կոտրած գլուխով, կը ձևացնէ ի ձեռին ունել դքաղաքն. ներքին կողմն է բոլորովին աւերակ, ձեղունք և պատուհանք քանդեալ, չէ յայտ թէ ի՞նչ էր ներքին վայելչութիւն, թէև կը պահէ իր վեհութիւն։

Անիի մեծ աշտարակը իբրև միջավայր քաղաքին և հուպ Մայր եկեղեցւոյն, գաղաթն է կործանեալ, ամբառնայ ութանկիւնի 84 քար աստիճանով, ուրկից կերևի քաղաքի ամբողջութիւնը, ահեղատեսիլ աւերակները, տխուր դաշտը, և օձապտոյտ Ախուրեանը, ուր նստած կերգէինք . . . . . .

Բաղնիքն ալ թէև աւերակ, դարձեալ կը ցուցնէ իր ճարտարաշինութիւնը և կը նշմարին դեռ ծորակք աւազանաց։

Կամուրջի գլուխները Ախուրեանի երկու կողմը կերևի. կամուրջն է կործանեալ. կայ նաև մեծ աւազան մը որ իբր ի հեռուստ կենդանեաց կաթերը խողովակներու միջոցաւ կը լցուի հոս և կը բաժնուի եղեր, որոյ գլուխն է արտաքոյ սահմանի Ծաղկաձորէն վեր լերան վրայ գտնուած մի փոքր աւազան. երկուքի հեռաւորութիւն իբր մէկ ժամու ճանապարհ։

Հոս լմնցաւ Անիի պատմութիւնը։ Անի ե՞րբ եղաւ աւերակ՝ որոշ չգիտցուիր. 1045ին մատնութեամբ ինկաւ ի ձեռս Յունաց, 1064ին ի ձեռս Ալփարսլանի, քանիցս ալ Պարսից և Թաթարաց։

Մեծ գետնաշարժը եղաւ 1319ին (թէև եկեղեցւոյ արձանագրութիւնք կը հաստին ոմանք մինչ 1348)։

Անիի գաղթականութիւնը կսկսի 1045 ին և կը հասնի մինչ ի կէսն ԺԴ. դարուն։

Անին աւերակ ըլլալէ վերջ ինկաւ ի ձեռն Օսմանեան բարեգութ կայսրութեան՝ Կարսի և շրջակայից հետ, և այժմ է կալուած Խաթուն օղլի մեծ գերդաստանին (1)։

Անիի գաղթականութիւնը քանի մը անգամ տեղի ունեցաւ. ոմանք եօթը և ութ գաղթականութիւն կը գրեն (2)։ (Տես Գաղթականութիւն Անի քաղաքի տետրակը։)

Գաղթականք ցրուեցան Վասպուրական, Նախիջեւան, Ակն և Կիլիկիա. գացին նաև մեծ բազմութեամբ Ռուսիա, Լեհաստան, Հնդկաստան, Հունգարիա, Ռումանիա և այլուր։

Ահա պտուղ անիսոհեմութեան, որ այսպիսի մի հոյակապ քաղաք ոչնչացաւ յամօթ և ի զղջումն ժողովրդեան որք սոնքացան յղփացան մեծապանծութեամբ և գրգռեցին զբարկութիւն տիրոջաց, և առաւել ցասումն Երկնաւորին. սասանեցաւ կործանեցաւ և եղաւ հաւասար հողոյ՝ յապշութիւն դեռնապանծ միտքերու, եղև

---

(1) Սոյն գերդաստանի անդամք են նշանաւոր անձինք, Արսլան փաշայ, Մէյտէդ պէյ, և այժմ վէզիր Խամայիլ Հաղդի փաշայ (Գուրտ կոչեցեալ), Եուսուֆ փաշայ և այլն, բազմաթիւ անդամք և աղգականք։

(2) Օտար երկիր գաղթող Հայք բոլորովին կորսուեցան, չի մնաց աղգութիւն և լեզու. հազիւ նշմարին մնացորդք մի քանի տեղեր խիստ սակաւաթիւ. Օսմանեան երկիրը մնացող Հայեր ցարդ պահած են իրենց լեզուն և կրօնքը, և կապրին իբրև Հայ։

հօտից հանդրուան և խոտավայր այն նուիրական քաղաք որ իրաւամբ կը մեղադրէ Հ. Ալիշան։

Ուստի երախտագէտ ըլլանք այն պատմիչներու և ճամբորդներու որ գրեցին, գծեցին, գէթ աւերակաց ողբալի յիշատակը թողուցին մեզի, 1001 եկեղեցի և այնքան սրբազան անօթք և այնքան օրհնութիւնք չը կրցին ազատել կործանումէ այս քաղաք, քանզի կը պակսէր գիտութիւն, ուղղութիւն, միութիւն և ի սրտէ Աստուածպաշտութիւն. շատեր եղած էին շահախնդիր, փոքր մաս մը կը մնացէր Ժողովուրդի իրաւունք և ազգատի օգուտ. կրօնականաց մէկ մասը փառք և շահ կը մնացէր, իշխաններէ ոմանք իրարու ձեռքէ փառք և երկիր գրաւելու կաշխատէին, մատնէին զմիմեանս և դաւէին, օտարներ գրգռէին իրենց շահերու համար. ի՞նչ իրաւամբ պիտի մեղադրենք ուրիշը, քանի որ «կորուստ քոյ ի քէն է։»

Դժբա՛խտ Անի, այնպիսի մը կործանեցաւ որ անդունդներու հաւասար եղաւ. կարծեմ ով որ ալ ըլլայ անձամբ այցելող, պիտի մեղադրէ, որովհետև կը յուզուի, կը բարկանայ. . . . . .

Անիէն հեռի է իբր 7 մղոն Խոշավանք կամ Հոռոմոսի վանք յեղերս Ախուրեանի, որոյ վրայ ունէի գրելիք, յակամայս կը թողում ապագայի, 1868 էն վերջ տեղի ունեցած կարևոր անցքերու հետ օր մը գրելու յուսով, և կը դառնամք ի Կարս, տխուր մտածութեամբ, նման երազէ արթնցողներու. . . . .։

# ՆԱՄԱԿ Թ.

## ԿԱՐՍ

1868, Սեպտեմբեր.

Սեպտեմբերի մէջ Կարինէ հասած էինք Կարս, ուր մնալով երկու երեք օր մեկնած էինք դէպ ի Ս. Էջմիածին. վերադարձնուս Անիէն եկանք դարձեալ ի Կարս Հոկտեմբերի մէջ, մնալով դարձեալ մի քանի օր մեկնեցանք ի Կարին։

Կարս կամ Գարս և Ղարս էր երբեմն քաղաք Կարուց կամ Վանանդ. երբ և ո՞վ շինելը յայտնի չէ.

Քաղաք կրկնապարիսպ ամուր բերդով, և մեծ համանուն դեռով, որ ի նախնեաց կոչէր Մայր մեծ, դըլուխն է Զըլաբը կէօլ՝ որ էր մեծագոյն լիճ հիւսիսային Հայոց, միանալով ընդ Կարս գետի և ապա խառնի Ա. խուրեան (Արփաչայ)։

Կարսի սահմանակից են Շիրակ, Բասէն, Արտահան, Կիւմրի, Զըլաբը, Կաղզուան և այլն։

Երբեմն պայծառացաւ պայազատութեամբ Բագրատունեաց Հայոց և Վրաց, որք կոչէին Կարսի քաղաքի (Վրացերէն՝ դրան քաղաք) 961էն մինչ 1064 ինքնագլուխ էին թագաւորք Վանանդայ կամ Կարսոյ կոչեցեալք։

Գագիկ վաճառեաց զԿարս Հոռոմոց և ինքն գնաց պանդխտութեան։

Յոյներէ գրաւեցին Վրացիք, Թաթարք, Թիմուրլէնկ (կաղ) Օսմանեանք, Ռուսք, ի վերջոյ մնաց ի ձեռս

Օսմանեան Օգոստափառ Կայսրութեան և եղև միութեան սարքիութիւն ընդ իշխանութեամբ Երդրումի, և նստի այժմ (1868) Էմին փաշա Կարնեցի որ սիրելի է ժողովրդեան։

1828ին և 1855ին Եօթնամսեայ պաշարմամբ Ռուսք դրաւեցին։ 1856ի Բարիզեան դաշնադրութեամբ անբաժան մնաց ի ձեռս Կայսրութեան Օսմանեան։

Բերդն է ամուր և հին որ ամբառնայ անջատեալ բլուրով մը հուպ քաղաքին, շէնք բարձր և արհեստաւոր, բուրգերով և քանդակներով. կայ Հայ և Վրացի դրեր մինչ 1234 թուական։

Այս բերդ շատ անգամ տկարացած և զօրացած է։ Գրբրմի պատերազմին Դեմիուդօֆ անուն Ռուսաց զօրապետը յարձակումմ մը ըրաւ և կորսնցուց 12,000 ռուսական զօրքեր, որ 12 դերեզմաններու մէջ կը հանդչին Կարսի մօտը, վերջապէս չը կրցին առնել Կարսը մինչև որ պաշարմամբ ըրին սովամահ։

Ունի մի քանի կամուրջ, որոց մին՝ բերդը քաղաքին հետ կը միացնէ. այժմ նորոգուած է և շրջակայքն շինուած է նոր ամրութիւնք ռազմական ձևերով։

Նշանաւոր է հոյակապ մզկիթն բոլորշի բաղմանկիւն արտաքուստ և խաչաձև ի ներքուստ, գեղեցիկ դմբեթաւ որ ամբառնայ առանց սիւնի. դմբեթի բոլորն է քանդակեալ 12 պատկերներ (աւանդութեամբ) Առաքելոց։

Այս մզկիթ շինեալ է 942 թուականին որ եղեր է առարկայ ի մէջ Աբբասայ և Եդեսացոց Բէր թագաւորին վասն գեղեցկութեան և նշանաւորութեան շէնքին։

Հնուն էր շէն և բաղմամարդ, այժմ անկեալ և

բքեալ կէս աւերակ. առևտուրը կործանած, ժողովուրդը պաղած, շէնքերը անհաստատ, փողոցները նեղ և անմաքուր, և որ աւելի գէշն է՝ բոլոր աղտեղութիւնք կերթան ի գետ որ միակ ջուրն է Կարսի. Թէև ունի կարօտութիւն բարեկարգելու, բայց բնաւ չեմք կրնար մեղադրել տեղական կառավարութիւնը և ոչ ալ ժողովուրդը (որ հազիւ կելլայ 1500 տուն բնակիչ, 150ը Հայ, 50ը Հռոմէական և 1300ը Թուրք), քանի որ միշտ նշաւակ եղած է պատերազմի (1) արիւնհեղութեանց, քաղաքի և բոլորի հողերը կարմրած է մարդոց արիւնով, եթէ նոր անուն մը դնել հարկ ըլլար, պիտի կոչէի Արեան քաղաք։

Կարսը չունի ուրիշ յիշատակելու արժանի բան մի՝ բաց ի իր հնութիւններէն և թափուած արիւններէն.

Հայք ունին մի վարժարան, մի դպրոց և Առաջնորդարան, ամենքն ալ միջակ։

Պաշ Շէօրէկէլ. որ ի հնումն կոչէր Շիրակաւան, Եղերս Ախուրեանի, ուր նախ նստան Բագրատունիք, երբեմն կոչէին Երազգաւոր։

---

(1) Պատերա՛զմ, անիծեա՛լ պատերազմ, երկնից պատուհասներու ամենէն սաստկագոյնը, ոչ մահտարաժամի կը նմանի և ոչ ուրիշ պատուհասաց, կը քանդէ, կաւերէ, և մարդոց արիւնները գետի պէս կը հոսեցնէ. ա՜հ, ե՞րբ պիտի վերնար աշխարհէս այս աղետալի գործ, եւ չափ ու սահման պիտի ունենար երկրի իշխանաց փառասիրութիւն... գովելի է մեր Օգոստափառ Սուլթանի խաղաղասիրութիւն որ միշտ կը խորշի պատերազմներէ։

Շիրակ առնուած է շատակեր Շարայի անունէն, Հայկայ թոռների օրերէն։

Շիրակաւանի եկեղեցին շինած է Սմբատ Ա. 897ին, տաճարն կիսականգուն. Շիրակի շատ մը գիւղեր կայ կիսակործան եկեղեցիք, ոմանք կրկնայարկ. ներքնայարկը աղօթատեղի և վրան ապաւէն պաշտպանութեան ընդդէմ թշնամեաց

Շիրակ, Զարիշատ և Կարսի դաշտ երբեմն կըլլայ այնքան առատ բերք (ցորեն դարի) ինչպէս այս տարի (1868), որ 240 օխայ ցորենը 30 և 200 օխայ դարին 16 ղրուշի կը ծախուի, որ տեղացիք կըսեն ոսպամաք։

Այս գիւղերը մեք կը գնեինք 12 օխայ դարին 40 փարայի՝ մէճիտիէն 25էն, որ կը բաւէր մեր 4 ձիերուս իսկ երբեմն կրլլայ ասվ, կը բարձրանայ գին ը տասնապատիկ և քսանապատիկ՝ ի պատճառս (անիծեալ) պատերազմաց

Այս կողմերն ալ չունի այգի և պարտէզ և ոչ ծառատան. կլիման ցուրտ է զի էրզրում. Կարսի պտուղները կուգայ Կաղզուանէ որ խիստ նշանաւոր է իր այգիներով, ի հնումն էր Կաղզուան կամ Զալտրբան, երասխաձոր և Հին Արշարունիք, որ և կոչէր Գարեղեան գաւառ։

Ահա այսքան էր Կարսի պատմութիւնին, որ քիչ ախորութիւն չի տար ճանչորդի. այժմ կանցնիմք Բասենն։

## ՆԱՄԱԿ Ժ.

### ԲԱՍԵՆ Ի ՎԱՆԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1880. ցվերջն Հոկտեմբերի.

Կարինէն մեկնելով անցանք Բասենի կեդրոնէն (Հասան գալէ) Քէօփրի քէօյ, Ամանամէր, Եէնի քէօյ կայլն, վերադարձին եկանք դարձեալ Սօղանլիի մեծ անտառը, և կիրճը անցնելով Վերիշան, Գարա ուրղան, Պատժըվան գիւղերէն հասանք ի վանս Ս. Աստուածածնի միակ մենաստան Բասենի, ուրիշ անգամներ այցելեցի Հերթէվ մեծ գիւղն և մի քանի ուրիշ գիւղեր. Բասեն քանիցս եղած է կոխան պատերազմաց։

Բասէն է վիճակ գայմէգամութեան ընդ իշխանութեամբ Կարնոյ վալիին՝ բաժանեալ վերին և ստորին (իւլեա, սիւֆլա) անուամբ. ունի գիւղս աւելի քան 150, ընդարձակ լեռնադաշտեր և հովիտներ. սահմանն է արեւելից Սօղանլի լերամբ Կարս, արևմտեանը Էրզրում, հարաւն Քէօսէ տաղ Շահեօլ լերամբ, և հիւսիսն Քիրէճլու Ադմէզրէ լեռ։

Գլխաւոր աւանն է Հասան գալէ, որ է կեդրոն կառավարութեան հեռի 6 ժամ Կարինէ. ունի մի դեռատակ համանուն (Բասեն սուլի), ի հնումն Մուրց կամ Մուրցամոր, որ երթայ և խառնի յԵրասխ (Արագս, Տճ. Արաղ։)

Կայ նաև երեք ջերմուկ բաղանեաց (կիւճէ), մին

խիստ տաք ջրով. չէ կարելի մնալ այս ջերմուկ աւելի քան ղեռինդ վայրկեան վասն սաստիկ ջերմութեան (1).

Հասան դալէ է աւան պարսպապատ հնօրեայ մի բերդով։ Ի վերայ ճանապարհին Էրզրում-Կարսի։ Հայք գաղթելով 1828ին, այժմ են սակաւաթիւ մի գաղթականութիւն՝ միակ եկեղեցեաւ. կայ հնօրեայ մզկիթներ և մի նշանաւոր դամբան (թիւրպէ) որ ունի նաև Ռէ++է (աղքատաց կերակրելու տեղ)

Այս դամբան կը վերաբերի Իսմայիլ Հաղդի էֆէնտի անուն անձին, որոյ անուն հռչակեալ է 1720էն սկսեալ ընդ ամենայն Իսլամ Ժողովրդեան. ունի մի հեղինակութիւն Մէ-ոլէֆէ-Ռ անուամբ որ կը ճառէ Աստուածաբանութեան, փիլիսոփայութեան և բնական գաղտնեաց վրայ, և ինքը կը յարգուի իբր սրբակրօն և նուիրական մի անձ, շատեր ուխտի կերթան գերեզմանի նորա, որոյ սերունդք կայ այժմ, որք են բարի անձինք. մեծ սէր կը յայտնեն Հայ ժողովրդեան և կը պաշտպանեն (2)։

---

(1) Այս և այլ ջերմուկները անգին գանձեր են երկրի. քանի՜ կերպ հիւանդութեանց բնական դարման. Եւրոպայ եւ Ռուսիա մեծ յարդ տուած է այս ջերմուկներու. մեր երկրի մէջ միայն Պրուսայի ջերմուկներն են հռչակեալ, և բաղումք մնան անծանօթ։

(2) Տեղացիք աւանդութեամբ կը պատմեն։ Ի կենդանութեան Իպրահիմ Հաղդի էֆէնտիի, Էրզրումի Խ-Լ-մ+ կը հրաւիրեն ղ-ծ-ն, և կը խրկեն միակ ձի առ Հայ մշակաւ. խօսման Հասան դալէէն ձին կը նստի և Հայ մշակը հետեւակ կուգայ մինչի Կէսն ճանապարհին, ուր խօսման իջնելով հրաման կընէ և կստիպէ որ Հայ մշակը նստի ի ձի։ Կարնոյ մօտ դիմա-

Հասան գալէի գէմն է Հէրթէվ անուն մեծ գիւղն (1) ուր կայ բազում Հայ ընակիչ և ի վերայ ճանապարհին Կարնայ-Խնուսի։

Հասան գալէէ 7 մղոն գէպ արևելս է գիւղն Քէօրի քէօյ, ի հնումն Վաղարշաւան, և որպէս մեծէն կանցնի Երասխը և հոն է այն նշանաւոր կամուրջն Հուվիւի (Զօպան քէօրիւի) զոր կառոյց Վաղարշ՝ հաւ մեծին Տրդատայ, որ վայրն է իւր ծննդեան։

Մնացորդք երևին այն մեծ կարաւանատան որ ասեն չինեալ ի Գենացւոյ (Ճենովացիք)։

Կամուրջի երկայնութիւնն է 700 և լայնութիւնը 30. է մեծ և ճարտար շինուածք որոյ մի կամարն կործանեալ է և քանիցս չինեցին կրկին կը կործանի. ի վերայ կամուրջի պատմեն տեղացիք բազում աւանդութիւնք և առասպելք

---

ւորողք կը տեսնեն որ Հայը ձի նստած եւ խօճան կը քալէ ոտքով, սաստիկ կը բարկանան, և մշակի տէրը կը խորհի քիչ մը վերջ սպաննել զՀայ մշակն, որ խօճայի պէս մի ձերունի և սուրբ մարդը կը չարչարէ հետիոտն քալեցնելով ինք բազմած է ի ձի. Խօճան նշմարելով կըսէ. բնաւ իրաւունք չունիք Հայ ընկերս նախատելու. մեք երկոքին յԱստուծոյ ստեղծեալք՝ ունէինք միայն մի գրաստ, մինչ կէսն ճանապարհի նստայ ես և կէսէն ասա տուի անոր. միթէ այսպէս չէ՞ օրէնք և արդարութիւն. միթէ անիրաւութիւն ըրած չը պիտի՞ ըլլայի եթէ 6 ժամ ամբողջովին քալեցնէի զնա։

(1) Բնիկ այս գիւղացի է Մէլիք շահ անուն հռչակաւոր անձը, որ ցարդ վարած է կեանք փիլիսոփայական և այցելած է Եւրոպա և այլն։

Մուրցամոր (Բասեն գետ) և Երասխի հարաւակողմն է աւերակն Օկոմի գիւղի. (ի դարս ԺԱ.) Օկոմիի արևմտեան կողմն է Եաղան գիւղ 60 տուն Հայ բնակչօք, որոյ մօտն երևի աւերակք հին շինուածոց։

Բասեն Ջրոյն աջակողմն է, բերդն Աւնկայ կամ Օնիկ շինուած զարմանալի և աւերեալ Լէնկթիմուրէ (1)։

Ջրամբարք ցամաք և սենեակք ինչ ի վերայ քարաբլրոյն. որ կոչի Ճիվան գալէ, է ուխտատեղի ռամկաց. ատ և շրջակայս գտանին սակաւ Հայք Քրիստակրօն (2) Գէյվերան չէօլլի և Զէհերկան կամ Զահերկան գիւղերով, և ի մօտս լերինք ուրեք անճաւք ձեռակերտ, որ կոչի Գրբդ բէնճէրէ, այժմ է գոմ անասնոց։

Ստորին Բասենի գլխաւոր գիւղերն են Խօրասան և Զարս որ ունի մի ջերմուկ։

Ադմէղրէ լեռն է անուանի բերդն Քէօր օղլու-է՝ Պօլուի գիւղացնին(3) որ ունի երգս և բաղում պատմութիւն քաջութեան՝ առարկայ վիպասանից։

Երասխի կամուրջի մօտ մեք կերգէինք.

Մայր Արագսի ափերով, քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ, ալեաց մէջը պտրում եմ. և այլն։

---

(1) Այս մարդուն շինածը բնաւ չը լսեցինք. ուր որ գացեր է՝ քանդելու աւերելու մեծ փոյթ տարեր է։

(2) Որոց աղանդք և սովորութիւնք կցեալ է Տաւրոսի Քուրդ ցեղերու և Արաբիոյ այլ աղանդաւորաց պատմութեան հետ։

(3) Քէօր օղլուի խաղերը աշըգներու աղը համարուած է, և այժմ Պոլսոյ թատրոններն իսկ կը ներկայացնեն Քէօր օղլիի երգեր, թատերգութիւն. ԺԷ. դարու մարդ, և շատ տեղեր ունի. աշտարակներ իր անուամբ։

Երբոր հասանք Քէօր օղլի բերդի դէմ, մեր Ջորեպան Հայ կարիճը սկսաւ.

Քէօր օղլի ըմ ջամլի պէլսէ կեղէրըմ,
Ալթուն թօքուղ իլէ գաֆան էղէրըմ, ևայլն։

Խօրասան գիւղի արևելից հիւսիսակողմն է և Երասխի հարաւը Մանազկերտ կամ Մժնկերտ, երբեմն քաղաք Եպիսկոպոսանիստ. ունի նաև գիւղեր Ամրադորմ, Գումաճոր, Տելի պապա, Սադարան և այլն։

Բասենի միակ վանքն է Ս. Աստուածածին՝ ի հիւսիսն Հասան գալէի և 7 ժամ հեռի Էրզրումէ, գեղեցիկ դիրքով և շատ մը աւերակ շէնքերով. վանահայրը և վիճակի առաջնորդն է Տիմոթէոս Վարդապետ՝ ընդ իշխանութեամբ Կարնոյ Արքեպիսկոպոսին. այս վանքս նման այլ վանօրէից մեայ անբարեկարգ՝ հեռի իր նպատակէն, մինչդեռ կարելի է բարգաւաճիլ և փայլիլ իւր հողերով, սար կրնայ ըլլալ առատ բերք, կրնայ պահուիլ բազում ոչխար և այլ կենդանիք նոյնպէս փեթակ ծառաստան և այլն. հոս է Գ. Մագիստրոսի գերեզմանը։

Բասենի անտառն է Սօղանլիի մեծ անտառը որ այս ցրտաշունչ քաղաքները կը լեցնէ իւր եղևինի փայտերով՝ իւր ծառերն են շատ երկար, մեծ և մաքուր և այնչափ առատ որ կը լիացնէ Էրզրումը, Բասենը, Խնուսը Կարսը, և մինչև իսկ Երբեմն կերթայ մինչև Կիւմրի և Էջմիածին։

Բասենի գիւղերը բնաւ չը կայ պարտէզ կամ այգի և կամ անպտուղ ծառեր. ինչպէս որ է ժողովուրդը մեացեր է անհոգ այս մասին։

Բասեն ընդարձակ երկիր է մշակութեան և կեդրոն երկրագործութեան. ունի առատ բերք, բայց մեացած

է անտերունչ. ժողովուրդի մէջ թէև կայ հարուստ երկրագործներ, իսկ աւելի շատ է աղքատը վատն դի տգէտ է, ուսմունք չը կայ, խրատտու չը կայ, տիպող չը կայ։ Բասեն աւելի ընդարձակ է Շիրակէն և Դերջանէն, բայց դժբաղդաբար լքեալ է և ոչ ոք ունի ուշադրութիւն։

Ես աղէկ գիտեմ որ մինչև իսկ պատմութիւնը անդամ լսելու չը պիտի ախորժի ընթերցողը և ձանձրոյթ պիտի զգայ. թէև բատ ինձ Բասեն և Դերջան և ասանց նման երկրագործութեան կեդրոնները առաւել և առաւելագոյն է քան զմիւս քաղաքները։

Բասենը, Խնուսը և Դերջանը կրնան շինել մի քանի էրզրումներ, Երզնկայներ, բայց վերջինք չեն կրնար շինել առաջնոյ մին։

Մեր ժողովուրդը դեռ ևս յարդ չի տար երկրագործութեան, որովհետև փայլուն չէ, նոր չէ. առանց աշխատութեան չըլլար. խմբատակութիւն չը կայ երկրագործութեան մէջ։

Լուսաւորեալ աշխարհ լաւ ըմբռնած է որ միայն երկրագործութիւնն է աշխարհը սնուցանող, երկրագործութիւնն է 1500 միլիոն մարդիկը, անթիւ անհամար կենդանիները կերակրողը. երկրագործութիւնն է հարբստութեան աղբիւր, հաստատուն և միշտ կենդանի ստացուածք. դժբախտաբար այս պատուական արհեստը դեռ կը մնայ լքեալ. գիւղացին չը գիտեր յառաջ տանելու, քաղաքացին չի հաճիր ձեռնարկելու. դեռ ևս բոլոր գաւառները Նոյի որդւոց գործիքներով կը մշակեն երկիր. անցած 5000 տարիները օգնած չեն մեր երկրագործութեան. Եւրոպայ և Ամերիկայ հազար տեսակ գործիներ կը հնարեն և իրենց բերքերը աշխարհ

կը տարածեն, մեք դեռ ևս մեզ կշտացնելու չափ բերք չեմք կրնար հանել, ի՞նչ է ասոր պատճառ, պատասխանն է երկար . . . . . .

Բասենի կրթական վիճակ տխուր է, արդէն ըսելու հարկ չը կայ, մեր գիւղերի ամենքն ալ միաձև է խիստ քիչ տարբերութեամբ։

Ի՞նչպէս յեղաշրջելու է գիւղացոյ վիճակ թէ դրժուար և թէ դիւրին, խելքս հասածին չափ պիտի բացատրեմ գիւղական ծրագրիս մէջ։ Բասենի վրայ գիտցածնիս, տեսածնիս և կարդացածնիս այսչափ էր որ լրացաւ Ս. Աստուածածնի վանք, ուր մնալով գիշերն հանգիստ առաւօտուն Հայր Սուրբի պատրաստած նախաճաշը (որ կը բաղկանար պատուական սէր միքանի տեսակներով, ճերմակ և անհալ մեղր (օղու-ի պէս) կարագ իւղ խիստ մաքուր, անարատ (1) կաթ, մածուն և պանիր է) փառաւոր կերպիւ ճաշակելէ վերջ. մնաս բարեաւ ըսելով մեկնեցանք, և ահա լրացուցած եղանք 1868 թուականի ճամբորդութիւններս ընորհիւ Աստուծոյ ողորմութեան գնացինք և դարձանք անվնաս, որ տեղիս տեղիս էր վտանգալից և երկիւղալի,

---

(1) Գօլսոյ ծախուած խառնուրդով Սիպիր եաղիին, կեսէն քիչ պակաս ջուրով կաթն, արհեստներով չինած պանիրին, սերին, մածունին չի նմանիր Հայաստանի բերքեր։

## ԵԱՄԱԿ ԺԵ.

Կ. Պոլիս 1878

Կարինէ մեկնեցանք 1877 Դեկտեմբեր 16 ին, եղանակն էր ցուրտ ձմեռ, ուտելիք և վառելիք թանկ, մէկ օխայ փայտն 40 փարայ, հացն 4 դրչ. և այլն սոյն կարգի։

Ռուսիոյ բանակը պաշարած էր Կարինը մինչև դաշտը. գիւղերը, միայն Իլիճէ գիւղն էր մեր ղօրաց ձեռք. պաշտօնակից ընկերս էր Խաչատուր Խան էֆ. Ց. Ներսիսեան։ Զիւներու շատութենէն, ճանապարհի երկիւղէն շատ դժուարութեամբ հասանք Ցրապիզոն՝ ուր դարձան պէս էր, մնալով երեք չորս օր մոռանք շ-դենաւ Աւստրիական (Կալամեայ անուն), Ցրապիզոնէ մեկնելուս սկսեց ալեկոծութիւնն մինչև Ինեղուց Պոս. ֆորի ուր հազիւ կրցաւ կանք առնուլ ութերրորդ օրուան իրիկունը, 4 Յունվարի 1878 ի։ գիշերը կեցանք հուպ Պէօյիւք տէրէի, յաջորդ օրն որ իմթուամ էր. կէս օրին եկանք Կ. Պոլիս. ալեկոծութիւնը չպիտի գրեմ, զի լսած էք բաղում պատմութիւն փոթորկի։

Շատ գոհութիւն տուինք Աստուծոյ փորձանքներէ փրկած ըլլալուն. համաձայն էր այս աղօթք «անցանք մեք ընդ հուր և ընդ ջուր և ՏԷր հան զմեզ ի հանգիստ։»

Հիմայ գրեմ Պոլսոյ վրայ որ կը տեսնեմ. կը շբ-ջիմ իբր նոր աշխարհ մեզ համար (1)

---

(1) Ասկից վերջ 1-2 անգամ կրկին Պոլիս գալով հարկ եղաւ նոր տեղեկութիւններն ալ միացնել։

Մի վնտուէք դասակարգութիւնք, կը գրեմ տեսածս, լսածս և կարդացածս, ինչպէս որ հանդիպի. կսկսիմք վեհապետէն։ Կ. Պոլսոյ և ընդհ. Թուրքիոյ Թագաւորն է Սուլթան Ապտիւլ-Խան Համիտ երկրորդ մեծազօր կայսր Օսմանեան, խան և զազի (յաղթող) Համիտ մեծ. բարեխնամ հայր և իշխան ընդհանուր Օսմանեան երկրի և ժողովրդոց. 34դ. Թագաւոր Օսմ. հարստութեան և 28դ կայսր յառմանէն Կ. Պոլսոյ միահիծան կայսր ծովու և ցամաքի, որդի Սուլթան Մէճիտ—Խան երկանկայիշատակ Թագաւորի, թոռ՝ Ս. Մահմուտ հանգուցեալ հզօր կայսեր. քաջութեամբ, քաղաքրութեամբ և բարեսրտութեամբ տիպարն է իր հօր և մեծ հօր, իսկ խոհականութեամբ, իմաստութեամբ և հանճարով առաւելագոյն քան զհայրն և զպապն և ամենայն Թագաւորք Օսմանեան, շնորհաշուք և մաքուր խղճմտանքի տէր, արդար, կանոնադիր իբրև Ս. Սիւլէյման։ Օսմանեան 30 միլիոն ժողովուրդի ընտրելագոյնն է Խալիֆա կրօնապետ և փոխանորդ Մահմէտ մարգարէին, ամենախնամն Աստուած պարգևեսցէ կեանս երկարս, կարողութիւն և զօրութիւն, վասն բարօրութեան Օսմ. երկրի,

Ծնեալ է Ս. Համիտ 18 Շապան 1258 և 10/22 Սեպտ. 1842, գահակալութիւնն է 11 Շապան 1293 և 12/24 Օգոստոս 1876 (1) Կառավարութիւնն է Յահմանադը-

---

(1 Տարեդարձը հանդիպեցաւ այս շաբթուան երբ այս տողեր կը գրէինք, հիանալի լուսավառութիւնք և հրախաղութիւնք կը կատարուէին Պոլիսի ամեն կողմը։

բական միապետութիւն, կայսեր անձ ընութիւրական է, ինքը իւր ազատ կամքով կընտրէ նախարարները և կը հրաժարեցնէ, ինք կը հրատարակէ պատերազմ և կը դաշնադրէ հաշտութիւն։

Ինքը կը շնորհէ բոլոր պաշտօնները, աստիճանները և պատուանշանները երբեմն ինքնակամ և երբեմն ըստ խնդրանաց նախարարութեան որ բաժանեալ է հետեւեալ ճիւղերու։

Սատրազամ, մեծ եպարգոս, վեզիր, փոխանորդ տէրութեան և Ս. նախարարապետ. գլուխ բոլոր նախարարաց և պաշտօնէից։

Շեյխ-իւլ-իսլամ, դենպետ, օրինաց փոխանորդ և վճռատու կրօնապետ, բացատրող պատգամաց, պատմիչ և պահպանիչ իսլամութեան. գլուխ բոլոր կրօնական պաշտօնէից։

Սէրասքէր. սպարապետ, սպասալար մեծ զօրապետ, մարաշախտ, նախարար պատերազմական գործոց, հրամանատար ընդհանուր Օսմանեան զօրաց, զօրապետաց և բանակաց։

Ցախիլիէ Նազրի. նախարար ներքին գործոց (փոխանորդ մեծ եպարգոսի ներքին գործոց համար) ուղղակի յարաբերութիւն ունի վալիներու, և միւթասարրֆներու որք վիլայէթի մը ենթակայ չեն և կրսուին (միւսթեգիլ) ներքին գործերը կը տնօրինէ կարեւոր գործոց համար կը դիմէ առ մեծ եպարգոսն։

Շուրայի տէօվլէթ ըէիսի. նախագահ պետական խորհրդոյ, սովորական գործերու մէջ կը դիմէ ներքին գործոց նախարարութեան, և կարեւոր գործերու համար մեծ եպարգոսին, կը հրամայէ պետական խորհրդոյ ամեն ճիւղերու։

Խարիճիէ Նազրրի. Նախարար արտաքին գործոց, օտար տէրութեանց քով դտնուած Օսմանեան դեսպանաց գլխաւոր հիւպատոսաց, օտար տէրութեան արտաքին գործոց նախարարներու. և օտար տէրութեանց կողմէ Կ. Պոլիս դտնուած բոլոր դեսպանաց հետ ուղղակի յարաբերութիւն ունի, և կը տնօրինէ օտար տէրութեանց քով մեր դեսպանաց և հիւպատոսաց ընտրութիւն և այլ քաղաքական գործեր։

Ալիէ վէ Միղահիպ Նազրրի. Նախարար արդարութեան և կրօնի գործոց, կը տնօրինէ բոլոր դատական և պատժական ժողովներու գործերը, պետ և տեսուչն է կեդրոնի և ընդհանուր Օսմանեան դաւառաց, արդարութեան պաշտօնէից, կրօնից տեսչութիւնը կը վերաբերի հպատակ ոչ իսլամ ժողովրդոց, երկրորդական պաշտօնեայները, դաւառներու ժողովոց անդամներու ընտրութիւնը կը տնօրինէ յանձնաժողով (էնճիմէնի)ի որոշմամբ, իսկ սկսեալ ընդհանուր դատախազի օդնականներէն մինչեւ վերին պաշտօնեայն կը դրէ մեծ եպարդոսի և նա արքունի պալատը, որ կը վաւերանայ բարձրագոյն հրամանաւ (իրատէի սէնիյէ)։

Պահրիէ Նազրրի. Նախարար տեսուչ ծովային ամենայն գործոց նաւուց, շոգենաւուց և նաւատորմիղի։

Թոփհանէ միւշիւրի. Հրամանատար թնդանօթաբանի բոլոր գործոց (այժմ միացեալ սպարապետութեան։)

Մալիէ Նազրրի. Նախարար եղեւմտական գործոց, է տեսուչ կառավարութեան եղից և մտից, պետ եղմտական պաշտօնէից, կընտրէ ժողովներով երկրորդական պաշտօնեաներ և դրագիրներ, կարեւորներ կը դրէ մեծ

Եպարգոսին որ նա ՀՐԼ կընէ պալատը, տէրութեան տարեկան պիւտճէն կը պատրաստէ, և բոլոր դրամական գործեր կը տնօրինէ։

Թիճարէթ վէ զիրաաթ նազիրը. նախարար վաճառականութեան և երկրագործութեան, կայսերական երկրի (մէմալիքի մահրուսէ) որոց բարգաւաճման կաշխատի իւր ստորադասեալ պաշտօնէից հետ։

Էվգաֆը հիւմայուն նազիրը. նախարար կրօնական կալուածոց. տեսուչն է բոլոր վագֆներու և անոր պատկանեալ պաշտօնէից։

Մէարիֆ նազիրը. նախարար հանրային կրթութեան, Օսմանեան երկրի մէջ կրթութիւնը ծաւալելու սահմանեալ. տեսուչ բոլոր վարժարանաց, դասատուաց, հրատարակչի գրքերու այլովքն հանդերձ։

Նաֆիէ նազիրը. նախարար հանրօգուտ շինութեանց, Օսմանեան երկրի խճուղիներու, երկաթուղիներու, ֆապրիգաներու և այլ հանրօգուտ շինութեանց, առանձնաշնորհութեանց և այլ խնդրոց տեսուչն է (1)։

Նախարարք ժողով կը գումարին որ կրսուի (մէճլիսի խասի վիւքէլա), երկրին կարեւոր խնդրոց վրայ. նախագահն է մեծ եպարգոսը, կորոշեն ամեն մեծ գործեր, կը վաւերացնեն նոր կանոններ և ամենքը կը ներկայացնեն Վեհ. Սուլթանի հաւանութեան։

Յետոյ կայ երկրորդական տեսուչք, ինչպէս (կէօմ-

---

(1) Կայ նաեւ պալատական նախարար, մապէյին հիւմայուն միւշիւրի, եւ խապինէի խասսէ նազիրը, նախարար տեսուչ կայսերական գանձուն որ այժմ կը վարէ Բարձրագոյն Յակոբ բաշա Գազարեան. որոց և պալատական ուրիշ պաշտօնէից վրայ ևս պիտի գրեմ Գօլոյ պատմութեան մնացեալ մասին հետ։

ріւք նաղբրը) մաքսային, (թէլէկրաֆ փոսթա նաղբրը) թղթատարութեան եւ հեռագրատանց, (շէհիր է-մինի) քաղաքապետ, (ղապիթիէ նաղբրը) ոստիկանաց, ժանտարմաներու, փոլիսներու (մէրքէզ գոմանտանի) կեդրոնական հրամանատար զօրաց, (լէվազիմ ըէյիսի) տեսուչ զօրաց պիտոյից, ջրհանկրաց տեսուչ, նաւահանգստեան տեսուչ ելն. մէն մի տեսչութիւն բաժանեալ է շատ մը ճիւղերու և մանրամասնութեանց։

Փափաքողք կրնան մի ըստ միոջէ կարդալ Սալնամէ անուն պաշտօնական գրքին մէջ, որ ամեն տարի կը հրատարակուի ի Պոլիս։

Նախարարաց ժողովէն վերջ, կարեւոր ժողովն է՝ պետական խորհուրդը բաժանեալ մասնաճիւղերու։

Արդարութեան ժողովները, որք են՝ թէմիիզ, իսթինաֆ, թիճարէթ, պիտայէթ, իրենց ճիւղերովը. ամեն նախարարութիւն և տեսչութիւն ունի խորհրդական (միւշթէշար), օգնական (մուաւին) ժողովներ, յանձնաժողովներ, համարակալ, հաշուապետ, քարտուղար, գրագիր և այլն։

Տէրութիւնը ունի եօթը բանակ ընդ հրամանատարութեամբ միւշիրներու։ Կեդրոնատեղիք են՝ 1 Կ. Պոլիս, 2 Էտիրնէ, 3 Մանասթիր, 4 Էրզինկեան, 5 Շամ, 6 Պաղտատ, 7 Եմէն։

Տէրութիւնը 40 վիլայէթ ունի ընդ տեսչութեամբ վալիներու, բոլոր դաւառները բաժանեալ է (սանճագ) միւթէսարրֆութիւն, (ղէզա) դայմէգամութիւն, (նահիյէ) միւտիրութիւն։

Պոլիս կը նստին մեծ տէրութեանց դեսպաններ,

որոնք ունին իրենց թարգմաններ, քարտուղարներ, հիւպատոսներ և այլ պաշտօնէութիւնք հանդերձ. նոյնպէս երկրորդական տէրութեանց դեսպանք և դրծակատարք։

Հպատակ ազգեր ունին իրենց Պատրիարքները, Հայք, Յոյնք, Կաթոլիկ հայք, Պուլկարք և Հրեայք. ունին պատրիարքարաններ, ժողովներ, տեսուչներ, պաշտօնեաներ, քարտուղարներ այլովքն հանդերձ։ Մէն մի պատրիարքարանի արտօնութիւնք հաստատեալ է օրէնքներով և գրուած տիսթուր օրինագրոց մէջ, ինչպէս Հայոց Սահմանադրութիւնը։

Կ. Պոլիս (ստամպոլ) Բիւզանդիոն, Նոր Հռոմ։ Այս քաղաք շինած է նախ քան զԳրիստոս 650 տարի, Բիւզաս, որ կոչեցաւ Բիւզանդիոն, որպէս ցարդ բանասէրք կը կոչեն։

Կոստանդինոս կայսրը Հռոմէն ատ փոխադրեց իւր աթոռ յամի Տեառն 320ին, կոչեց Նոր Հռոմ, և իւր անուամբ Կոստանդնուպոլիս. որովհետև Յոյնք կը յորջորջէին ի հնումն Իստինիոլի, (Յուստիանուպոլի) Թուրքերէն յիշուեցաւ (Ստամպոլ) կամ (իսլամ-պոլ) քաղաք իսլամաց. երբ տիրեց Ֆաթիհ Սուլթան Մուհամմէտ 1443ին և Տաճկաց 850ին. մինչեւ ցարդ արքունի դրամոց վրայ ևս կը դրոշմուի Կոսթանթինիէ։

Քաղաքը շինուած է ի վերայ եօթն բլուրներու, մարմարայ ծովին պոսֆորի և ոսկեղջիւր նեղուցին վերայ, տեսքով դեղեցկագոյնն է քան զամենայն քաղաքացն աշխարհի, Նեապոլիս, Բալերմոյ և Լիսպոնեա, բնաւ չեն կրնար մրցիլ Պոլսոյ դիրքին հետ. օդն է առողջարար, ջուրը զանազան տեսակ է մաքուր և օգտակար. բնակիչքն կը հաշուին մէկ միլիոն բնիկ, բայց նոր

մարդահամարին մէջ պակաս կերեւի. երբ ի հաշիւ առնում բազմաթիւ պանդուխտներ և օտարներ մէկ միլիոնէ աւելի կընայ հաշուիլ Պոլսոյ ժողովուրդը (1)

Պոլսոյ ժողովուրդը՝ Օսմանեան այլ երկրի ժողովուրդներէ առաւել ունէ արտօնութիւն կամ առանձնաշնորհութիւն չունի ըստ Սահմանադրութեան (գանունի էսասի)։

Պոլսոյ դիրքը բաժանումներ ունի աշխարհագրական և կառավարական ձեւերով. կառավարութիւնն բաժնած է չորսի. (Սաամպօլ վէ պէլատիսէլէսէ։)

1. Պոլիսը, սկսեալ Եէսի գուլէէն մինչև Էյուպ.

2. Կալաթիա, սկսեալ Կալաթիայէն մի թեւը մինչ Քեահրատհանէ և միւսն մինչ Բուսֆէր գավագ ի (Պոսֆոր)։

3. Իւսկիւտար, սկսեալ Գաատը գիւղէն մինչ Ընատօլու գավագ։

4. Կղզիներ, (Ատալար) որք են մեծ կղզի (բուին-գիրոյ), Հէյտէլի (Խալգի), պուրկազ (Անտիգոնի) և Գրնալը (Բրօգի։)

Սկսիմք արքունի շէնքերէն. Եըլտըզի գեղեցիկ պալատը՝ Օրթաքէօյի և Պէշիկթաշի մէջ ուր կընստի այժմ մեր Սուլթան Ինքնակալը. դիրքը բարձր, շէնքերը և

---

(1) Պոլսոյ եւ այլ գաւառաց մարդահամարի վրայ բաւական աշխատութեամբ ժողոված էինք շատ մը տեղեկութիւնք, սակայն կառավարութեան վերջին մարդահամարը ստոյգ ըլլալով զանց ըրինք այս նիւթին վրայ գրել։

այլ վայելչութիւնք խիստ շքեղ. թէ այս և թէ այլ շէնքերու վայելչութեան վրայ դաղափար մը կազմելու համար ի մօտոյ տեսնել և դիտելու կը կարօտի։

Զըրաղանի պալատը մեծագոյն և գեղեցկագոյն ծովի եղերքը Օրթաքէօյ։

Ցօլմա պահչէի պալատը, ի Պէշիկթաշ, այս երեք նորաշէն պալատի ճարտարապետութիւնք մեկզմէկ կը գերազանցեն, կոթական և Եւրոպական ամենաընտիր ճաշակներով, կանիթ և մարմարիոն քարերով, սիւներով, քանդակներով և նկարներով։

Պէյլէրպէյի պալատը Գ. մասի, համանուն գիւղի մէջ նման վերի երեք պալատաց, շքեղ և փառաւոր (1)

Կիւլհանէի պալատը Ա. մասի. մօտ Ա. յա սոֆիայի մզկիթին, ուր կարդացուեցաւ 1839ին (Խաթիթ հիւմայունը) յարմէ ծագում առաւ (Թանզիմաթը Խայրէն) շնորհիւ Ս. Մէճիա հանգուցեալ կայսեր, որով գտին ազատութիւն հպատակ ազգք Օսմանեան. հոս է փողերանոցն (զարպխանէ). կայ մի քաղանիք 32 կճեաց սենեակով, ունի երեք պատշգամ աննման հնութեամբ և շքեղութեամբ. 1 (Պաղատատ քէօշկի) պատշգամ բարեւնի. 2 (զէվդիյէ) պատշգամ ուրախութեան և զուարճութեան. 3 (կիւլհանէ) վարդենեայ, ունի պարտէզ մի կերպ կերպ զարդարեալ և պաճուճեալ, հարիւրաւոր սենեակներ և դահլիճք գեղեցիկ ճաշակով։ Հոս է հր-

---

(1) Պալատներու եւ այլ կայսերական շէնքերու մեծ մասը շինուած է ճարտարապետութեամբն Պալեան եւ Նշանաւոր գերդաստանի։

նուիրեանց թանգարանը, ուր կը պահուին Հռոմէական, Եգիպտական, և Յունական թագաւորաց դրահներ, խիստ հին գիրքեր, հին բանալիք քաղաքաց, որոց տիրած են կայսերք Օսմանեան, այլ անթիւ հնութիւնք և հարստութիւնք ազգի ազգի ազգամանդից, դոհարաց, մարգարիտ ոսկի և գոհարազարդ գոյքերու. զարմանք կը գրաւեն ոչ թէ ժողովրդեան այլ Եւրոպայի ճամբորդաց և բարձրաստիճան անձանց. հոս է Էճինլի քէօշկի ըսուած յախճապակեայ և քարաշէն պատշգամն, որ այժմ ղէնքերու (մուղէ) եղած է. նշանաւոր է մեծ դահիճն որ կոչի գուպպէ ալթը. նախնումն պայրամի, տօներու պետութեան ամեն պաշտօնատարք հոս կը համբուրէին ոտս արքային կամ ոսկեթել ծոպն, (սաչախի շէրիֆ) այժմ այս արարողութիւնք կը կատարի ի պալատն Եըլտըզի կամ Ցօլմա պահչէի։

Սարայ պուռնիի պալատը, հին պալատ արքունի Կ. Պոլսոյ ճիշդ անկիւնը, մառմառայի վրայ. որ կողմնակի շինուած է ի ծովեղերս և այժմ աւերակութեան ենթարկեալ։

Թոփ դաբուի պալատը. Պոլսոյ մէջ, շինեալ Ս. Մէհմէտ Ֆաթիհէ. հոյակապ և նշանաւոր հնութեամբ։ (1)

Այս եօթը պալատներէն վերջը կուգան Կէօք սուլի պալատը կամ պատշգամը նորաշէն. անատոլուի կողմն. Բեաղըտհանէի պատշգամն, (քէօշկ) ճիշդ քեաղըտհանէի գրօսավայրին մէջ. և այլ շատ մը ապարանքներ

---

(1) Այս երեք պալատները ինչ անգքեր անցեր է (տես Օսմանեան պատմութիւն։)

յատկացեալ Մուլթանուհիներու, արքունեաց փեսաներու, կայսերական ժառանգաց (շահզատե) և այլոց որք կը վերաբերին կայսրութեան։ Այս պալատներու շէնքեր աննման են ամեն կերպիւ հոյակապ և վայելուչ արտաքին կողմէ, իսկ ներքին շքեղութիւնք եւ կահ կարասեաց ճոխ զարդարանք, առաւել հիանալի են։

Կ. Պոլսոյ մզկիթները։ Պոլսոյ և արուարձանից մզկիթներու թիւը անորոշ է, ճամի և մէսճիտներու թիւը կը հասնի երկու երեք հազարի. որոց բոլորին պատմութիւնը կը կարօտի ամբողջ գրքի մը, մեք նշանակեմք մի քանին նշանաւոր և մեկէ աւելի աշտարակ ունեցողներ. Այա սոֆիա, երեւելի քան զամենայն շինուածս Բիւզանդիոնի. ոմանք կը կոչեն մին եօթն հրաշալեաց. շինեալ նախ մեծ Կոստանդիանոսէ տաճար՝ և նուիրեալ իմաստութեանն Աստուծոյ 323 թուականին Քրիստոսի. Եւ ապա Թադէոս փոքրէ և Յուստինեանոսէ 532ին, երբեմն նորոգեալ, յետ առման Կ. Պոլսոյ եղեւ մզկիթ մեծ, հրաշալի է ներքին տաճարն, վերնատունք, գմբէթք և ճանապարհն որմերու մէջ. Պոլիս այցելող եւրոպական արքայազունք և ճանապարհորդք նախ կայցելեն Այա սոֆիա իբր գլուխ գործոց հնութեան. ունի չորս աշտարակ (մինարէ։)

Սուլթան Ահմէտ. շինեալ Ս. Ահմէտէ ի հրապարակի մեծ, որ կոչի Ամ մէյտանի, շինեալ ի Սեւերոս կայսրէ և աւարտեալ Կոստանդիանոսէ. հնուն կոչէին ի փոստրօմոս, որ շինուած էր գեղեցիկ անդաստակով, դուռներով ուր կային դամբանք և մահարձանք կայսերացն Յունաց, երբեմն կայարան (եէնիչէրիներու) այ-

ժամ բոլորովին թափուր, միայն երեք հոթոզ կայ որ կը կոչի (տիքիլի թաշ), օձապատ սիւնն պղնձեայ տասնն ոտ բարձրութեամբ, Եռատանի խարիսխը որ Յոյնք նուիրեցին Ալպողոնի։ Կոթողն Եգիպտոսի շինեալ Թէոթոս կայսրէ և կիսաւէր մահարձանն Կոստանդին Պէր Փէռուժէնի, այլ արձանք և արձանագրութիւնք են ըստքանչելիք հնութեան։ Մզկիթն է հայակապ, կայ շատ մը դամբաններ, Սուլթան Ահմէտի և ուրիշ թագաւորաց, ունի վեց մինարէ երկուական պատշգամներով, (շերաֆէ) այս հրապարակի քոշն է եէնիչէրիներու արձանք։

Սիւլէյմանիէ մզկիթ. ունի չորս մինարէ, նմանութիւն Այա սոֆիա մզկիթին, շինեալ Ս. Սուլէյմանէ արաբացի ոճով, ճոխ շինուածքով. աւազաններ, աղբիւրներ, դամբանք և այլն։ Նշանաւոր է նաև խրբդայի շերիֆի մզկիթը ուր կը պահուի պատմուճան Մէհմէտ մարգարէին, որ ամեն տարի ուխտ կընէ Օգոստափառ Սուլթանը բամազանի 15րդ օրը և այլ բարձրաստիճանք և ապա խալամ ժողովրդեան համար իտեռ կը դրուի (1)

---

(1) Այս տարի եւս ականատես եղանք այս շքեղ հանդիսին Օգոստափառ Սուլթանը և մայր թագուհին և կայսերական գերդաստանի անդամք, թագուհի սուլթանը, մեծ հանդէսով Ելլտրզի պալատէն ելան նաւագարանաց եւ զօրաց վաշտերով, զարդարեալ կառքերով եւ նժոյգ ձիերով, եկան անցան Կալաթիոյ կամուրջը եւ գնացին ուխտի, երեկոյին դարձան կրկին մեծ հանդէսով, Պոլսոյ ժողովրդեան մեծագոյն մասը հանդիսատես էր, փողոցները գոցուած էր բազմութենէն, լռութիւն մը տիրած էր Կ. Պոլսոյ վրայ, Օգոստափառ Սուլթանը բաց կառքի մէջ նստած ժողովրդեան կեցցեներով ողջունեցաւ։

Ս. Մէհմէտ Ֆաթիհի մզկիթը շինեալ Կոստանդին կայսրէ յանուն Ս. Առաքելոց, հանգստարան իւր և մօրն Հէղինէի, և դամբան Ֆաթիհի և այլոց կայսերաշանց. մինարէ 2 ունի։

Եէնի ճամի, շինեալ Սուլթան Սէլիմ Ա.է և Ս. Ահմէտ է յիշատակ մօրն երկուց թագաւորաց. մինարէ 2. ասոնցմէ զատ մինն քան զմիւսն փառաւոր և հոյակապ և ամենեքեան ոսկի աշտարակներով և երկու երեք պատշգամներով են հետևեալ մզկիթները։ Թոփհանէի, Օրխանիէի, Իւսկիւտարի, Շահզատէի, Ագսէրայի, Պայազիտի (շինեալ 1840ին), Նուրի Օսմանիէի, Օրթաքէօյի, Պէշիկթաշի և Սէլիմիէի խաշլային մզկիթը։ Յատուկ նշանակութեան արժանի հնութեամբ Էյուպի մզկիթը՝ որ կոչի Էյուպ Սուլթան. Օսմանեան կայսերք հոս կը կապեն իրենց Սուրբը մեծ հանդէսներով և արարողութեամբ. դաւիթի ամենամեծ չինարի ծառերն Ս. Ֆաթիհ անկած է Կ. Պոլսոյ առման տարին, որոց մի-ոյն տունը (կէօվտէ) փորելով ըրած են սափրիչի կըրպակ մը՝ տերեւները դարձեալ կը մնան կանանչ, Պոլսոյ ամենահին ծառերու պապերն են։ Հնութեամբ նշանաւոր է նաեւ (եէր ալթը ճամիսի), Կալաթա գեռնի տակը է ուր կիջնեն սանտուխով, հաստատուն կամարաձիւներով։

Ամենահին մզկիթն է Կ. Պոլսոյ Արապ ճամիսի կոչուածը ի Կալաթա, որ շինուած կը կարծուի Արաբաց առաջին խալիֆէ մաւիէ ամիրայ է։ Պոլսոյ մզկիթներու մէջ եղած դասարանները (մէտրէսէ) ժամանակացոյցները (մուվաղքթանէ) աղբիւրները, շատրուան-

ները, ճեմելիքները անթիւ են և անհամար, և բոլոր շէնքերը ընդարձակ։

Կայանք կառավարութեանց.

Նշանաւոր հին շէնք մ'է Բ. Դուռը, (Պապը Ա'լի) ուր կը նստի Մեծ Եպարգոսը, արտաքին և ներքին դռծոց նախարարները, պետական խորհուրդը ամեն պաշտօնեաներով, մօտ Ա.յա-Սոֆիայի։

Պապը Սէրասկէրի, կամ Էսքի Սարայ, որ շինուած էր 1445 ին, Սուլթան Պատաղիտի հրապարակի վրայ. ուր կը նստի Մեծ Սպարապետը. իւր սպայակոյտով և զօրապետներով և ամեն պաշտօնեաներով, նորոգ շինեալ հոյակապ, բարձր դիրքով ի վերայ բլուրին մոյ եօթն բլրացն Կ. Պոլսոյ, որոյ ներքին հրապարակի մէջն է Պոլսոյ ամենամեծ աշտարակը, (Եանկըն գուլէսի) 257 աստիճաններով, վրան պատշգամ ընդարձակ, աստի կերևի Պոլսոյ ամեն կողմ, Մարմարայ և Պոսֆորը, ուստի կրնայ գուշակուիլ Պոլսոյ դիրքին անընմանութիւնը բնութեան և ճարտարութեան ամեն սքանչելիքներով (1)։

Ապարանք Ա.յա Սոֆիայի. մօտ համանուն

---

(1) Այս աշտարակը դիտարան է հրդեհի եւ երթեւեկութեանց չոգենաւուց ուր կը հսկեն պահապանք տիւ եւ գիշեր. ունին նշաններ դիշերի եւ ցերեկի համար հրդեհի եւ այլ վտանգներու ատեն. շինեալ ի ժամանակի Ս. Մահմուտի ձեռամբ ճարտարապետ Սինանքերիմ Պալեանի։

Այս շէնքի դէմն է (Միսաֆիրխանէի ասքէրիէ) հիւրանոց պանդուխտ զօրապետաց շինեալ Ս. Ազիզէ։

մկկիթին, ընդարձակ և փառաւոր շէնք, կը նը-
տի արդարութեան նախարարը, դատաւորները, էվդաֆի
տեսուչը իրեն ճիւղերով, պարտէզի մէջն է (մէրթէ-
պի հուդուդ) իրաւադիտութեան վարժարանը։

Ապարանք դենպէտի պապի ֆիթվա փենտահի. կը
նստի Շէյխիւլիսլամը և իւրայինք. Պոլիս Սիւլէյմանիէի
կողմը՝ ապարանք մալիէի, կը նստի էլմտական նախա-
րարը իւր ամեն պաշտօնեաներով, կից պապը սէրաս-
քէրիէ, նորաշէն է և ընդարձակ։

Ասոնցմէ զատ կայ շատ մը ապարանք, պապը
զապթիէ Պոլսոյ մէջ, տիվանհանէ խասքէօյի մօտ, նա-
ֆիէի, մէարիֆի, թէրսանէի, պահրիէի և այլն որոց
նկարագրութիւնն երկար է։

Նշանաւոր է Թոփհանէն ուր կը ձուլեն ահագին
թնդանօթներ և կը շինուին ամեն զէնքեր, Կալաթիոյ
կողմը Դապաթաշի մօտ. ընդարձակ գործարան և պա-
տրշդամ շքեղ, նոյնպէս Թէրսանէի գործարանը մօտ
խասգիւղի, ուր կը շինուին և կը նորոգին շոգենաւեր՝
շինեալ Ս. Մահմուտ Բ.է 1838ին։

Ֆէսհանէ մօտ էյուպի, շինեալ Ս. Մահմուտի
ատեն ձեռամբ Յովհաննէս Գուլումճեանի։

Մաքրի գիւղի պասմահանէն, Զէյթունի պուրնիի
տէմիրհանէն որ շինուեցաւ 1847ին հրամանաւ Ս. Մէ-
ճիտի ձեռամբ Յովհաննէս Ամիրայի Ցատեան։

Պարութհանէ Ալյսթէֆանոյ. շինուեցաւ 1828ի
Ս. Մահմուտի հրամանաւ ձեռամբ Ցատեան Սիմոն աղայի
և միւս վառօդարանն որ շինուած է Ս. Սելիմ Գ.ի
օրով։ Ասկից վերջ կուգայ կարգը զինուորանոցներու
(գէշլա) և հիւանդանոցներու որք են բամիզ չիֆթ-

լիկ տավուտ փաշա, Մալթէփէ, Իւսկիւտար, Սէլիմիէ (1) Հայտար փաշա և այլն։

Ոչ սակաւ արժանի է նշանակութեան Գրղդուլէսի ըսուած աշտարակը, մարմարայի մէջ Իւսկիւտարի մօտ շրջապատեալ ծովէն։

Շինեալ Մանուէլ Կոմնինոս արքայէն, ուր հաստատեց շղթայ նեղուցը փակելու համար. քարաժայռի վրայ նման փոքրիկ կղզեակի։

Եւրոպացիք կը կոչեն աշտարակ Լեանդրի, իբր թէ Լեանդրի եղերական դէպքը հոս անցած ըլլայ. մէջը ունի ամուշ ջուր, և այժմ է պահականոց։ Ի վերայ աշտարակին կայ լապտեր իբր փարոս։

Ասոր հետ պէտք է գրել աշտարակն Կալաթիայի (Ղալաթա գուլէսի) Կալաթայի հին պարսպին ծայրը շինուած է այս լայնաբոլոր մեծ աշտարակ բարձր դիրքի վրայ, զոր շինեցին Գենուացիք, միջնաբերդին մէջ որ ապաստարան էր վտանգի ատեն, ունէր դեռևս փոր ճանապարհ բարձր 150 ոտնաչափ. այժմ է դիտարան հրդեհի և երթևեկութեանց նաւուց. սքանչելեաց մին ի հնութեանց։

---

(1) Սէլիմիէի զօրանոցը շինեց Ս. Սելիմ Գ. Եւրոպական սքանչելի ճարտարութեամբ. այս զօրանոցը եւ Հայտար փաշայի հիւանդանոցը որք մօտն միմեանց Անգլիացւոց յատկացեալ էր գրիմի պատերազմի ատեն. ասոնց մօտ ծովեզրը թաղեցին իրենց մեռեալը. եղեւ գերեզմանատուն անգլիացւոց, որ կայ մի կոթող ի յիշատակ, եւ սենեակք պահնորդաց. ցարդ է գերեզմանատուն Անգլիացւոց։

Նշանակութեան արժանի է նաեւ պոսֆորի և մարմարայի փարոսները որք ունին լապտերներ վառն պիտոյից չոգենաւուց ի գիշերայն։

Ի կարգի մեծ հնութեանց է երկու վաճառանոցը մեծ շուկայ և մբսրը չարշը. մեծն է ընդարձակ վաճառանոց կարգի կարգի կրպակներով և խաներով. համակ քարաշէն և քարուկիր. ի վաղուց շինեալ Բուսնայ կայսրերեն և ժամանակ ժամանակ նորոգեալ Օսմանեան Սուլթաններէ, ունի երկու պէղէսթէն, ճէվահիր պէղէսթէն և սանտալ պէղէսթէն անուամբ, ամրափակ դուռներով. կարգաւոր պահապաններ հսկեն ի գիշերի, ուշ բանան առաւօտներ և շատ կը գոցուի երեկոյին որոշեալ ժամերու մէջ ըստ եղանակի տարւոյն, ծախսուի ամէն տեսակ դոհարեղէն, կերպաս, տարաղ մեծ քանակութեամբ, սորա մէջ կը հաշուին 70,000ի չափ կրպակ, սենեակ և ն. լցուած են ապրանքներով, խանութպանք իրենց ապրանքը հոն թողուէն վերջ, դրամական և այլ հարստութիւնք կը ձգեն ասա. մանաւանդ ճէվահիր պէղէսթէնն է ապահով հրդեհի ու վտանգի, հոս են Հայ ազգի նշանաւոր ոսկերիչք, ամենէն բազմամարդ տեղն է Պօլսոյ։

Երկրորդն է մբսրը չարշը, քարուկիր. ունի ամուր դուռներ և պահապան բայց մէկ տասներրորդը չկրնար համարուիլ մեծ շուկայէն, հոս կը ծախսուի մեծ քանակութեամբ բանպակ, հոմեմ և պահարեղէն. (1)

---

(1) Մբսրը, Եգիպտոս. (միսիր) ան մնելու տեղ (սէյիր եէրի)։ Զեմք գիտեր որ նշանակութեամբ է։

Խաներու մէջ ամենէն հին և նշանաւորները են Վէզիր խան, Մեծ Նոր խան, Վալիտէ խան, Եբլաղ խան ևն. որք շինուած են հին ժամանակներ լայն քարուկիր որմերով և լայն սիւներով. ասոնցմէ վերջ նշանաւոր կը համարուին Գամանթօ, Խրիսթաքի, Ամերիկեան, Եուսուֆեան, Եալաղ խան, Մըսթաֆա բաշա, Ռիզա բաշա, Շերիֆ բաշա, Մրխթար բաշա, Մէհմէտ Ալի բաշա և այլ անուամբ խաներ. Նոյնպէս Հալաճեան, Խավեար, Գօմիսիոն, Նորատունկեան, Ցակոբեան, Գէորգ պէյ անուամբ խաներ և այլք հաղարաւոր։

Մէրճանի կողմն է Թիճարէթ խան, գնեալ Սովէլոց Ցանձնաժողովէն, սեփհական կալուած Ազգային։

Վաճառատանց Նշանաւորներն են՝ Պօն մարշէ. Էօմէր էֆ. Էսայեան, Գարակէօզեան, Բագթիվան, Սըվաճի, Մուրատեան, Մինասեան, Բազար ալման, Նիշէսթէճեան, Հաճի բօլօ և այլ բազմաթիւք որոց մանրամասնութիւնք կը հրատարակուին Էնտէքաթէօռ անուն Ֆրանսերէն դրքին մէջ. երկու տարին մի անգամ (1)։ Եւրոպա սովորութիւն է հաղարաւոր տարեցոյցներ հը-

---

(1) Էնտէքաթէօռ տեղեկութիւններ կուտայ իր տարեցոյց, կը գրէ նաեւ գաւառներու վրայ, թէեւ սխալներ պակաս չեն։ Կը ցանկամք որ ասոր Հայերէնը հրատարակուի զէթ համառօտ կերպիւ, և գաւառացիք դիտանն թէ Պոլիս կամ ուրիշ գաւառներ ի՞նչ վաճառատուններ, եւ ի՞նչ արհեստաւորք կը գտնուի կոչնակի յարաբերութեան համար։

բաստարակել ի մեծ դիւրութիւն վաճառականութեան և արհեստից, և այլ շատ ճիւղերու վրայ այս պիտոյք դեռ լրացած չէ Թուրքիոյ մէջ։

Կայսերական վարժարանք.

Երկու վարժարան բժշկաց, ասքերիէ և միւլքիյէ. շրջանաւարտք կառնեն վկայական բժշկի. ասքէրիէի շրջանաւարտք լինին բժիշկ զօրական, իսկ միւլքիյեներ քաղաքական բժիշկ։

Երեք վարժարան զօրապետաց, ուրկից կելլեն սպայակոյտ (էրքիանի հարպ) զօրապետ, պայթար, երկրաչափ և այլ թնթանօթաձիք, ձիաւոր և հետեւակ զօրաց զօրապետներ։

Ծովային վարժարան. որոյ շրջանաւարտք լինին նավապետ և նավային զօրապետ։

Մէքթէպը Սուլթանի և մէքթէպը միւլքիէ, որոյ շրջանաւարտք կրնան վարել քաղաքական պաշտօնները։

Մէքթէպը հուդուդ. իրաւագիտական վարժարան ուրկից կելնեն փասաբանք և պաշտօնեայք։

Մէքթէպը իւննաս. օրիորդաց բարձր վարժարան։

Մէքթէպը թիճարէթ վէ զիրաէթ. երկրագործական և վաճառականութեան վարժարան։

Մէքթէպը զիրաէթ Հատիմ գիւղի մէջ որ նոր կը բացուի երկրագործութիւնը գործնական սորվելու համար. ասոնցմէ զատ կայ շատ մը երկրորդական վարժարանք, թաղային վարժարաններ (մահալլէ մէքթէպի) նաեւ մզկիթներու մէջ եղած մէտրէսէներ որ հասակաւոր մոլլաներ կը սորվին կրօնական դիտութիւն։

Մեքթէպի սենայիէի նէֆիսէ, վարժարան գեղարուեստից, Կիւլհանէի մէջ, միսիթարական ապագայ կը խոստանան բոլոր վարժարանք։

Գրատունք

Մզկիթներու գաւիթները և այլ տեղ բկայ շատ մը գրատուններ Ցաճկերէն և Արաբերէն անթիւ գիրքերով, ընթերցողը կը հրաւիրեմ ի գրատուն Օսմանեան որ շինեց Սուլթան Համիտ մեծ կայսր. ի հրապարակ Սուլթան պայազիտի որոյ գեղեցիկ և վայելուչ շէնք, ներքին բարեկարգութիւն ու մաքրութիւն արժանի է գովութեան, ամեն աղգի գրքերէն շարուած, դարակներ լեցուն, նստէ թաւիշեայ աթոռներու վրայ զարդարուն գրասեղաններու շուրջ, կարդա՛ որքան որ կուզես, և որ գիրք որ կուզես. մուռք ձրի, և բայց ամեն կարգի անձանց. ահաւասիկ Օգոստափառ Սուլթան Համիտ բարեհնամ թագաւորին մի նշանաւոր գործն ալ որ կաւելցնէ իւր փառք և բարոյականութիւն ժողովրդեան։ Ցանկանք տեսնել այսպէս գրատուններ ի Պոլիս և ի գաւառս. մանաւանդ տեսնել բաղմութիւն ընթերցասէր յաճախորդաց։

Մասնաւոր բարձրագոյն վարժարանք

Բոպէրթ գոլէժ Բուռմէլի հիսար. Ամերիկացւոց վարժարան բարձր բլուրի վրայ. նշանաւոր շէնք, առողջարար օդ, ունի թանգարան թռչնոց, մեսաղաց և մեքենայից և դրատուն ճոխ. ուսանին Ցաճկերէն, Անգլիերէն, Ֆրանսերէն, Հայերէն և Պուլկարերէն։

Աստուածաբանական ճեմարան Յունաց ի Հէյպէլ

կղզի. ուրկից կելնեն կղերք յունական և գիտնականք։ Առեւտրական վարժարան Ցունաց ի նոյն կղզի, ուր կը սորվին վաճառականութիւն (1)։

Լատինաց վարժարան ի Գաւռի գիւղ, Ֆրէրներու տեսչութեամբ կը սորվին ուսմունք Ֆրանսերէն և Լատիներէն իւրեանց ճիւղերով։

Զարիայ. աղջկանց վարժարան Ցունաց ի Թաղսիմ իրենց մեծ եկեղեցւոյն կից շինեց համանուն վաճառական մը իւր անձնական քսակէն։

Հայոց Ս. Փրկչեան վարժարան. Ղալաթիոյ վարժարան. Մայր եկեղեցւոյ վարժարան և այլ վարժարանք։ Հոմ վարժարան Իւսկիւտար աղջկանց համար Ամերիկացւոց տեսչութեամբ, Հայ Հռոմէականաց վարժարաններ և այլ վարժարանք բազմաթիւ են.

Իւսկիւտար Մէղալուրեան վարժարան Հայ աղջկանց համար իւր տեսչութեամբ, Իւսկիւտար Պերպէրեան վարժարան տղայոց համար իւր տեսչութեամբ, յՕրթաքէօյ Գուրգէնեան վարժարան տղայոց համար իւր տեսչութեամբ, այս 3 վարժարանք գիշերօթիկ են և կանոնաւոր, ասոցմէ եռքը ամեն ազգի թաղային վարժարաններ շատ են։

---

(1) Այս վարժարանն է կղզիին մէկ միջավայրը շուրջը ըրած են ամբողջ անտառ, դպրոցը շինուած է վանուց մէջ, վանքի եկեղեցին է 500 տարուան շինեալ Եուվանիս Բանէօլոզոսէ, եղբայր Կոստանդին Լէոբոլտի, դիրք եւ օգ նման Բոպէրթ գօլէճի. թոչակ տարեկան 30 բոպերթը 44 Օսմանեան ոսկի մէն մի աշակերտի համար։

Հիւանդանոցք

Տէրութիւնը ունի զօրքերու համար քանի մը հիւանդանոց կանոնաւոր կերպիւ Եըլտըզի կից հիւանդանոցը այս տարի դարմանեցան վիրաւորք Վ. Կայսրը սփռեց մեծ խնամք և շնորհք, ինչպէս գրեցին լրագիրք. նոյնպէս հպատակ ազգերը ունին իրենց ազգային հիւանդանոցները, ասոնցմէ զատ օտար տերութիւնք ունին հասարակաց հիւանդանոցներ որոց նշանաւորն է Բրուսիոյ հիւանդանոցը. հիւանդ մը օրական պիտի վճարէ միայն 15 ղրշ. իւր դեղերու, բժշկի և ուտելեաց ամեն ծախսերու համար. բարեկարգութիւնը և մարդասիրութիւնը միացած է այս բարեգործական շէնքերու մէջ։

Հայոց հիւանդանոցն է Եէտի գուլէ. ունի մի եկեղեցի Ս. Փրկիչ անուամբ, գիշերօթիկ վարժարան վասն որբ տղայոց, հիւանդանոց, յիմարանոց և անկելանոց վասն հիւանդաց և ազքատաց. ուր կը պատսպարուին 6–700 անձինք, միս և հաց շնորհեն Սուլթանք Օսմանեան. շնորհ հատատեալ Ս. Մահմուտ երջանկայիշատակ կայսրէ, ջանիւք Պէզճեան ամիրայի որ ունի տասա բազում յիշատակս, ինչպէս նաեւ Տատեան ամիրայք. ամեն տարի Համբարձման օր Ս. Պատարագ կը մատուցուի ի յիշատակ Պէզճեան և Տատեան Գերդաստանաց. իսկ Մայիս 24ին Ազգային Սահմանադրութեան հանդէսը կը կատարուի մեծ շքով (1)։

---

(1) Այս տարի ևս 15000ի չափ Հայք եկած էին ընտան-

Ունի գեղեցիկ պարտէզ և ընդարձակ սրօտ, միւս ծախքերը կը հոգացուի ազգէն յատուկ հոգաբարձութեան ձեռամբ։ Հայոց հիւանդանոցին մօտ է նաեւ Ցունաց հիւանդանոցը. իսկ Հռովմէական Հայոցընէ Բերայ ի Թագսիմ։

Պոլսոյ մէջ բաւական տեղ կը բռնէ նաեւ գերեզմանոցները. ամենէն նշանաւոր է Ս. Մահմուտի գամբանը Զէնպէրլի թաշի մօտ. և այլ կայսերական գամբանք. Հայոց հին գերեզմանատունը ի Բանկալթի, Հայոց և օտար ազգաց գերեզմանատունները Ֆէրիգիւղ (1) և այլ ուր, նաեւ Ցաճկաց գերեզմանատուններ ամեն կողմ, ամեն ազգի տապանաքարերու մեծ ծախսեր եղած են և կըլլան։ մարմարիոն քանդակեալ քարեր և արձաններ, ոսկեզօծ գրեր, Հայոց գերեզմաններէն նշանաւորներն են Պէշճեանի և Ցատեանի գերեզման ի Մայր եկեղեցի, Մուրատեանի գերեզմանը Ս. Թագաւոր եկեղեցի, և այլ շատ վայելուչ գերեզմաններ և արձաններ, նոյնպէս Ցունաց և Հռովմէական Հայոց։ և Եւրոպացւոց (2)։

---

եօք, նուագածութիւնք և ճառախօսութիւնք ի պարտէզն որ զարդարուած էր չքեղ կերպիւ։

(1) Պոլիս զարդներու կ'յանձնարարեմ որ Ֆէրի գիւղի Ֆրանսական գերեզմանատունն այցելեն անչուշտ։

(2) Այս գերեզմաններու համար եղած մեծամեծ ծախսերու վրայ կայ դրելիք, բայց կանխահաս համարելով կը թողումք։ Գաւառներու մէջ սոսկ մէկմէկ հասարակ քարեր դընելով մահարձանի յիշատակութիւն մը կը դրեն և յետոյ նոյն քարերը կը գործածեն եկեղեցեաց շինութեան, խիստ սակաւ է մեծածախ գերեզմաններ։

Պոլսոյ ամեն կողմը կայ մեծ փառաւոր եկեղեցիներ քրիստոնէից, Հայք ունին քառասուն եկեղեցի, նոյնչափ ևս Յունաց, Հռովմէական հայք ունին տասնի չափ, Եւրոպացւոց երեսունի մօտ գումար հարիւր քսան։ Հնագոյն եկեղեցիք են Յունաց և ապա Հայոց. Եւրոպացիք շինած են այս դարուս մէջ ի բաց առեալ Ղալաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին որ կար ի հնումն։ Նշանաւորք են Յունաց Ֆենեռի մայր եկեղեցին, Հայոց Գումգափուի մայր եկեղեցին, Յունաց Պալըգլըի եկեղեցին յանուն Ս. Աստուածածնի Նորոգ շինեցաւ 1830ին ի հիմանց. մեծ նուէրներ եկաւ Ա. Կայսրէն Ռուսաց։ Ունի այազմայ (ակն ինքնաբուղխ ջրոյ) հռչակաւոր ի հնուց վասն կարմրախայտ ձուկերու (1)։

---

(1) Կոստանդին թագաւոր անդ զուարճանար ձուկեր խորտկելով. երբ լուր տուին թէ Օսմանցիք առին Պոլիսը «չեմ հաւատար» ըսաւ եթէ այս տապակի ձուկեր (որոց մի կողմ կարմրած էր եփելով) կրկին ողջ չինան ի ջուր իբր թէ խսկոյն ձուկերը ինկան ջուրը և անտի ի վեր են կարմրախայտ։ Այս աւանդութիւն է առասպել. Կ. Պոլսոյ առման պատմութիւնը չը յիշեր այսպիսի դէպք մանաւանդ Կոստանդին Լէորոլտ կայսրը հայրենասիրութեամբ կռուեցաւ Ֆաթիհի բանակին դէմ, և պատերազմի առեն սպաննուեցաւ մէկ խաբշիկի մը. Կոստանդինի և արաբին գերեզմանները կայ ասօր Պոլսոյ Ունգարանի կողմը Վէֆայ մէյտանին Մաֆա անուն հին խանին մէջ. Կոստանդինի գերեզմանը թարուր է և աւերակ. խաբշիկինը երկաթ վանդակով պատած և վրան կայ մի կանդեղ, կը պատմուի թէ 1855ին գլխարկ դրած Յոյն մը շինել տուած է խաբշիկի գերեզմանը և ապա Կոստանդինի գերեզմանը շինելու մտօք՝ որ յետագուտ է անծանօթ պատճառաւ այժմ

Նշանաւոր է նաեւ Գաթոլիկ Հայոց Փրկիչ, Ս. Ոսկեբերան և այլ Եկեղեցիք. Հայոց Ս. Երրորդութեան Եկեղեցին, Յունաց թագաւորի Եկեղեցին, Լատինաց, Անգլիացոց, Ֆրանսացոց և այլ Եկեղեցիներ ի Բերայ, Ս. Կարապետ Իսկիւտարի, Ս. Լուսաւորիչ Գուզկունճուղի, Ոամանթիոյ, Պէշիկթաշի և այլ Եկեղեցիներ. Հռչակաւոր է հնութեամբ և պայծառ նորութեամբ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցին Հայոց, որ Գինուացոյց ատեն Կաֆացի Հայ վաճառականք շինեցին Ս. Ֆաթիհէ յառաջ և ապա նորոգուեցաւ. բարուկիր. Յովհաննէս (Կոլօտ) Պաարիարքի օրով և կրկին 1834ին։

Այն Եկեղեցւոյն կից է Լուսաւորչեան մեծ վարժարանը. և Հայոց մատենադարանը որ ունի շատ գիրքեր. այժմ նորոգ կը կառուցուի Կեդրոնական վարժարանը գաւիթին մէջ, որ բաւական վիճաբանութեանց առարկայ ըլլալէ վերջ ի զուր գացին անոնց ջանքեր որք կուզէին Հայաբնակ քաղաքներէ միոյն մէջ շինուիլ (1)

---

մնայ աւերակ։ Ֆաթիհ սուլթանը հրաման տուած էր թանակին որ Կոստանդինը չսպաննեն, խաչիկը անգիտութեամբ կամ չարամտութեամբ զԿոստանդին սպաննելուն Ս. Ֆաթիհ հրաման տուաւ սպաննել նաեւ արար զինուորը, Կոստանդինը մեռած տեղն ծպտեալ է եղեր հասարակ զինուորի զգեստով, խաչիկը կը ճանչէ զնա իւր ոտից արծաթեայ ճարմանդներէն և զարնելով կասպանէ։

(1) Մեք ալ կը ցանկայինք գաւառներու մէջ և կամ Պոլսոյ գիւղերու մէջ օգուտ տեղ մը շինուելու այսու հանդերձ գաւառական առածը կըսէ (եղածին շնորհաւոր ըսելու է)

Վարժարաններու և Եկեղեցեաց մանրամասնութեանց վրայ ապագային դարձեալ դրելու խոստմամբ քիչ մ'ալ չրջիմք Պոլսոյ Եղեցիկ պարտէզները։

## Պոլսոյ պարտէզները։

Պոլսոյ պարտէզներ բազմաթիւ և նկարագրութիւնը դժուար է. ամենէն նշանաւորները են կայսերական պարտէզները, մէն մի պալատի զատ զատ անունման շրջութեամբ։ Աբրահամ բաշայի պարտէզը ի Պէյդօղ, Խրտիվին պարտէզը ի պօսֆոր, Ճէվտէթ փաշային պարտէզը ի Պէպէք (1), Կարապետ սէյի պարտէզը Պէօյիւքտէրէ, Ալի և բրէնս Հալիմ փաշայի պարտէզները Արնավուտ գիւղ, հասարակաց պարտէզներ Բանկալթի Թէփէպաշի և այլուր, Տերվիշ փաշայի պարտէզը. Եիւքսէք դալտրբրմ, Աղարեաններու պարտէզը և այլ փաշաներու և հարուստներու պարտէզներ։ Նոյնպէս դէսպանատուներուն պարտէզները մէն մին իւր երկրին ճաշակովը. նման դրախտի ազգի ազգի ծառերով և դոյն զդոյն ծաղիկներով զարդարուած, բնականաձեւ ժայռեր, բլուրներ, ձորեր, ջուրեր, այրեր, քարեր. Եւրոպական և Արարական, Տաճկական Հայկական ամէն կերպ ձեւեր

---

մաղթենք որ գաւառներու մէջ ալ ունենամք բարձրագոյն վարժարաններ, մանաւանդ արհեստանոցներ։

(1) Ճէվտէթ փաշան է արդարութեան գործոց նախարար հեղինակած է գիրքեր և Օսմանեան պատմութիւնը, և ունի մի նշանաւոր գրատուն բիւրաւոր գրքերու։

րով և ճաշակներով։ Արուեստական ծառեր, դափնի-
ներ, ամառ ձմեռ կանանչ ծաղիկներ և ծառեր, աղ-
բիւրներ, շատրուաններ, անտառներ, որսորդութեան
տեղեր, պատշգամներ, վայրենի թռչնոց կայաններ,
ձուկերու աւազաններ ջերմոցներ։

Միստմիոջէ դեղեցիկ և զմայլելի ընդարձակութիւնք
անհաւատալի կերպիւ է։ Եըլտըզի պարտէզը մէկ ժա-
մէն աւելի շրջապատ ունի, բրէնս Հալիմ փաշայինը մէկ
ժամ երկարութիւն, Աբրահամ փաշայինը երեք չորս
ժամ։ այլուր կը մնայ այն փոքր պարտէզները որոնք
հազարաւոր կանգուններ կը չափեն։ ինչ սքանչելիք բնու-
թեան, ինչ զբօսավայրեր տեղի զուարճութեան և սրտի ու-
րախութեան. տիեզերաց արարչին սքանչելեաց և մարդոց
իմաստութեան արհեստ միացած են այս պարտէզներու
մէջ։ պարտէզ պարտէզ, նախնիք լաւ անուն դրած են
դրախտ և արաբք (ճէննէթի) կոչելով։ Եռնկը իրաւամբ
ըսած է «տեղի առաքինութեան և երկայնակեցութեան»
ո՞ւրէր թէ գիտնայի բանաստեղծութիւն և նկարագրէի
այս պարտէզները հարիւրաւոր թուղթերով, կամ գա-
ւառացիք ալ ունենային այնքան կարողութիւն և ճա-
շակ շինելու հայրենեաց մէջ այնպիսի պարտէզներ։
դեռևս գերազանցեր Պօլսոյ պարտէզները, գաւառնե-
րու բնական ժայռեր և կարկաչող վճիտ առուակնե-
րու, անուշ ջրերու առաւելութեամբ։ Որոնցմէ զուրկ է
Պոլիսը։ ընթերցողը պտըտցնելով Պոլսոյ պարտէզները
ապա տանիմ Երիզայի Ս. Լուսաւորչի վանուց արօտա-
տեղին և անկէց Մերճանի ջուր կոչուած առուին ե-
զերքը, Քարբերդի դաշտը, յԱկն, Արապկիրը, Վան,
Մուշ և շատ տեղեր այն ատեն առաջնոյն արհեստն ու

աշխատութիւնք, վերջնոցն բնական դիրքը միացնելով թող գոչէ ԴՐԱԽՏՆ ԵՂԵՄԱԿԱՆ։

Նախախնամութիւնը այնպէս իմաստութեամբ տընկերնած է ամեն բան, ամեն տեղի, ամեն կարգի անձանց տուած է մի կերպ մխիթարութիւն, և ամեն կերպ բարիքներով լցուած ներ անդամ թողած է կարօտ դարձեալ բանի մը. ինչպէս որ Պօլսոյ այսքան փառաւորութեանց մէջ վազուն առատ ջրերու (1) Ղօնտոնը օդի և ջուրի, Բէթերսպուրկը կլիմայի ջերմութեան, Արաբիան ձիւնի եւ այլն ըստ կարգի, հարուստը ունի դրամ՝ չունի ախորժակ ուտելու, ենթակայ հիւանդութեան։ Աղքատը, դիւղացին առողջ, ախորժակը բաց՝ կարօտ ամեն բանի, մին սամուր մուշտակներով տկար, միւսն մերկ և կտոր մը կտաւի կարօտ՝ առողջ։ Մինն խորտիկներով և անուշեղեններով լցուած և հիւանդ։ Միւսն կտոր մը չոր հացի կարօտ և առոյգ։

Մինն ապարանքներու մէջ յղփացած ենթակայ հիւանդութեան. միւսն խոնաւ գետնափոր մութ հիւղերու ներքեւ, կաղմ և առողջ։

Մինն կահաւորեալ թանկագին գորգերով և դոյքերով բժշկի կարօտ՝ միւսն չոր փսեաթի կամ հողի վրայ ժիր և միշտ ողջ։

Մինն ադամանդներու և գոհարներու մէջ թաղուած նիհար, միւսն հին քուրձերով գեղեցիկ և առոյգ։

---

(1) Պօլիսը խմելու ջուրեր ունի քաղցրահամ մեր խօսք վերաբերի ջրոյ առատութեան։

Մինն մետաքսեայ շրջազգեստներով նոր նոր զարդերով իբրեւ սիրամարգ փայլուն՝ և անդոյն, միւսն առեւ ոգեստներով վարդագոյն։

Մինն հարստութեամբ լեցուած գիշերը քուն չունի, միւսն աղքատութեան վերջին ծայրը հասած իրիկուընէ մինչ առաւօտ փառաւոր քուն կը քաշէ։

Մինն հարուստ միլիոնատէր՝ և չունի շնորհք և գութ օգնելու իր նմանեաց, միւսն ունի սիրտ օգնելու շնորհելու և չունի դրամ (1)։

Մինն ձեռքերով դաշկինակ մը չի վերցուներ առողջութիւնը չի խանդարելու՝ և դարձեալ բարակացաւ, միւսն չարաչար կաշխատի քրտինքներու մէջ, հիւանդութիւնը ինչ ըլլալը չգիտեր։

Մինն տգէտ և հարուստ՝ միւսն ուսեալ և կարօտ։

Մինն ունի դրատուն հազարաւոր սսկեղօծ գրքերով՝ չի կարդար, միւսն թուղթի գրուած կտորներու հին լրագիրներու կարօտութիւնը կը քաշէ (2)։

Վերջապէս ըստ Նարեկացւոյն զորն ասեմ կամ զորը՝ խոստովանիմ . . . եթէ աշխարհի մէջ բացառութիւնք ալ չըլլային մխիթարութիւն պիտի չըլլար. (բացառութիւն կը համարուին հարուստ ողորմածներ, հարուստ մարդասէրներ, հարուստ ուսումնասէրք, բարերարք այլովքն հանդերձ։

---

(1) Այն որ կարէ ոչ կամի և որ կամի ոչ կարէ, Պարսիկ փիլիսոփան ալ ըսեր է, «քէրէմտարա տրէմնիսթ, տրէմտարա քէրէմնիստ»,

(2) Ամեն խօսքի և ամեն տեղ բացատրութիւնը յարգելով։

Երկաթուղի և ճանապարհք։

Պօլսոյ ճամբորդութիւնը նաւային է, աշխարհի ամեն կողմերէ կուգան շոգենաւեր անցնելով սեւ ծովի Պոսֆորեան նեղուցէն, և Տարանելի նեղուցէն. նաւահանգիստն է Մարմարայ կ. Պօլսոյ առաջ։ Ունի երկու երկաթուղայ գիծ, մինն կերթայ Անդրիանուպօլիս կեդրոնն է Սէրէէճ. հանդիպելով Դումդաբու, Եէնիգաբու, Սամաթիա, Եէտիգուլէ, Մաքրիքէօյ, Այիսթէֆանոս Զէքմէճէներ և այլն։

Միւսին կեդրոնն է Հայտար փաշա Իւսկիւտարի մօտ, կերթայ գիւղերը, Մալթեպէ, Գարթալ և Իզնիմիտ որոյ գիծը պիտի երկարի դէպ ի Գաղատիա (Էնկիւրի)։ Պօլսոյ ամեն կողմ ունի դրամուէյի գիծեր. կառքերն երկու ձի լծելով 10էն մինչ 40 մարդ կը տանին բաւական արագութեամբ (թէև ունին թերութիւններ)։

Թունել մը (գետնուղի) Ղալաթիայէն Բերայ կը հանէ երկու վայրկենի մէջ, և Բերայէն կիջեցնէ ի Ղալաթիա, գետնին ներքեւը փորած և աղիւսներով կամար (թոլոս) դարձուցած կաչիէ շղթաներու վրայէ շոգիի զօրութեամբ կընթանան կառքերը, կողմնակի (գետնուղին կար ի հնումն ինչպէս Անի, և այլուր բայց կառքերով փոխադրութիւնը նոր գիւտ է ինչպէս շոգենաւ, շոգեկառք. հեռագիր. հեռաձայն և այլն որք 19ՐԴ դարը բարձրացուցին նախորդաց քով)։

Կայ երկու կամուրջ Կ. Պօլսէ ի Ղալաթիա մինն ոսկեղջիւրի բերանը, Մարմարային հատած տեղը Պահէ դաբուէն Ղալաթիա ի Գարաքէօյ շինեալ 1845 յա-

ւուրս Սուլթան Մէճիտի փայտէ՝ և փոխեալ յերկաթ յաւուրս Սուլթան Համիտի. միւսն ոսկեղջիւրի մէջ Ունգափանէ Ղալաթիա Աղապ գափու շինեալ յաւուրս Մ. Մահմուտի 1836 այժմէ երկաթեայ, և ունին 3—400 կանգուն երկայնութիւն և 30 լայնութիւն կարծեաք. անցօղներէ տասը փարայ տուրք կառնուի, բեռնակիրներէ, սայլերէ, ձիերէ և կառքերէ աւելի։

Փողոցներու ճանապարհները որոնք նոր շինուած են լայն ուղիղ և մաքուր, իսկ հին փողոցներ նեղ ողորուն և անմաքուր։

Պոլսոյ տուները և այլ շէնքերը խիստ ի հնումն քարուկիր է եղեր լայն պատերով հին ձև (1), յաճախ երկրաշարժէ մեծ վտանգներ պատահելով քարուկիրը արդիլուեր և բարձրագոյն հրամանաւ սկսերէն տախտակով շինել, այնուհետեւ սկսեր է հրդեհը սաստկանալ. եղերէ այնպէս ժամանակներ որ ամիսոր թաղեր մէկ կամ մի քանի ժամերու մէջ դարձերէ մոխիր. շատ հարուստներ մէկ օրուան մէջ եղած են աղքատ, յետոյ կրկին սկսած են քարուկիր շինել նոր ձեւ, լայն փողոցներով, այժմ հրդեհը չի կրնար այնքան վնասել, այսու հանդերձ քարկիրն ալ կայրի զարմանալի բան. ամեն շաբաթ ամեն ամեն ամիս հրդեհ պակաս չէ։

---

(1) Հին ձեւ քարուկիրը լայն պատեր և վրան կամար եղածները. նոր ձեւ քարկիրը նեղ պատեր քարէ և աղիւսէ (թուղլայ) և վրան կամար չունի այլ երկաթեայ ձողերը շաբելով աղիւսով կը լեցնեն, որ կըլլայ ամուր և վայելուչ, և երկրաշարժի ատեն հին ձեւէն աւելի անվտանգ։

Նորաշէն տուները կը շինուին խիստ վայելուչ կերպիւ նոյնպէս ամարայնոց (եալը)ները. ի պօսֆոր և այլուր. ներշանաւոր տուներ են նախարարներու, փաշաներու ապարանքներ և ամարայնոցներ, դեսպանատուներ և անոնց եալներ, հարուստ անձանց տուներ, պանդանեներու տուներ ի մէջ այլոց Հայ երեւելեաց տուները։ Առաջին կարգի տուներ կահաւորեալ է շքեղ և ճաշակաւոր երկրորդական և երրորդական տուներ ըստ կարգի։ Նոյնպէս Իսլամ Ցոյն և այլ հասարակութեանց տուները։ Դեռևս կայ հին՝ անշուք, տձեւ, ցած և անպիտան տուներ ալ որ բնաւ չի վայելեր Պոլիսի։ Մուցանք քանի մը նշանաւոր հնութիւնք և շէնքեր յիշատակել որոց մին է Զէնպէրլի թաշ ըսուած կոթողը Սուլթան Մահմուտի թիւրպէյին և Վէզիր խանի կողմը. կանգնեաց մեծն Կոստանդիանոս և արար նաւակատիս շինութեան քաղաքին. նուիրելով զայն պաշտպանութեան Ս. Աստուածածնի։

Հնութեանց կարգէն է պին պիր տիրէկ ըսուած դեռնափոր ընդարձակ տեղը հաղար և մէկ սիւներէ, այժմ հաղիւ երեւին երկու հարիւր սիւնք մարմարեայ. ի հնումն ջրշեղջ և այժմ մանարան մեռաքսագործաց։

Պոլսոյ հնութիւնքն են մեծ մասամբ պրիսպներ դուռներ, աշտարակներ նոյնպէս Ղալաթիա Իւսկիւտար (Խրիսուպոլիս), կամ սսկեղէն քաղաք ի հնումն. Քաղկեդոն (Գաալքէոյ) և այլ արուարձանս և գիւղս բաղումս որոց վրայ չկրցինք գրել, ինչպէս նաև Պոլսոյ աղգայնութեանց սովորութեանց տպարաններու լրագիրներու, եկեղեցեաց և դպրոցներու հին ամիրաներու և ներկայ Հայ երեւելեաց վաճառականաց, ար-

հեռաւորաց, գրօսավայրերու, տօներու, և այլ և այլ նիւթերու վրայ, որ յուսով եմք գրել մնացեալ մասին հետ։

Թողելով Պոլսոյ չքեղութիւնը անցնինք Տարտանել ձեւելով միջերկրականի մի կողմը երթանք ընթերցողին հետ քիչ մ'ալ Արաբիոյ կողմը շրջելու։

---

## ՆԱՄԱԿ ԺԲ.

### ՀԱԼԷՊ (1)

1880

Նախորդ տարուոյն Նոյեմբերի վերջերը մեկնեցանք Պոլիսէն անցնելով Տարտանէլի նեղուց (Զանագ գալէ) և մնալով մի քանի օր Զմիւռնիա ապա շարունակեցինք միջերկրականով ճամբանիս, տեսնելով Սագրզ, Բատոս, Մերսինէ՝ հասանք նաւահանգիստն Իսկէնտէրուն, ուսկից ձիերով Պէլէն, Անտիոք, Ճիսրի հատիտ և տարուոյն վերջերու մօտ հասանք ի Հալէպ։

Հալէպ է մայրաքաղաք մեծ, կարեւոր և ընդարձակ։

Հալէպ, ի հնումն Բերիա, Սքալիպօն, կամ Քալէպոն, այժմ կը կոչուի Հալէպ կամ Հալէպ-իշշէհպա. Եւրոպացիք կըսեն Ալէբբօ։

---

(1) Հալէպի վրայ գրած էի մասնաւոր տեղեկութիւններ 1880 թուականի Մասիսի մէջ, և Հալէպի հնութիւնք վերնագրով Զմիւռնիոյ Ա. Մամուլի 1880 փետրվար ամսաթերթի մէջ։

Ըստ Արարատցւոց Հալէպ կը նշանակէ Կթէց, Շէհ-պայ կովի մը անունն էր՝ հելէպիւշշէհպա (կթեց կովը) ղի բնակավայրն էր հայր Աբրահամու, որ ունենալով մի կով՝ Շէհպա անունով անոր կաթէն կը կերակրէր Արարատցւոց բաղմութիւն մը. որ կաթ ուտելու համար կը դիմէին՝ և անոի մնաց այս անուն (աւանդութիւն)։ Նախ շինեց զՀալէպն Սելեւկոս Նիկանովր որ կոչեցին Բերիա յանուն Մակեդոնական քաղաքին. հայերէն յատուկ անուն մը չունի։

Քաղաքը շինուած է հովիտներու և բլրակներու ստորոտը և ունի հիանալի տեսարան իր բարձր բերդովը, պարիսպներովը և շէնքերու հնութեամբը։

Գետակ մը ունի Քուվէյկ նէհրի անուամբ անհամ ջուրով որ կուգայ Անթապի ձաղը գիւղէն՝ և միանալով ուրիշ ջուրերու հետ Հալէպի երեք ժամ մնացած Հայլան գիւղին քովէն մէկ երրորդ մաս մը կը բաժնուի կուգայ Հալէպ. (աւանդութեամբ Ս. Հեղինէ թագուհին բերած է այս ջուր և ինչպէս կերևի հայլան կամ հէյլան բառը Հելէյնի բառին աղաւաղեալն է) մնացեալ երկու երրորդ մասը կանցնի պարտէզներու մէջէն քաղաքին հարաւային կողմէն և Հալէպէն հինգ ժամ հեռաւորութեամբ կը կորսուի Մ--Ը անուն տեղ մը։ Հալէպ յոյժ բարգաւաճեալ էր ի ձեռս Արարատցւոց թէև շատ վտանգներ անցաւ ի ժամանակս Հագարացւոց, Խաչակրաց և Լէնկթիմուրի, որոնք կը քանդէին, կը կողոպտէին կսպաննէին աւերակ դարձնելու կաշխատէին այս նշանաւոր քաղաք. սակայն շէնքերու ամրութեան, Արարատցւոց ու Ասորւոց հաստատամտութեան և խորամանկութեան շնորհիւ դարձեալ կը մը-

նար անսասան. ներքին խռովութիւնք և կռիւք անպակաս էին, երբեմն երբեմն վրանակ Արարք կը յարձակէին Հալէպի վրայ. (մինչեւ այս դարուս առաջին քառորդի Շոմմաբ և Ֆէնէնք շատ ատեն կուգային այս հարուստ քաղաք կողոպտելու, երբեմն մասամբ կը հասնէին իրենց նպատակին, երբեմն չարաչար յաղթուելով վախչէին) քանի քանի անգամներ փոփոխութիւն կրեց մինչեւ որ ինկաւ ընդ իշխանութեամբ Օսմանեան մեծաղօր տէրութեան 1500 թուին և յետ այնու տակաւ առ տակաւ խաղաղեցաւ և աւելի պայծառացեալ դարձեալ եղաւ շահաստան վաճառուց Ասորւոց, միջագիտաց Արաբիոյ և Հայոց։

1822ին մեծ դեռնաշարժ մը ըլլալով քաղաքին մեծ մասը կործանեց և ըրաւ աւերակ, որով լքեցաւ քիչ մը ժամանակ վաճառականութիւն, և պակսեցան բնակիչք, դարձեալ յառաջացաւ։

Եգիպտոսի Մէհմէտ Ալի բաշան երբ ապստամբեցաւ Օսմ. Տէրութենէն, և Նիզիպի առաջ մեր բանակը յաղթուեցաւ, այն ատեն Հալէպն ալ դրաւեց Մէհմէտ Ալիի որդի Իպրահիմ բաշա և ութ տարի նստաւ իբր վալի Հալէպ, ըրաւ բարեկարգութիւններ և շինեց մէկ զօրանոց մը որ ցարդ կը կոչուի (Իպրահիմ բաշա գըշլասի)։

Հալէպի շրջակայքն է Քիլիս, Մըմբիճ. (այժմ կէս աւերակ) Անտիոք, Ճիսրի շուղուր և Ամրդ օվասի առնուն ճախճախուտ դաշտը՝ օդը առողջարար է և տաք եռսուն տարին մի անգամ հազիւ կը տեսնուի ձիւն՝ ի ձմերան։

Բաղում կարաւանք յաճախին ասա սկսեալ Բաբե-

լոնէ՝ Եդեսիայէ, Տիգրանակերտէ, Բարբերդէ, Ուրապ-
կիրէ, Անթապէ, Մարաշէ և այլ բազում քաղաքներէ,
հաղորդակցութիւն ունի նաև Եւրոպայի. Դամասկոսի
Եգիպտոսի և Հնդկաստանի հետ։

Նաւահանգստէն (Իսկէնտէրուն) 33 ժամ հեռու
է։ Ապրանաց փոխադրութիւնը կըլլայ ուղտերու, ձիե-
րու միջոցաւ, մեծ քանակութեամբ ապրանք կուգայ
Եւրոպայէն, մանած, կտաւ, չուխա, երկաթ, շաքար,
սուրճ, ա-հ. և մեծ քանակութեամբ կերթայ ցորեն
բամպակ, քիթրէ, պիստակ (ֆըստըդ) մորթ, օձա-
ձուկ և մետաքսեայ կերպասներ, որ աստ կը շինուին
խիստ արհեստաւոր և վայելուչ, ունի շատ ձիթապը-
տուղ, որոյ երկրորդ անգամ եղած իւղը կը շինեն ա-
ճառ Ընտանեաց և միջադետաց ամեն կողմերու համար.
մինչեւ Կիւմրիւ կերթայ Հալէպի հռչակեալ սապոն.
Հալէպ մեծ կեդրոն է առեւտուրի. կայ ճոխ վաճա-
ռատունք և հարուստ վաճառականք, բայց հոս ալ
Եւրոպացիք մուտ՝ գտնելով սկսած են հետզհետէ իրենց
ձեռք անցուցեալ շահաւոր գործեր։

Հալէպի ժողովուրդը աշխատասէր է, արթուն,
խորամանկ, հեռատես և շահասէր վաճառական և յա-
ռաջդիմութեան սիրահար։

Մետաքսեղէն տարազները, վերմակի, աթոռներու
երեսներ, ոսկի, ըրիչ, ղէնրուբ, ոպլա, մանիա. սենեա-
կի վառոց, վարագոյր, ծրար, սեղանի ծածկոցներ,
մաշլահ, ոսկեծոպ, ղարշֆ, դաշկինակ, Հնդկաստանի տե-
սակ լահանման շալեր, հաղարաւոր տեսակ բաներ
կը շինեն զուտ մետաքսէ, խառն մանածէ և խառն ոս-
կեթելով (գլափտանը)։

Եւրոպացիք բերելով կը ծախեն իրենց աչք խաբող փայլուն և փառուն ապրանքները, փոխարէն կը տանին յԵւրոպա նշանակեալ բոլոր ապրանքները, որովհետեւ դիմացկուն է, հաստատ է և մեռաքսին մէջ խոտ կամ այլ բաներ խառնուած չէ, և թէ իրենց ծախածին 10 ղրուշնոց տարաղին մէջ հաղիւ 3 ղրուշի դրամագլուխ կայ, գնածնուն մէջ անշուշտ 8 ղրուշի դրամագլուխ կայ և մնացեալ երկուսն ալ աշխատութեան փոքր վարձ մի է (1)։

Հալէպի շուրջը ամբողջ լայն պարիսպով պատած է, և երկաթէ եօթը դռներ ունի, պապիլ ճինէն, (դուռ պարտիզաց)։ պապիլ ֆէրրաճ (ղբօսանքի դուռ), պապիլ էնթաքեայ, պապիլ հէտիտ (երկաթեայ դուռ) պապիլ ահմար (կարմիր դուռ) ևն. անուններով։ Տուները շինուած է ծանր քարուկիր խիստ դիմացկուն՝ ամենքէն հասարակ տունը կը դիմանայ 500 տարի, մինչեւ 2000 տարի յառաջ շինուած շէնքեր կան և մնան ցարդ։ Թաղեր, փողոցներ շինուած է ոլորուն ձեւով և ամեն թաղի դլուխ կայ երկաթեայ դուռ. տուներու այն պատեր որ շինուած է փողոցի կողմն՝

---

(1) Ասոնք գրելը անօգուտ է քանի որ ջրի հոսանքի պէս Եւրոպիոյ ապրանքը կուգայ և մենք կը գնենք զայն ինչ որ ալ ըլլայ, չեմք սիրեր տեղացի ապրանքը, որով մեր ոակիները վաղելով կերթայ և գնաց (սէլի) պէս. մնացեալ փոքր մասն ալ երթալու վրայ է, դեռևս մենք չեմք ուզեր արթննալ, դարձեալ Հալէպցիք և ընդ Հ. Արապք առաւելութիւն ունին ուրիշ քաղաքացիներէ որ բնիկ ապրանաց աւելի յարդ կընծայեն։

բարձր հասա, և առանց լուսամուտի է. լուսամուտներ տանը բաց դաւթին վրայ է, այս կարգադրութիւնը ըրած են յարձակմանց տեսն դիմադրելու համար։ Հիմայ նոր տուն շինողներ կը շինեն նոր ձեւ, պարիսպէն դուրս նոր և գեղեցիկ թաղ մը շինուած է (Ադիզիէ) անուամբ, տարիէ տարի կը շատնայ տուներ։ Սովորական լեզուն Արաբերէն է. Թուրք, Հայք, Յոյնք, Ասորիք, Խպտիք ամենեքեան խօսին Արաբերէն և չեն գիտեր իրենց մայրենի լեզուն։ Դիւացողներ բացառութիւն կը համարուի։ Նոյնպէս վայրերու, թաղերու, խաներու, շուկաներու անուններ Արաբերէն է բոլորովին։

Հալէպի կառավարութիւնն է վալիութիւն, ունի իւր իշխանութեամբ շատ քաղաքներ ու աւաններ։ Մաբաշ, Ուրֆա, Անթաբ, Անախոր, Քիլիս, Ցէէր (Զօր) Իսլիպ, Ճիսրի-շուղուր, Էրմէնէզ, Ազիզիէ, Պապը Ճաղպուլ, Սրրուճ, Բում գալէ (Հռոմկլայ), Իսլահիէ Խասսէ, Պուլանըգ, Ալպիսթան, Զէյթուն, ևն։

Ասոնց ներքեւ կը գանուի հարիւրի չափ Նահէյէ և երկու հազար հինգ հարիւրի չափ գիւղեր, որոց ամենքի կեդրոնն է Հալէպ. կուսակալութեան մէկ ծայրէն միւս ծայրը 500 մղոն ճանապարհ կը հաշուեն։

Հալէպի ենթակայ էր 10 տարի յառաջ Ատանա, Հաճն, Սիս, Մէրսինէ, Ցարսոն ևն, որոնք զատուելով եղաւ առանձին կուսակալութիւն. Հալէպի քաղաքին մէջ կայ իբր 20,000 տուն որոց 3,500ը Քրիստոնեայ, 16,000ը Իսլամ, կարծեօք կայ 150 մզկիթ և 250 մէսճիտ դուսմար 400ի մօտ. քանի չափ թէքէ, 100ի չափ խան, 50 բաղնիք, 30 ջաղացք (Ջուրով)

70 ջրերի և լիշու միջոցաւ դարձուցեալ ջաղացք, 80 աղբիւր, 80 սէպիլ (ջուր խմելու տեղ) մէկ պէղէսթէն 1000ի չափ վաճառատուն և 7000էն աւելի կրպակ, 120 ներկարան (լեղակի և այլ գոյներու) 30 մասմանայ (աճառ եփելու գործարան) 100 սրճարան, 100ի չափ հացի բուռ, և այլ շատ մը գործարանք տարաղաղորդութեան և այլ ինչ։

Քաղաքին շուրջ կայ 500ի չափ պիստակի պարտէզ 300էն աւելի ձիթապտուղի պարտէզներ, և 4—500ի չափ սովորական պարտէզներ, որոց քսանէն աւելին յատկացած է հասարակութեան։ որ խուռն բազմութեամբ կը յաճախեն։

Այս պարտէզները ֆէլլահներ կը վարձեն և կը շարեն 500ի չափ կալիեօն (նարկիլէ) որոց մի հատի գին 60 փարայ է, (20 փարայ շիշէն է, հոս կը շինեն Հըրէայք փուլլուղի գործարան մը կայ, 30 փարայ գըլուխն է, (սէր) որ փայտէ կը քաշեն և 10 փարայ ելղեղեայ հարքոտն է։)

Դուռնէն ներս մանողին կը պոռայ մեր տիրէքթօր ֆէլլահը (1) բարձր ձայնիւ, (ֆատտա՛լ եա սէյտի) հըրամմեցէք տեր, մէկ նարկիլէ մէկ սուրճ 10 փարայ, այս է մուտքը. Ժողովուրդը ընտանեօք կերթայ իր հետ տանելով կերակուր, խմելիք, նուագարան։

Այս ժողովուրդը զբօսասէր է և զուարթ, երեկոյին ժամը 9էն վերջ մեծ մասամբ կը լեցուին պարտէզ-

---

(1) Ֆէլլահ կը նշանակէ երկրագործ բայց այժմ կը գործածուի հասարակ մարդոց նշանակութեամբ։

ները որ խիստ ընդարձակ են ամեն ծառի քովէ, «հա-
լէ՛լ, եա՛լէ՛լ, եա՛ էլռէ աղաղակներ և կերպ կերպ նը-
ւագներու ձայներ կը լսուին։

Այս քաղաք բոլորովին տարբեր է իմ տեսած ու-
րիշ քաղաքներէ, շէնքեր, բնակիչք, սովորութիւնք,
զգեստներ ուրիշ կերպ։

Շէնքերը ամենէն աւելի հեռաբրբրական է իր հը-
նութեամբ՝ յաւիտենական քաղաք մը, Հայր Աբրահամէն
կսկսի, Հադարացւոց, Թաչակրաց, Լէնկթիմուրի, Հա-
յոց և Ասորւոց Սէլճուքներու, Էմէվիներու և այլ ի-
խանութեանց յիշատակները աչքիդ առաջ կերեւի, ա-
մէն տեղ հին արձանագրութիւններով Քիւֆէ (1) գը-
րերով հէլէ գրերով ծաղկեայ և այլ կերպ գրերով, եր-
բեմն հնութիւնք կերեւի որ Եւրոպայի նոր արհեստից
բնատիպն է. օրինակ Եւրոպա հնարեր է դրամակղներ,
(հին ձեւը որ մեծ մեծ դամեր ունին վրան) ահա ա-
նոր ճիշդը հաղրէթի Անէի թէքքէին դրանը վրան է,
ի հեռուստ ֆոտ մը կը կարծես՝ քովը կերթաս որ հաստ
որմաքար միակտոր մի քարէ դուռ մը. և ո՞վ գիտէ երբ
շինուած։ Մեք կը կարդայինք պատմութեան մէջ Հեղինէ
Թագուհի, Կիլիկիոյ իշխաններ, Ասորւոց պատմութիւնք
մեզի կերեւէր ոմանք երեւակայական ոմանք չեղեալ
բաներ. ահա հոս անոնց կենդանի յիշատակները կը
տեսնես կը լսես ամեն օր։ Հալէպի բերդը 4000 տար-

---

(1) Թուրք տառերը որ նաեւ Արաբերէն և Պարսկերէն
տառերով խառն է ունի 12 տեսակ գրեր, քուֆի, հէլի, սի-
լիս, բիդէէ, թէալիդ՝ էլէն։

ուան շէնք է կրսեն։ և հաղիւ սկսած է աւերակու-
թեան, այն ալ երեսէ ձգուելուն համար, եթէ քիչ մը
նորոգութեան հոգ տարուի 14,000 տարի ևս կրնայ
դիմանալ։ Թիմուր-լէնկ (կաղ) Հալէպը դրաւած ատեն
10,000 մարդ կը յատկացնէ բերդը քանդելու համար,
(որուն ուրախութեան առարկան էր քանդել) վեց ա-
միս կաշխատին հաղիւ զառիվար բլուրին վրայի սալա-
յատակը քիչ մը քանդելու կարող կըլլան. տեսնելով որ
տարիներու կարօտ է՝ ապա կը թողուն։

Բերդին մէջ 400 կտոր շէնքերու աւերակներ նշ-
մարին ոմանք դեռ կանգուն, Եկեղեցիի մը միայն ա-
ւաղանը և փլատակը կերեւի, հաւանականաբար Հռով-
մայեցիք Հալէպը դրաւած ատեն շինած, այնքան ար-
ձանագրութիւնք կան ԼԵՌՖԷ գրերով՝ որոց լուծումը կը
կարօտի տարիներու և գիտնոց. շրջապատի ահաւոր
պարիսպը, աշտարակները, ջուրի խրամը, նկուղները,
դեռնատիոր ճամբաները, կամուրջը, պատշգամը, դրա-
ները, քանդակեալ արձանները. նկարները որ հին ա-
ատեղնուան քարագործութեան և ճարտարապետութեան
արհեստներու բարձրութիւնը կը յիշեցնեն, եւ այժմ
ահեղ տեսարան մը ունին. ահա այսպիսի մի հնութիւն
քանդուելու և աւերակ ըլլալու դատապարտուած է։

Ոչ սակաւ արժանի է նկարագրել ի կարգի հնու-
թեանց՝ թէքբէներ, մինարէներ, թիւրպէներ, ի մէջ
այլոց մեծ մզկիթը, ՈՒԼՈ ՃԱՄԻ կամ ՋԷՓԷՐԷՅԷ ճամիսի
որ գլխաւոր հնութիւն մ'է։ Այս մեծ մզկիթին կից կայ
փոքրիկ մզկիթ մը ՃԱՄԻ ՀԷԼՎԷՅԷ անուն, շինեալ ի Հեղի-
նէ թագուհիէ մայր Կոստանդինի 200 թ. Քրիստոսի
յանուն 10 առաքելոց տասը սիւնակներով խաչաձեւ

ինչպէս կը վկայեն ներկայ արձանագրութիւնք և աւանդութիւնք և Հալէպի ձեռագիր և անկանոն պատմութիւն։ (Հէլէվի բառն ալ Հայլան բառին պէս Հէլինէ բառին աղաւաղեալն է)։

Մզկիթի փոխուած է երջանկութեան ժամանակի (ղէմանի սաատէթ) (1) և հիճրէթէն՝ 294 տարի վերջ որ ըսել է 1000 տարուան մի շէնք (հիճրէթ տաճկաց թուականն է որ կը սուի թարիխի հիճրէթ ամիսները լուսնի վրայ կը հաշուին որ կը սեն Արէպի, իսկ Հռոմէական ամիսներուն կը սուի թարիխի շէմսի, (արեգնային) և Քրիստոսի թուականին կը սեն թարիխի միլատի)։

Այս մզկիթին շինութիւնը կսկսի նախ Մէլիքի Հիշամ, (Էմէվիներու կամ իւմեանց ամիրապետը). և կը լրացնէ իր որդին Սիւլէյման, որոյ եղբայրը շինած է Դամասկոս (Շամ)ի մեծ մզկիթը ԷՌԷՎ անուն. որ այժմ կոչի (ՈՓ ԳՈՐԷ) ճերմակ աշտարակ։ Ըստ դուրանի Քրիստոս վերջին գալստեան ատեն այս մինարէն պիտի իջնէ։

Հալէպի մեծ մզկիթի անունը Զէքերիէի փոխած է հիճրէթի 399 թուականին։ Զէնկիպանի ամիրապետներէն Նուրէտտինի Ամիլ իշխանը, Ս. Զաքարիայի գերեզմանը Հալէպի միջնարերդէն կը փոխադրէ այս ուրուճամին որ կը սուի Զէքերիյէ ճամիսի, այս մեծ մզկիթը

---

(1) Տաճկերէն և Արաբերէն խօսակցութեանց մէջ մարգարէի ատենուան կը սեն (ղէմանի սաատէթ) երջանկութեան ատեն։

և գաւիթը ու շուրջը գտնուած շէնքերուն գեղեցիկը կարծեօք 200,000 քառակուսի կանգուն է։ Փոքր մզկիթին պարտէզն է եղեր, գաւիթն է խիստ ընդարձակ զարդարեալ մարմարիոն և կրանիթ քարերէ աղբիւրներով և շատրվաններով։

Մզկիթը երկուքի բաժնուած է. մին հէնիֆիներու (1) և միւսն շաֆիիներու, ունի արձանագրութիւնք ։Ե։Ֆ։ մեծ գրերով, մեք միայն մէկ հատը կրցինք օրինակել որովհետեւ այս երկու մզկիթն ալ մնալ արգիլեալ է Քրիստոնէից համար։

«Իմրա պի Թամիրիհի, պատէլ հարիդ, մէվլանա սուլթան, իպնիս սուլթան—իլաաղամ իլ—մէլէք էլ մանսուր, սէյիֆէտտիւնեայ վէ էտտին Ղլալուն 670։

Թարգմանութիւն

Հզօր, յաղթող, և մեծ թագաւոր՝ որդի թագաւորի, սուր աշխարհի և օրինաց. Ղլալէն հրամայեաց նորոգել յետ հրդեհի, 670 թուականի։ Փոքր մզկիթի առաջ կար հին խաչարձան մը, արձանագրութիւնք Ա. բարերէն էին և աւրուած, մեծ իմամը ինձ պատմեց թէ այս քարին Եւրոպացի մը 500 Օսմ. լիրա տուաւ չի

---

(1) Խալամութիւնը չորս կրօնքի բաժնուած է, հէնիֆի, շաֆէի, յէնպէլի, մէլիքի, մեր տէրութեան պաշտօնական կրօնը հէնիֆիի ինչպէս նաեւ բոլոր Պօլսոյ և Անատօլուի Թուրք Խալամները, շաֆէի կը գտնուի Հէրքեարի կողմերը, և Տիգրանակերտէն սկսեալ Արարիոյ կողմեր նոյնպէս յէնպէլի և մէլիքի։ Այս չորս յարանուանութիւն հիմնապէս մի է։

տուի, և հիմա շատ՝ կաշխատին գողնալ բայց չեն կրնար։

Մղկիթներու ամենքն ալ կերպ կերպ հնութիւնք են. բերդին միւս կողմը անցնելով կը տեսնեմք շատ հնութիւնք, և հազրէթի Ալիին թէքքէն որոյ մէջ 100 օխայի ծանրութեամբ ձուպաձեւ քար մը, ջրի հոր մը, քարէ կոնք մը կայ, քարը Ալիին գաւազանն է, հորը Ալիին հորն է, և կոնքին մէջ իր ուղտը կը ջրէ եղերբսա պատմութեան աւանդապահ տերվիշի. այս թէքքէին դուռն է մէկ քար է հաստ և հին, որ նմանի. հին դրամարկղի, վրան քանի մը թռչնոց պատկեր կայ գիր չտեսնուիր։

Հիմայ հոս ուխտատեղի է, ձեռքերը ու ոտքերը հով (ըմաթիզմ) ունեցողները կերթան ուրբաթ կէս օրին, տերվիշը հորէն ջուր քաշելով կը լցնէ կոնքին մէջ հիւանդը ձեռքեր կամ ոտքեր այն ջուրին մէջ դընելով կը բժշկուի քանի մը վայրկեան վերջ։

Հեռաւոր տեղեր աղգական կամ բարեկամ ունեցողներ կերթան ուրբաթի կէս օրին և հորին բերնէն վար կը պոռան և վարէն պատասխան կուգայ, ձայն կը լսուի բայց պատասխանին մեկնութիւնը տերվիշը գիտէ։

Նիհարներ, հիւանդներ, երկչոտներ, կերթան ուխտի և կը քսեն երեսնին ձեռքերնին քարէ գաւազանին և կզգենուն քաջութիւն։ Կարգ մը աւելորդապաշտութեանց ենթակայ է Արաբիոյ Թուրք ժողովրդեան, ինչպէս նաեւ Քրիստոնեայ ժողովրդեան ռամիկ մասը,

Այս թէքքէին մէջն է (ըստ տերվիշի), Ալիին գերեղմանը (1). թէքքէն բոլորովին աւերակ ըլլալու վը-

(1) Ալին մեռած ատեն երեսը ծածկեալ ուղտապան անծանօթ Արաբ մը եկաւ Ալիին մարմինը ուղտի վրայ դնելով

բայ է։ Թէ.քէ.քէն 200 մէթր հեռի կայ ուրիշ մի մըզ-
կիթ ճամբէ Ռըբոշ և ալիոռ Քոշայ անուամբ. այս ճա-
դին շէնքը խիստ հոյակապ է մարմարեայ հաստ սիւ-
ներով, միլիոններ ծախսուած է շինութեան՝ 1000 տա-
րի յառաջ շինուած է, լի է ամեն կողմ արձանագրը-
րութեամբ, արձանագրութեանց մէջն եղբակցութիւ-
նը «խելք ունեցողը դլուխը թող վնտռէ» գրուած է,
իբր աւանդութիւն կը պատմեն թէ՝ մինարէին գագա-
թը թանկագին գոհար մը պահուած ըլլալով՝ խորա-
մանկ Պարսիկ մը կը նշմարէ այս արձանագրութենէն,
գիշերայն կը դողնայ և կը տանի Պարսկաստան։

Հաղարաւոր հնութիւնք կան ի Հալէպ, Անտիոք և
շատ մը դաւառներ և գիւղեր, ինչպէս նաեւ Պիրէճիկ,
Պալդղ և այլ տեղեր։ Անդլիացիք և այլ Եւրոպացիք որ
ինչպէս Նինուէի բոլոր հնութիւնքն փոխադրեցին յԵւ-
րոպա, հիմայ ալ ինկած են այս կողմերը, ամեն տեղ
կը քննեն, կը գտնեն, կառնեն կը տանին, (չեմ գի-
տեր տեղային կառավարութիւնք ինչո՞ւ այս կարեւոր
կէտը ուշադրութեան չեն առնուր, և ինչո՞ւ թողելու
է որ այս յաւիտենական և հին աշխարհի քաղցր յի-
շատակներ փոխադրուին, կորսուին կամ աւրուին)։

Հնութեանց կարդէն է Հայոց եկեղեցին յանուն
40 Մանկանց. որ դատնի ամուր պարսպաւոր ընդար-

---

տարաւ, այսպէս կտակած էր ողջութեանը, իր որդւոյ Հասան
Հիւսէյնի, քիչ մը վերջը որդիքը կտակածելով. արաբին ետե-
ւէն վազեցին։ Արաբը երեսի ծածկոցը բացաւ և տեսան որ
իրենց հայրն է ուղտապանը, այս հրաչքէն վախնալով դարձան
և իբր նշան այս գերեզմանը շինեցին կրսկ աւանդութիւնը։

ձակ մի բաղմամարդ թաղ ուր բնակութիւն է խառն քրիստոնեայ ազգաց։

Պարիսպն ունի զոյգ երկաթեայ մեծ դուռներ, մինն առ հարաւ, ճիշդ յանդիման դրան 40 Մանկան եկեղեցւոյն՝ որ ունի դաւիթս կրկին։

Մեր եկեղեցւոյն արևելից կողմը որմակից է Հռոմէական մառանեայ եկեղեցին։ Նորա որմակից դէպ Արևելս՝ Հայոց միւս փոքր եկեղեցին յանուն Ս. Աստուածածնի, և անտի դէպ հարաւ եկեղեցին է հին Յունաց. սոյն եկեղեցւոյն և երկաթեայ մեծ դռան (1) միջավայրն է Հայոց ընդարձակ և քարակերտ առաջնորդրան։

Մեծ դրան ձախ կողմն է Հայոց երկսեռ վարժարանները՝ դաւիթները ամբողջ սալայատակ է, և Հայ մեռելաց թաղեալ կան ի ներքս սալայատակի, և մահարձանք դրեալ ի վերայ որմոց եկեղեցւոյն։

Երկու դրունք սեպհականութիւնն է հին Հայոց քանզի Հայք ունին ասա 6–7 հատոր շինուածք իսկ Մառանիք և հին Յոյնք (2) մի մի փոքր եկեղեցի։

Հայոց այս մայր եկեղեցի ի հնումն պաճուճեալ

---

(1) Մառանիք և ընդ նոսին բոլոր Հռոմէադաւանք ուղած են դրաւել զմեծ դուռն և չեն յաջողած, և արդէն պատմութիւնք, աւանդութիւնք, բացարձակ կը վկայեն որ այսեղ ամբողջ Հայոց սեպհականութիւն է. իրենց ծանօթ հիւրասիրութեամբ տուած են մի մի փոքր տեղեր իրենց Քրիստոնեայ եղբարց Ս. Եկեղեցի շինելու համար։

(2) Հալէպ Յունաց հին Յոյն և Հայոց հին Հայ կըսեն. Հռոմէական Յունաց նոր Յոյն, Հռոմէական Հայոց նոր Հայ. (Էրմէն ճէմաթ Էրմէն աթիդ) նոյնպէս (Բում ճէմաթ Բում աթիդ։

էր ընտիր զարդերով, Չինական յախճապակիներով և միւսիոն նկարներով։

Մեծ խորանի կամարի ամբողջութեան չափով յատկապէս Չինաստան շինուած պատրաստուած և խնամով բերուած շարուած էր. Ս. Աւետարանչաց, հրեշտակաց և այլ պատկերներ, Հայ տառերով արձանագրութիւններ, և Ս. Աւետարանի պատգամներ (Հայ տառերով Հայ գրերով կրսեմ Չինաստան շինուած) այսպիսի մի սքանչելի բան այսպիսի մի յիշատակ քանդել կուտան, այսինքն այն պատուական շինիները իր հնութեան մի կոչտութիւն փրցուներով կիրով կը ծեփին, և այն շինիներու կտորուանքը կը լցնեն եկեղեցւոյն մի անկիւն։

Ինչ խմաստակութիւն, և ինչ անխելքութիւն, այն կոտորածներու կտորները անգամ հնախոյզներ դնել կուզեն սուղ գիներով. ապա ամբողջութիւնը ընթերցողը թող անօրինէ։

(Այսպիսի շատ հնութիւնք կորսուած է անհետացած է. Օսմանեան երկրէն, ոմանք Եւրոպայիք կը տանին յԵւրոպա կամ այլուր) ոմանք ինքնին կանհետանայ. նոյնպէս Հայոց բազմաթիւ եկեղեցիներու, վանքերու մէջ գտնուած հնութիւնք տակաւ առ տակաւ հատնելու վրայ է մինչև իսկ անօթներ և նշխարք կը պակսին (1)։

Ժամերգութիւն կըլլայ միշտ 40 Մանկան եկեղե-

---

(1) Մինչև ցարդ դեռևս մէկ մայր տոմար մը չկայ թէ վանքեր, եկեղեցիներ, ի՞նչ կալուածներ ունին և թանունները որո՞ց վրայ է և որքան հնութիւնք կան որքան եկեղեցւոյ անօթք և այլ նիւթեր, նոյնպէս գա-

ցին ։ իսկ միւս (Ս. Աստուածածնի) եկեղեցին տօնի օրեր ։

40 մանկան դրան վրայի հին յիշատակագիրն ալ կորսուած է, այժմ գտնուած արձանագրութիւնք հետեւեալք են ։

Հարաւային դրան վրայ Հայ տառերով

«Ի ժամանակի պարոնութեան Կիլիկիոյ, և առաջնորդութեան Տեառն Յովհաննէս Կաթողիկոսի երկրորդ շինութեամբ նորոգեալ էր յարեւելից կողմանէ դուռն սոյն քառասուն Մանկանց եկեղեցւոյ Հայոցս, իսկ այժմ ի հարաւոյ կողմն փոխադրեալով սոյն դուռն երրորդ անգամ շինեցաւ ի Կաթողիկոսութեան Տեառն Մկրտչի Եպիսկոպոսի և Ջանիւք քահանայից և ժողովոյն ազգայնոց 1869 ։

Արաբերէն տառերով,

«Թէֆէտտիւտ սալիսէն պէքիւնեատ էրպէյին շէհիտ իւլ մէօմին էլ Լուսաւորչին, պի նագլիհի հէտտ էլ մէքեան 1869

(Իմաստը հայերէնի մէջ կարդացուած է։)

Ուրիշ մի արձանագրութիւն

Ի ժամանակի Սուլթան Սիւլէյմանի, և Կաթողիկոսութեան Յովհաննու ևն. 934, ՌՁԴ Հայոց թ.

Ուրիշ մը

Ի ժամանակի Սուլթան Մէհիտի և Կաթողիկոսութեան Միքայէլի ևն. 1849 Ռ. թ,

---

տառերը չատ տեղեր տոմար չկայ. տեղիս տեղիս թղթականք նոր սկսած են տոմարներ հաստատել. ուստի կէտ կարօտ է մի անհրաժեշտ անօրինութեան ։

Ս. Աստուածածնի Եկեղեցւոյն դրան վրայ
Արաբական տառերով

Էնա հու էլպապ վէ էյ ինսանէն։ եա խիւլֆէա
եիւխլէս։ եուտխէլ ու եուխրէճ վէ ճիւտիւլ մէրէա։
(Թիւ չունի)

Թարգմանութիւն

Ես եմ դուռն ով որ մտանիցէ ընդիս փրկեսցի։
մտցէ և ելցէ ճարակ գտցէ։

40 Մանկանց Եկեղեցւոյ խորանին խիստ հին վա-
րագոյրին վրայ կայ պատկեր Խաչելութեան և արաբ
տառերով գրեալ։

Էսա էլ Մէսիհ մէլիք էլ Եահուա
(Յիսուս Քրիստոս Թագաւոր Հրէից)

Եկեղեցւոյ ժամերգութիւնք կը կարդացուին ա-
մանք օտար եղանակներով, ամանք խորթ։ քահանայից
և դպրաց ու մանկանց շատեր Հայերէն չգիտնալովին
հայկական այն քաղցր եղանակներու շատեր փոխուած են։

Ժամերգութիւնը Հայերէն է, բայց աւետարաններ
ըմ ամանք, քարոզներ, թէ Հայերէն թէ Արաբերէն, ծա-
նուցումներ բոլորովին Արաբերէն է. քահանայք ան-
դամ Եկեղեցւոյ մէջ Արաբերէն կը խօսին (1). դանձա-
նակը ժողովրդեան մէջ տարած տանն կըսէ ԷՐԲԷ
ԵՏԷԷ ԱԼԼԱՀ ԷՏԷ-Ը ԷՆ-ԷՆ. Աստուած ողորմութիւնդ
շատցնէ վարձահատոյց ընէ։

Հայոց երկու Եկեղեցիներէ զատ կայ նաեւ 17 Ե-
կեղեցիք և մատուռք այլեւայլ քրիստոնէից։

---

(1) Ինչպէս Պօլսոյ Տ. Պապաներէն ամանք ալ Տաճկերէն
կը խօսին։

Մի եկեղեցի ընդարձակ և պայծառ 500 տուն (նոր) Հայոց, (Հռովմէական)։

Երկու մեծ եկեղեցի 1000 տուն նոր Յունաց։ (Հռովմէական)։

Մի եկեղեցի 300 տուն նոր Ասորւոց։ (Հռովմէական)։

Մի եկեղեցի 500 տուն նոր Մառոնիներու։

Մի մատուռ 20 տուն Բաղդէացւոց (քիլտանի)։

Մի եկեղեցի 80 տուն հին Յունաց։

Երկու եկեղեցի Լատինաց 55 տուն Լատինաց։

Մի եկեղեցի 20 տուն Հայ Բողոքականաց։

Երկու Սինակոկայ 500 տուն Իսրայէլացւոց։

Մատուռներ և վանքեր որք չունին ժողովուրդ չինեալ ի կողմանէ Ֆռանչիսկեան, Յիսուսեան, Դոմինիկեան, Գարուչին և այլ միաբանութեանց։ Հալէպն է կեդրոն Հռովմէականաց, ազգապետները են կաթողիկոս, Պատրիարք, Եպիսկոպոս ևլն։

Հրէայք բռնած են քաղաքի առևտրական շահաւոր ճիւղերը և են ճարպիկ ունին շատ հարուստներ (1)։

Հին Հայերը հազիւ կըլլան 300 տուն բնիկ, իսկ պանդուխտ միշտ գտանին անդ առաւել քան երկու երեք հազար անձինք, վաճառական, արհեստաւոր և այլ գործերով զբաղեալ, որք կուգան վանէն սկսեալ եօթանասուն ութսուն քաղաքներէ ինչպէս նաև շատ մը սասունցիք որք են հացագործ։

---

(1) Մինեւոր Մուսէ անուն մի Հրէայն ունի մեծ հարստութիւն և անուն, կը վարէ հիւպատոսութեան պաշտօն, կայ նաև ուրիշ հարուստ վաճառականք։

Հալէպի բնիկներու մէջ սակաւ են հարուստ կամ նշանաւոր անձինք և այժմ եղածներն ալ դարուս ընկղմեն եկած հաստատուած են, հոն ինչպէս Սեթեան, Խարաճեան, Տ. Մարդարեան, Գալչինճեան, Եկաւեան։ Պանդուխտներէ նշանաւորք են Արապեան, Քէշկէկեան, Գարայեան, Շողիկեան, Փիրաեան, Տապաղեան, Թահմազեան, Կ. Գրիգորեան և այլք։

Հին Հայոց (մեր) Եկեղեցին ունի 40 տուն քարուկիր, որոց եկամուտը ինախնումն կը ծառայէր անհատից, այժմ 400 ոսկի եկամուտ կը բերէ կէսն վարժարանաց և կէսն տեղական ծախսի յատկացեալ։

Գալրոցները հին դրութեան մէջ են, այս տարի (1880) Կիլիկեան ընկերութիւնը սկսեց բարեկարգել ինչպէս նաեւ սատանձնեց Հաճբնի, Զէյթունի և այլ վարժարանք։ Բնիկ և պանդուխտ վարժապետներ և Տ. Վ. Զօրեան վարժուհին կաշխատին անձնուիրութեամբ։

Եկեղեցին ունի մի ագարակ Աշէրէ թաղի քով արտաքոյ պարսպին և այժմ կրնայ տան համար ծախուիլ մեծ գինով սակայն վեճի և դատի ներքեւ ինկած կը մնայ (1)։

Քրիստոնեայ աղգաց միւս վարժարանները հին դրութեան մէջ տեսչութեամբ կղերաց, յառաջադէմ է Լատինեանց միաբանութեան դիշերօթիկ վարժարանը,

---

(1) Ցիշեալ ագարակը այսօր կարժէ 15,000 լիրայ. և քիչ աշխատութեամբ կրնայ ձեռք բերուիլ շնորհիւ Օդոստափառ Ինքնակալի արդար օրինաց, Պատրիարքարանի եւ Ս. Կաթողիկոսի եւ Հալէպի ազգայնոց ուշադրութեան կարօտ։

մէն մի թոշակաւոր աշակերտք կը վճարեն տարեկան 15 լուիճ ոսկի. և աղքատք ձրիապէս։

Բոլոր վարժարանաց պաշտօնական լեզուն է Արաբերէնը նոյն իսկ հին Հայոց վարժարանի տղայք կը խօսին ընդ միմեանս Արաբերէն և բնիկ տղայոց անունները ալ իրենց ծնողաց անունին նման Եուսուֆ, Իպրահիմ; Թեոլիս Ֆէտտալ, Ճրճիս, Ճէվհէր, Եագութ և լն։

Արք կգգենուն Արաբական, Եւրոպական, Թուրքական և հին Հայկական զգեստներ, և շատեր գլուխնին ճերմակ (ապանիայ) կը կապեն. պանդուխտ մը երբ Հալէպ երթայ բնաւ չկրնալ ճանչել Իսլամը կամ Քրիստոնեայն, ոչ զգեստէն, ոչ լեզուէն և ոչ անունէն։

Կանանց զգեստներ և զարդեր խիստ ծանրագին են, շատ մը աղամանդներու հետ նաեւ իրենց վերարկուներու շուրջը կը շարեն մարգարիտներ, ունին այլ ծանրագին զգեստներ ինչպէս լահօռի շալերէ շրջազգեստ Եւրոպական և Թուրքական ամեն կերպ զգեստներ, փողոցներու մէջ կը հագնին նոյն իրբ զարդ, կատարեալ է Ասորական և Արաբական պաճուճանք և ձեւեր։

Սովորութիւնք են Արաբական և Ասորական բնաւ չեն փոխեր իրենց նախնական սովորութիւնքն, հիւրասիրութեան մէջ քաղաքավարական ձեւերը ծայրայեղութեան տարածեն, հիւր մը դռնէ ներս մտնելէն ըսկսեալ մէկ ժամ կը տեւէ միայն ընդունելութեան պատշաճութիւնք նարկիլէի սուրճի և անուշեղինաց մատուցումը՝

Տանը մէջէն սկսեալ մինչեւ երեք տարեկան տղայք կը դիմաւորեն զհիւրն. և կսկսին արաբերէն բարի ե-

կա.ք. հարիւր անդամ բարի եկար տէր. հազար անդամ բարի եկար, պատուեցիր զմեզ. պարտաւորեցուցիր. խնդութեամբ լեցուցիր։

Երջանիկ ըլլաք զմեզ. շատ դոհ եղանք. չափազանց ուրախ եմք, տուներնիս խնդութեամբ լցուցիք, անհունս յարգեցիք. փառաց հասուցիք զմեզ, այս ի՞նչ բաղդաւորութիւն, ձեր ծառաներու արտմութիւնը փարատեցիք, լուսաւորեցիք մեր տունը ևն. հազարաւոր բառեր։

Դարձեալ կըսեն Նարկիլէ (1), անուշեղէնը և սուրճը բերած ատեն. վերջապէս մինչեւ մեկնիլը կը շարունակեն և մեկնած ատեն տանը բոլոր անդամք մինչ դուռը կը լեցուին, ճամբեղու պատշաճութիւնք կսկսին արդեօք ուրիշ ատեն այս փառաց պիտի հասնի՞մք, այս պատիւը պիտոր ունենա՞մք, մի՛ մոռնաք ձեր սպասաւորները (կամ աղախինները) խնդալով դլուխնին ծռելով մինչեւ որ հիւրը այլևս չերեւի կը շարունակեն, հիւրընն ալ պարտաւոր է անոնց խօսից պատասխանել մինչեւ ի մեկնումն։

Արաբական լեզուն է ճոխ, արձակ, հարուստ և գիտնական, հնչումները են շեշտաւոր և սուր։

---

(1) Այր և կին (նարկիլէ) կը գործածեն մեծ մասամբ. մէն մի տուն կը գտնուի հինդէն մինչեւ քառասուն (նարկիլէ) արծաթապատ և զարդարուն. հիւրերուն անհրաժեշտ է նախ (նարկիլէ) և ապա անուշեղէններ մի քանի տեսակ, և ապա սուրճ. ընդհանրապէս սիրահարեն անուշեղինաց որ ամէն քաղաքէ շատ և տեսակաւորը կը շինեն Եւրոպայէն ալ կուգայ և կըսպառի առատ։

Ամէն բառ ունի արական և իգական. մեր գրաբառին պէս ինդիրը բայէն վերջ կը դնեն. ինչպէս (ֆէթհ էլպապ) բաց դռուռն, (սէ.ջրէլպապ) դոցէ ըզդուռը։

Քանի մը բառ

Մէյոռ, ոբՌոռ, պէՌ, ՀՀՀ, էպ, էմմ, պէյՌ, Պարոն, տէր, տիկին, աղջիկ, աղայ. հայր, մայր. տուն։

Ոճը, ձեւը, հնչումները զմայլելի են։

Լեզուն այնչափ հարուստ և հրապուրիչ ըլլալուն բնաւ հոգ չեն տանիր մայրենի լեզուներին սորվելու, արաբերենը բաւ կը համարեն իրենց (1). իսկ այն տուները որ կը խօսին հայերէն՝ թուրքերէն՝ չի նմանիր մեր խօսածներու, հայ մը և թուրք մը կզմայլի թէ մեր լեզուն այս ինչ քաղցր լեզու է եղեր. որովհետեւ արաբերենի պէս կը հնչեն սուր, և կը խօսին շեշտելով. ձեռաց և գլխու շարժումներով և աշխուժիւ։ Արաբական լեզուն ունի բազմաթիւ առածներ և բառախաղեր։

Օրինակ.

Էլ ըֆֆիդ, սիւմմէթ—թարիդ. ընկերը ընկերին ճամբուն կը հետեւի։ ինչպէս տաճկերէնն է (քիշի ըֆֆիքինատէն աղար)։

---

(1) Մինչեւ իսկ կըսեն թէ ինչպէս մարդ ըլլայ որ չի խանայ Արաբերէն։

Գեղեցիկը վասն գեղեցկութեան. ազգեն վասն Աստուծոյ (սիրել ընդունիլ).

Ձեռք պարդնելը մօրուքի խնդալ է.

Մի փախցուներ պատեհութիւն.

Աշխատեմ հարստանալու. հարստացիր հանգստանալու համար.

Իր շահուն անհոգը՝ նման է ատանակի.

Խնդա՛ զուարթ եղիր պարապոյ տաեն. կրակուբոց գործի տաեն.

Հիւրը մեծարել. Աստուած սիրել.

Կայ հազարաւոր առակներ կարճ. ազգու և տրամաբանական. որոց չատը Աւետարանի և Գուրանի պատգամներն են ինչպէս, զոր ինչ կամիս արասցեն քեզ մարդիկ և դու արասցես ի նոսա։

Սիրել զսիրելին, ատել զատելին։

Բառախաղ

Արքա մըլեթ, ապեթի մըլպեթ. հալիպ ըթթօր. ըֆհեմ եա հրմար.

Թարգմանութիւն.

Թելէն բարակ հաւկթէն ճերմակ. կովի կաթը. գիտցիր աւանակ.

Բառախաղ.

Գիտմար պէս սէվմա թաբ սոյ լէ քաֆֆի, քաֆֆի լէ թուրսոյ, թուրսոյ լէ քաֆֆի, քաֆֆի լէ թուրսոյ. քանիցս կրկնել.

Թարգմանութիւն.

Ձեղանն է գամ մը, ափրս գամին, գամը ափիս ափրս գամին, գամը ափիս. քանիցս կրկնել.

Այս բառախաղը պիտի ըսուին շուտ շուտ, որոց

հնչման և մասնիկներու կամ հոլովմանց ամենափոքր սխալ մը կը վերածէ ծիծաղելի խօսքերու։

Գործի մը ձեռնպահութեան նպատակը հասկցնելու համար կըսէ,

Էս սէլամ՝ եէճիւրբէլ քէլամ, էլ քէլամ՝ եա ճիւրբէլ պաթարդ. հէտա սէլամէթ, նէ սէլամ նէ ալէյք էս սէլամ, վէսսէլամ։

Թարգմանութիւն

Բարեւը խօսքը կը քաշէ. (կը բերէ) խօսքն ալ սեիրը կը քաշէ, ապահովութիւնը այս է ոչ բարեւ ոչ Աստուծոյ բարին. լմնցաւ։

Առուտուրի մեծ մասը քրիստոնէից և հրէից ձեռքն է, քաղաքի սպանդանոցը բոլորովին հրէից կը վերաբերի, անոնց կրօնականները կը մորթեն (1) և իրենց պէտք եղած տեղերը առնելէն վերջ մնացածները կը ծախեն մսագործներու սպանդանոցները կը մորթուի ուղտ, եզ, կով, ոչխար, որ հրէայք մորթելով Աստուածաշունչի և Թալմուտի տրամադրած տեղերը միայն իրենք կառնեն և միւս կտորները կուտան մսագործաց որք կը ծախեն իսլամ և Քրիստոնեայ ժողովրդոց։ Այս տարի (1880 թուրք և Քրիստոնեայք միանալով ուղե-

---

(1) Հրէից օրինաք ո և է կենդանի և թռչուն միայն կը-բնականք կրնան մորթել, աշխարհականք կարող չեն հաւ մը անգամ մորթելու, նոյպէս չեն կրնար ամեն տեղը ու՝ եղ ըստ հրամանի Աստուածաշունչի։ տես Ծննդոց Լ.Բ. Գ. 31—32 ։

ցին հրէից ձեռքէն առնել և յարուցին մեծ վէճ մը (1) բայց չկրցին յաջողիլ, հրէից ձեռքն կայ հին վաւերական թուղթեր։

Ժողովուրդը այր և կին մեծաւ մասամբ են գեղեցիկ և ձեւաւոր բայց տարու վերջ կոչուած շրջարը մեծ ջրաններ կուտայ, երեսի, ճակտի վրայ դրոշմներ կը թողու, ոմանց աչքերը կը կուրցնէ, ոմանք կունենան մեկէն մինչեւ 7—8 հատ վերք, սովորապէս կը տեւէ մի տարի։

Իգական սեռն ալ կաշխատի հոս. կը շինեն մեծաքսեայ և ոսկեթել կերպասներ յորմէ գոյացած շահը կը ծախսեն իրենց զգեստուց և զարդուց, ամօթ է կնոջ մը համար եթէ զգեստի ստակ ուզէ իր ամուսնէն. (քիչ կը մնայ որ Պօլսեցւոց հասնին . . . .)

Հալէպէն նաւահանգիստ երթալու համար ընդհանրապէս երեքշաբթի օրն է յատկացեալ, ճանապարհորդաց անկանոնութիւնք և արաբական իմաստութիւնը տեղի տրուած է ցարդ կարաւան կազմել և կարաւանով ճամբոր-

---

(1) Արաբ խոճայք ամբաստանեցին Հրէից խախամները թէ կենդանեաց վիզը կտրած ատեն (պիսմիլլահ իւլ բահման իւլ բահիմ) (յանուն Աստուծոյ ողորմածին եւ գթածի) աղօթքը չեն կատարեր, եւ (Գուրանի) հրամանաւ անմաքուր կը սեպուի առանց այն աղօթքին. (ինչպէս քրիստոնեայք կըսեն յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ) հրէայք պընդեցին թէ կըսեմք. երկար եւ շատ օրեր դատը շարունակուելէ վերջ, որոշում տրուեցաւ երկու խալամ (խոճայ) տեսուչ դնել որ խախամք (պիսմիլլահ) ըսած ատեններին լսեն, եւ խոճայից ամսականը վճարեն խախամք։

դել։ Ճամբորդ մը երեքշաբթի օր առանց ընկեր փընտռելու ձին նստելով կերթայ քաղաքէն կէս ժամ հեռաւորութեամբ Սէուլը (1) ուր պատրաստ է ֆէլլահ սրճարանը «ֆատտալ եա սէյտի» ըսելով սուրճ մը Նարգիլէ մը կուտայ, մինչ կէս օր ճամբորդք և ճամբորդք գուսարելով կէս օրին կարաւանատեղը կը պառայ արաբերէն բարձր ձայնիւ «ճամբորդք ի ճանապարհ ճամբորդք ի քաղաք»։

Հալէպի և դաւառաց մէջ կայ բաղում հնութիւնք գեղեր, անտառներ, նշանաւոր կամուրջներ են։

Կուղէի դրել նաեւ քանի մը դաւառներու, Մաբոշի, Զէյթունի, Պերեէեր դուլ և այլ տեղերու վրայ ալ, սակայն պատեհութեան ժամանակի թոյլ տուիպուած եմք . . . Հալէպի շրջակայքը կայ նաեւ նշանաւոր աղբիւրներ անոյշ ջրերու և մի ջերմ ջերմուկ բաղանեաց՝ օգտակար։

Երեք ժամ հեռի է քաղցրահամ ջուրի ակն, յորում արաբք կոչեն դէլ Հէլէֆ (Հեղինէի աղբիւրն)

Հալէպի կառավարութիւնն է վիլայէթ և երկրորդ կեդրոն զօրաբաժնի հինգերորդ բանակին Դամասկոսի. նաեւ կուսակալ մը իր ամեն պաշտօնեայներով համարակալ, և քարտուղարներով և ունի դատարաններ ուր մեծ մասամբ կը խօսին Արաբերէն։

---

(1) Սեպիլ կրսուի ջուրի տեղին. Արաբիոյ դաշտերու մէջ տեղ տեղ չինուած է գեղեցիկ ջրշեղջներ, անձրեւի ջուրեր հոն հաւաքուելով կը խմեն համբորդք՝ եւ կը խմցնեն իրենց կենդանեաց, տես Աստուածաշունչի. Ծն. ԺԶ. գլուխ 13 համար եւ ԻԱ. 19-31. ԻԴ. 62. եւ ԻԵ. 11։

Օտար տէրութեանց հիւպատոսներ։ Ֆրանսայի, Ռուսիոյ, Գերմանիոյ, Անգղիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ, Պէլճիոյ, Պարսից, Սվէճի, Նորվէկիոյ, Յունաստանի, Բօրթօգիզի, Ցանիմարգայի և այլք. ունին գաւառներ. թարգմաններ, հպատակներ պաշտպանեալներ և այլն որք տեղի կուտան միշտ վէճերու և դատերու, ինչպէս նաեւ քրիստոնէութեան այնքան բաժանումներ, հաշ-հեշներու (հովարտայ) բազմութիւն և այլ ուրիշ առարկայք առիթ կըլլան դատերու, սովորական դատերն ալ հաշուելով կընայ դուշակուիլ Հալէպի կառավարութեան դժուար կացութիւնը և բաղում դրաղումը, որ իմաստութեամբ կը կառավարէ ներկայ վալին, որոյ օգնական կը համարի Նուրեան էֆէնտի (1)։

Հալէպի վրայ ուրիշ դրելիքներ թողլով. անցնիմք Անտիոքը Մէրսինէն Պէլէնը և Իսկէնտէրունը տեսնելու։

---

(1) Հալէպի կուսակալն է Սայիտ փաշայ 55 տարեվան դիակ Անգլիերէն եւ Ֆրանսերէն, է ողջամիտ եւ հայրենասէր։

Նուրեան էֆ. է Պոլսեցի եպիսկոպոս դօմիսէր Հալէպի, եւ անդամ պետական խորհրդոյ։

## ՆԱՄԱԿ ԺԳ.

### ՄԷՐՍԻՆԷ, ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ, ՊԷԼԷՆ, ԱՆՏԻՈՔ

1879—1880

Մերսին եղերս միջերկրականի նորաշէն քաղաք փոքր. նաւահանգիստ Թարսուսի և Ատանայի. ունի նաւամատոյց համանուն. շոգենաւք կը մնան մինչ 24 ժամ ապրանաց փոխանակութեան համար։

Մէրսինէէ ի Թարսուս 2 ժամ և յԱտանայ 10 ժամ ճանապարհն է խճուղի (շէօսէ) որ սկսեց Մահմուտ Նէ-տիմ փաշայ և լրացուց Զիեա փաշայ (1) (կուսակալք Ա-տանայի)։

Մէրսինէի ջուրը և օդը առողջարար չէ, հաղիւ կայ 400 տուն, 1860էն սկսեալ շենցած, ի հնումն էր գիւղ եղեգեայ տուներով որոցմէ դեռ կերեւի մի քանին։

Բերքն է ցորեն, բամպակ, նարինջ, լիմոն, շա-քարեղեգն ևն. փողոցները շինուած է լայն և ուղիղ. ունի մաքսարան, կառավարիչն է գայմէգամ, ընդ իշ-

---

(1) Այս ճանապարհն է որ այժմ շինուեցաւ երկաթուղի ի խնդումն ժողովրդեան։

Զիեա փաշան է այն նշանաւոր Միր-Զիեա, որ Ա'լի փա-շայի ատեն ժամանակ մ'մնաց յԵւրոպա քանի մը ընկերաց հետ, եւ ներկայ Օգոստ. Սուլթանը ներեց ամենքին՝ վերա-դառնալով ի Թուրքիա վարեցին այլեւայլ պաշտօններ. Զիեա փաշայ է բանաստեղծ եւ տէր ծայրայեղ գրչի. ունի շատ իմաստալից գրուածքներ արձակ ոտանաւոր, տպուած, եւ անտիպ, (Զիեա բաշայ մեռաւ յԱտանայ։)

խանութեամբ Ամանայի կուսակալութեան, ունի պաշտօնեայներ ըստ կարգի։

Կայ երեք հիւպատոս օտար տէրութեանց, մի քանի փոխ հիւպատոս, և ՄՇԷՆՇՈՒԹԻՒՆՔ շոգենաւուց և ընկերութեանց։

Հայոց դաղթականութիւնն է միայն 25—30 տուն ունին մի փոքր եկեղեցի, մի դպրոց, մի քահանայ։

Ի վարժարանի կայ 10 մանչ 20 աղջիկ (մանչ տղայք շատ չեն ապրիր) դասատուն է Զմիւռնիացի Փափաղեան աշխատասէր մի տիկին։

Դաղթականների մէջ նշանաւորն է Նաղարէթ Դաղանճեան ընիկ Կեսարացի եղբայր Յակոբ էֆ.ի որ կը մնայ Ռուսճուք և էր երբեմն Օսմ. երեսփոխան։

Պատուաբեր է Հայ վաճառականութեան։ Կիւլպէնկեան էֆէնտիներու առեւտրական տունը, և ինչպէս շատ տեղեր նոյնպէս ի Մերսինէ կը գործեն կանոնաւոր ընթացքով։

Պօլսեցի Ցրէնկեան էֆ.ները ունին շատ կալուածներ՝ իմաստուն հեռատեսութեամբ ժամանակին գնած են ժան գներով (1)։

---

(1) Լաւ կրլլար թէ որ հարուստները հետեւէին Ցրէնկեաններու եւ լինէին կալուածատէր այլեւայլ դաւառս յօդուտ իրենց եւ դաւառացւոց։ թէեւ պոլսոյ մէջ ալ կայ օգտակար կալուածներ նաեւ մեսակայ գիւղերը ժան գներներ, բայց մեր ժողովուրդի մեծ մասը դեռ դաղաբար չունի կալուածատիրութեան, շատեր սակնին կը վանեն աւելորդ զարդերու եւ կը ծախսեն առօրեայ հաճոյից։ ապագայ մտածողներ սակաւաթիւ են։

Ֆռանսացի մը ունի խիստ ընդարձակ մի պարտէզ նարինջի և լիմոնի, Մերսինէէն միշտ նաւերով կը փոխադրեն նարինջ և լիմոն (անուշ և թթու) ի Պոլիս և այլ ուր։

Սովորական դիմն է 100 հատը 50 փարայէն մինչև 70 փարայ, և երբ կը համրեն 100ին 10—20 իրբ փըտած կը նետեն ծովը. ծովը նետուածները մեր կողմերը գալածներէն վար չեն մնար։

Այս կողմեր երբ այցելես մի պարտէզ լիմոնի և նարինջի որքան որ ուտես և որքան որ դաշկինակդ լեցուներես ամենքի համար պիտի վճարես միայն քսան փարայ ֆէլլահ պարտիզպանին, եթէ բարեհաճիս 30 կամ 40 փարայ տալ, կընդունիս նաև մեծ ճիւղ մը որոյ վրայ կայ 7—10 խոշոր նարինջ իրարմէ չզատուած։

Երբ մեք Մերսինէ էինք և լիմոն ու նարինջի նաւերը առնելով մեկնեցան. իրբ փտած ծովը ձգուածները ծածկած էին նաւահանգստի ամբողջ երեսը, ծովը կերուիր դեղնագոյն պիքներէ կը լողային. և մեք կայնած ծովեղերը կը դիտէինք այս տեսարան, յափշտակուած մաքով, որ (օր մը Քարբերդի մէջ հիւանդ ըլլալով լիմոն մը գտնելու համար շատ աշխատանք կրեցինք. և երբեմն մինչև մի հատը 10 ղրուշի կը ծախուի այն կողմեր) և մոռխոհ կրսէի.

Ո՞վ նախախնամութիւն, որքան տարբերութիւն միևնոյն երկրի մէջ, և որքան խտրութիւն, արդեօք բընութեան զուարճալի՞քն է, թէ մարդոց բաղդի ասոիճանն.

Ցեղ մը մէկ լիմոնը կամ նարինջը յարգելի և մինչև մի հատն 10 ղրուշ, ուրիշ աեղ մը 100 հատը 60 փարայ

և նաւահանգստի երեսը ծածկած լիմոն և նարինջով իբր անյարգ մի պտուղ.

Տեղ մը մէկ օրուայ հացը երկու երեք. մինչ հինգ ղրուշ, ուրիշ տեղմը 3-4 մինչ հինգ օրան մէկ ղրուշ.

Տեղ մը խաղողի չամիչի և չոր թուզին երեք օրան մէկ ղրուշ ուրիշ տեղ մը մէկ օրան 4-5 ղրուշ.

Տեղ մը ոչխարի և կովի միսերու մէկ օրան 30-40 փարայ ուրիշ տեղ մը 6-7-10 ղրուշ.

Տեղ մը անարատ կարագ իւղի օրան 4—5 ղրշ. ուրիշ տեղ մը խարդախեալ իւղերու օրան 15 ղրուշ.

Տեղ մը բրինձի 4 օրան 60 փարայ ուրիշ տեղ մը մէկ օրան 3-4-5 ղրուշ.

Տեղ մը ձէթին (ղէյթունեաղի) օրան 2 ղրշ. ուրիշ տեղ մը 10 ղրշ.

Տեղ մը քարիւղին (կաղ) օրան 20 փարայ ուրիշ տեղ մը 3—4 ղրշ.

Այս տարբերութեանց ո՞րը դրեմ և ո՞րը համրեմ. Ասոնց պէս հաղարաւոր օրինակներ, Ասուծոյ ողորմութեան հաւասարութիւնը չի ներէր այսպիսի տարբերութիւնք.

Ուրեմն ի՞նչ է պատճառը կը հարցնէի մտովի, «պատճառն է մարդոց տգիտութիւնը» կը սէր ձայն մը.

—Ինչպէս տգիտութիւն կըսէի. չէ՞ որ «որդիք մարդկան իմաստանագոյն են քան զորդիս լուսոյ».

—Այս այդ իմաստութեան հետեւանքներ այսօր կը վայելէն ամէն հաւասարութեան պտուղներ.

—Ինչպէս,

—Երկաթուղիներու շոգենաւերու խճուղիներու միջոցաւ և աշխատութեամբ չէ՞ս տեսներ այլ և

այլ երկաթուղիներ և շոգենաւք որքան բերք և պը-տուղ փոխադրելով ահան գիներով կը ծախեն, օր մ՚ալ այս նարինջ և լիմոնը Մերսինէէն պիտի երթայ Քարբերդ և Տիգրանակերտ միայն մէկ օրուան մէջ որ Մերսինէի գնոյն վրայ անդգալի բարդում մը ըլլալով պիտի ծախուի. այսինքն 100 հատը փոխանակ 60 փարայի պիտի ծախուի 100 փարայ կամ 3 դրչ.

—Երբ պիտի ըլլայ ըսի տխրութեամբ։

—«Սպասել և յուսալ» պատասխանեց ձայնը (1).

Այս մտահոգութեանս մէջ յանկարծ մեր դեղեցիկ (Տիանոյ) շոգենաւ ճչուկը հնչեցուց, ճամբորդները շոգենաւ ժողվելու համար. 24 ժամու մէջ ունեցած բարեկամներ և անծանօթ հետաքրքիրներ խառնեցան ի նաւամատոյց, մեք մեր ընկերին հետ «մնաք բարեաւ» ըսելով մեկնեցանք. կարծեաք 10 ժամէ վերջ Իսկէնտէրուն էինք.

## ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ ԱԼԷՔՍԱՆՏՐԷԹ

Անուանի է նաւահանգիստը և ծովածոցն է համանուն քաղաքի, Եւրոպացիք Ալէքսանտրէթ, և Թուրքերէն Իսկէնտերուն կըսեն.

Ծովեզը և նաւահանգիստ Հալէպի, Անտիոքայ և ընդհանուր Կիլիկիոյ վերին մասի, միջագետի և Բա-

---

(1) Ահա հազիւ վեց տարիներ անցեր է այս տողերը գրելէս, Մերսինէէն յԱտանայ լրացած է երկաթուղին, ուրեմն այն ձայնը իրաւունք ունէր ըսելու, սպասել և յուսալ. եթէ յաւելցնէր նաև «կամք և աշխատութիւն»։

բելոնի, ա—հ. ունի մեծ և հարուստ մաքսատուն Եւրոպական և տեղական ապրանքայ համար, աստի Պէ-լէն 3. Անտիոք 10 և Հալէպ 33 ժամէ. շէնցած է 1830 էն սկսեալ.

Օդը առողջարար չէ՝ Մէրսինէի պէս՝ ունի ճահիճ-ներ՝ այժմ մաքրելու հոգ կը տարուի.

Կառավարութիւնն է գ-յնմէգամ, ընդ իշխանու-թեամբ Հալէպի կուսակալութեան.

Կան վեց եօթը հիւպատոսք օտար տէրութեանց և շատ աճէնցիաներ, բերքը նման է Մէրսինէի.

Փողոցները են լայն և ուղիղ. հոգ կը տարուի մաքրութեան շէնքերը կը շինուին նոր ձեւերով.

Հայ բնակիչ չկայ, բաց ի մի քանի պանդուխտներ-ե, շոգենաւք միշտ կերթեւեկեն, աստի ի Հալէպ կարաւան կելլէ շաբաթը երկու և երեք անգամ նոյն-պէս Անտիոք.

Իսկենտէրուն գալօղ ճամբորդը գիշեր չի մնար օ-գի գեշութեան համար. այլ կերթայ ի Պելէն որ երեք ժամէ.

Մեք ալ հետեւելով սովորութեան ձիերով գացինք Պելէն ընկերիս հետ (1).

Ընկերութիւննիս եղած էր հաճելի, շոգենաւէն յառաջաբանի սկսած էր Անտիոքի վրայէն երթալ ի Հալէպ, նա կուզէր պատիւ մը ընել մեզ. ճիշդը ըսե

---

(1) Ընկերս էր Ցէհիմ պէյ Անտիոքի առաջին մեծատու-նը, (գայմմէգամ) էր Զմիւռնիոյ Ցոչաթէյն գաւառ, Զմիւռ-նիայէն ընկերացանք. էր կրթեալ մի անձ իբր 40 տարեկան.

լով ես ալ կը ցանկայի տեսնել Անտիոքը, որ այնքա-
նշանակութիւն ու կարեւորութիւն ունի պատմութեան
մէջ, հետեւաբար Իսկէնտէրուն համաձայնելով շարու-
նակեցինք մեր ճանապարհ։

## ՊԷԼԷՆ ԿԱՄ ՊԷՅԼԱՆ

Այս գիւղաքաղաք չինեալ է համանուն լերանց
միջավայրը, ի մէջ գեղատեսիլ ձորի, օդաւէտ առողջա-
բար, ունի պաղ և քաղցրահամ ջուրեր, այգիներ,
պարտէզներ. առատ է խաղողը և պէքմէզը, որ առա-
կի կարգ անցած է Անթապի պէքմէզին պէս։

Բնակիչն է իբր 800 տուն։ 500 Թուրքեւ 300 Հայ,
Հայք ունին մի անշուք եկեղեցի և մի դպրոց և քանի
սենեակք իբր առաջնորդարան.

Դպրոցի աշակերտաց թիւն է ամրան 70 և ձմեռը
100։ Ժողովուրդի կացութիւնն է նահապետական։

Մեծաւ մասամբ են երկայնակեաց վասն առողջա-
բարութեան կլիմայի. դիրքն է խիստ զուարճալի։

Հայք ունին բարեպաշտութիւն, և հիւրասիրու-
թիւն։

Ազգային կառավարութիւնն է տեղապահով երբ-
եմն տեղացի քահանայով. սիրով են և միարան։

Ամառ երեկոյներ կը գումարին պարտէզները, կը
խօսին կրօնական խօսքեր, անմեղ զուարճութիւններ,
հին պատմութիւններ, չունին ուրիշ գիւղերի պէս վէճ
և կռիւներ, ձմեռները կը գումարուին եկեղեցւոյ սեն-
եակները և երեւելեաց տունները, իբրեւ մի եղբայր
կը յարգեն կը սիրեն զմիմեանս, կարծես Ս. Աւետա-
բանի պատգամք աւելի ազդեցութիւն ըրած են ասա։

Ս. Առաքեալը Քրիստոսի այցելածն ասա։ Շատ մխիթարուեցայ այս տեղ։ և կուզէի մի քանի օրեր մընալ եթէ ընկերէ բաժնուելու անպատշաճութիւն չըլլնէր։ Թիստ ուրախ էի տեսնելով 80 և 100 ամեայ ծերունիք շուրջս բոլորած, հայրարար կը գգուէին դիս, ոմանք կուզէին պատուել ՊԷՏՔ պաստէղ (1) կաթ մածուն հրամցնելով. և հետաքրքրութեամբ հարցումներ կընէին, ազգային և կրօնական։ Պէլէնի առեւտրական կեդրոնն է Իսկէնտէրուն, և երկրագործութիւն ի Պէլէն։

Շատ զարմացայ թէ այսպիսի մի պատուական տեղ ինչպէս վրիպած է ուշադրութենէ. օդ և ջուր առողջարար, երկիր ածան, ծովի մօտիկ, յարմար երկրագործութեան և առեւտուրի։

Ըստ իմ կարծեաց խիստ արժանաւոր տեղ մի է բնակելու, աղէկ կըլլայ որ փոքր մը ընեն արհեստաւորներ և առեւտրական անձինք, մանաւանդ դնեն ածան երկիրներ որ (ինչպէս յուսալի է) Հալէպի երկաթուղին սկսած օրը այն տեղերու գին չի հասնիր։

## ՊԷԼԷՆԷ ԱՆՏԻՈՔ

Հեռաւորութիւնն 7 ժամ. Պէլէնէ մէկ ժամ անդին կը բաժնուի Հալէպի և Անտիոքի ճամբան. մէք

---

(1) Պէքմէզ եւ պաստեղը ծանօթ է գաւառացւոց, խաղողի եւ թութի բերքը ուր որ առատ կըլլայ այն տեղեր կը չինեն նոյնպէս եւ շարոց, (քեսմէ,) սուճուխ եւայլն անուններով, որք թէ գեղջական պաշարներ են եւ թէ կը ծախեն այլ ուր։

գնացինք Անտիոքի ճամբով, և վերադարձին եկանք Հալէպի ճամբով, որով տեսած եղանք ամէն օվոռ ըսուած մեծ դաշտը և լիճը։

Անտիոքի ճամբան տեսանք Խալէռ ըսուած նշանաւոր տեղը որ շինուած է յատուկ ձուկ որսալու համար։

Տեսանք նաեւ բագրասի բերդը (մեծ հնութիւն)։

Տեսանք Սուլթան Մուրատի ատեն շինուած խանը։

Վերջապէս այսօրուան (Պելէնէ Անտիոք) ճամբանիս խիստ զուարճալի էր, ես ուրախ մեկնած էի Պէլէնէ։ Ճանապարհին կը տեսնէի նոր նոր բաներ, և Անտիոքը տեսնելու ցանկութեամբ. ընկերս ալ շատ ուրախ էր իր հայրենեաց առարկայներու մօտենալով։

Տեղ մը կանգ առած էինք ուրկից 3 ժամ էր Անտիոք սկսեց դիմաւորողներ, ոմանք կը բերէին արծաթապատ համեստներով զարդարեալ ձիեր Ֆէհիմ պէյին (ընկերիս) ոմանք քաղցրեղէններ ոմանք կուգային ոտքը ձեռքը համբուրելու 100ի չափ ֆեյլահ ձիաւորներ եկան՝ մերկ և անսանձ ձիերով (աւաղակ կարծելով երկիւղ զգացի) ձիերէն լինելով կարգաւ խոնարհութիւն կընէին ձիուն ասպանդակին մօտելով, (իւր ազարակի մարապաններն են եղեր)։

Վերջապէս մինչեւ որ քաղաքի դուռ գնացինք կարծեմ թէ քաղաքի բնակչաց մեծ մասը եկած էին դիմաւորելու. Ֆէհիմ պէյ երեւելին էր քաղաքին, և սիրելին, ոչ թէ ռէյեթներու ոմանց պէս բարբարոս՝ այլ ազնիւ։

Հասանք քաղաք և հիւրնկալեցանք Ֆէհիմ պէյի տուն որով կը պատուէին ղմեղ Թուրք և Քրիստոնեայք։

Հիմայ տեսնեմք թէ ինչ կայ Անտիոքը որ այն քան ցանկութեամբ կերթայի և հետաքրքրութեամբ լցուած էի. հիմայ ընթերցողը քիչ մը վերջ ինծի հետ պիտի տեսի Անտիոքի պատմութիւնը կարդալով, առհասարակ աշխարհի յոլովմունք իշխանութիւն ունին քաղաքներու, լեռներու, ծովերու վրայ անգամ, ուր կը մնան մահկանացուք, «եղիցին առաջինք յետին, և յետինք առաջին»։

## ԱՆՏԻՈՔ

Անդիոք կամ Անդրոքեայ ի նախնումն կոչէր Հռիքլաթ զոր վերակառոյց Սաիդոնոս և ապա Սելևկիոս որ յանուն իւր որդւոյն կոչեաց Անդիոք մեծ.

Ուր շուտաք լցուեցան Յոյնք, Հրէայք, Ասիացիք, ճոխացաւ բարգաւաճեցաւ այնչափ մինչև իսկ երբեմն կոչէին Թագուհի քաղաքացն արևելից.

Այստ տնկեալ էր Սելևկիացւոց դաբներեայ ծառը ի պատիւ Ապողոնի, որ եղեւ տեղի խէնեշութեան, յետոյ վառեցաւ շանթահար Յուլիանոսի առեն.

Այստ հաստատեաց Պետրոս առաքեալ (վէմն հաւատոյ) իւր աթոռ.

Այստ կոչեցան ՔՐԻՍՏՈՆԵԱՑ հաւատացեալք ի Քրիստոս. (Տես. Գործք Առաքելոց)

Այս Անտիոք երբեմն կոչէր Թէուպոլիս (Աստուածաքաղաք) Թէոդոս կայսեր առեն.

Հոս կար երբեմն մեծամեծ շինուածքներ որ մինչեւ իսկ կուղէր ի կշիռ գալ Հռոմի հետ. և ունէր եօթանասուն բիւր բնակիչ. Անտիոքնէր որ կործանեց խոսրով արքայն Պարսից, և կանգնեցաւ վերստին։

Հոս՝ տեղի ունեցաւ խաչակրաց արիւնայեղ պատերազմունք վասն առման քաղաքի։

Հետեւաբար պատմութիւնը կը պատմէ նշանաւոր դէպքեր ի վերայ այս հռչակեալ քաղաքի զոր փափաքանօք ցանկացի տեսնել։

Գացինք այցելեցինք. շրջեցանք, տեսանք. և ինչ։

Ափսոս հաղար ափսոս . . . կը տեսնեմք աւերակ մը։ կամ տխուր աւան մը, աչքերուս չպիտի հաւատայի թէ այս է Անտիոքը եթէ ներկայ հնութիւնք չը վկայէին։

Քաղաքաց թագուհին այժմ եղեր է սպասուհի, 70 բիւր բնակիչներէ մնացեր է հաղիւ երեք բիւրը, բաղմապայծառ շէնքեր կը նմանի բուերու աւերակաց, այն գեղեցիկ քաղաքը հիմայ եղեր է ադեղ և տաճեւ,

Այն աշխոյժ ժողովուրդի մնացորդը այժմ եղեր է տխուր թմրած և իրը սգաւոր Սրբազան Առաքելոյն աթոռը անչքացեր, այժմ կայ միայն Յունաց (Անտիոքայ) պատրիարքն որ ունի ասա միայն 400 տուն ժողովուրդ։

Կայտառ Որոնիդէսի (աղի գետ և տաճկերէն ասի չայ) կարկաչումը հիմայ դարձեր է լռիկ մնչիկ մի գետակի երեւոյթ։

Այն գեղեցիկ կարմրախայտ ձուկերը փոխուած են օձաձուկի ի սոսկումն տեսողաց։ (Թէեւ օձաձուկերը որ կելլեն աղի գետէն Անտիոք, Եւրոպացիք կը գրնեն լաւ գիներով կը տանին յԵւրոպայ) այն դրախտանման պարտէզները և այգիները հիմայ եղեր է վայրենի այգիներ, և այն քաղցր խաղողի որդերու վրան անդամ եկած է հիւանդութիւն (քիւլլէմէ)։

Հզօր կայսրաց մեծ զօրութիւնք չէին բաւեր այս քաղաքիս ՇՇասելու, հիմայ բնութիւնն ալ երես դարձընելով քանի տարին մի անգամ գետնաշարժի մը ցնցումով իրար կը խառնէ քաղաքը և շէնքերը տակն ու վրայ կը դարձնէ.

Վերջապէս տեսի Անտիոքն ալ բաղդակից Անի. Աստուած խնայէ եթէ երկրաշարժը կրկնէ իւր ցնցումներ՝ մնացեալ դժգոհ ժողովուրդն ալ պիտի ձգէ ու ցրուի, և ըլլայ բոլորովին աւերակ.

Արդեօք հոս ալ կա՞յ խորհուրդ նախախնամութեան,

Անշուշտ, և սքանչելի խորհուրդ.

Հոյակապ քաղաքներ կը կործանին, անհնարին դիւղեր կը բարգաւաճին, մեծազօր կայսրութիւնք և իշխանութիւնք կիյնան, կը կանգնին անհնարին փոքրիկ իշխանութիւնք և կը զօրանան, կը փայլին մինչև իսկ աշխարհակալութիւն կերազեն, օր մը կը փշրին և կանհետանան.

Մեծ և միլեոնաւոր ազգեր կոչընչանան, պզտիկ ազգեր կը զօրանան.

Նոյնպէս անհատք, մեծատունք և հարուստք կաղքատանան, և աղքատք ու անհնարին անձինք կըլլան հարուստ և նշանաւոր,

Գեղեցիկ և հոյակապ տուներ կը կործանին, անհնարին գեղեցիկներ կը շինուին գեղեցկագոյն տուներ պալատներ.

Դրախտի նման պարտէզներ կամայանան, ամայի տեղեր կըլլան գեղատեսիլ և զուարճալի պարտէզներ և այգիներ.

Ծովեր կըլլան ցամաք, և ցամաքներ կըլլան ծով, և ասոնց նման հաղարաւոր առարկայք ենթակայ փոփոխութեան։

Գիտե՞ս սիրելի ընթերցող թէ ինչո՞ւ կըլլայ այսպէս, ասոնք կը վկայեն թէ այս աշխարհը ստեղծող մը ունի, տէր մը ունի, և ենթակայ ըրեր է փոփոխութեան, որ մարդիկ գիտնան թէ միայն Աստուած է անփոփոխ, անեղծ, անսկիզբն և անվախճան։

Այժմ Անտիոք կայ իբր 2500 տուն, 400 տունը ցոյն է որ շինած են նոր և ընդարձակ եկեղեցի, մեծ ծախքերով,

100 տուն կայ Հայ մէկ վերերրորդը Բողոքական, ժողովուրդը ադքատ (1) ունին մի խեղճ եկեղեցի և մի վարժարան նոյնպէս։ 2000 տունը Թուրք են հին շէնքեր մզկիթներ շատ կայ, կարեւոր արձանագրութիւն եղծեալ են, բոլոր տուներ և շէնքեր խախտած են և նորերը կը շինեն առ ժամանակեայ։

Կասիոս լեռի ստորոտը Հրէամը շինած է մանածի մի գործարան որոյ ծախս դացած է մօտ 100 հազար լիրաներ և կիսատ կը մնայ խափան, թէ ինչ է պատճառը յարմար առթիւ պիտի պատմեմ։ Երկու վանք ունին յանուն Ոսկերերանի և Մելիտոս Հայրապետի աւերակ, 180 գիւղերէն միայն Պիթիաս (Պեսիթիայ) Թրտրբէկ, Քեսալուսի, Հաճի Հապաշ անուն հինգ

---

(1) Անտիոք Քէօսէեան Սարգիս եւ փեսայն Մարտիրոս էֆէնտիներն են պատուաբեր եւ գործունեայ, յարգ դտած են ժողովուրդէն եւ ունին արժանիք։

գիւղերու մէջ կայ իբր 1000 տուն Հայ, 50 տուն Հրէայ կայ ի քաղաքի աղքատ։

Քաղաքը ունի մզկիթներ, թէքէներ, թիւրպէներ, 8 խան 1200ի չափ կրպակ, ապրիւրներ, և հասարակ արհեստից գործարաններ, ներկի, աճառի, խաղաղ. խորդի և ն։ Ունի շատ պարտէզներ։ Քաղաքի որ կողմը փորեն կելլէ շատ հնութիւնք։ Քաղաքի շուրջը կայ շատ հնութիւնք և քարայրք որք կենդանի վկայք են պատմութեանց։

Գլխաւոր բերքն է խաղող, նարինջ, շերամ, ցորեն, պտուղ և ն։

Արհեստք սովորական, կը շինեն նաեւ մետաքսեայ (թրապլուս) զօտիներ ջրշորդներ, մաշլահներ և կտաւ։

Ահա գրեցի խիստ սրտանեղութեամբ և հարեւանցի այն հռչակեալ Անտիոքի պատմութիւնը, վասն զի երբ երթալով քաղաքին կը մօտենայի մեծ ուրախութեամբ լցուած էի, երբ տեսի զքաղաքն՝ պատեցայ տխրութեամբ և դարձայ ափսոսալով. . . . .

# ՎԵՐՋԱԲԱՆ

Ա.Հաւասիկ հոս լրացած կը համարի մեր ճամբորդութեան մի մասն, ունէինք դեռ ևս մեր յուշատետրի և նամակներու մէջ շատ մը գրելիք, բայց թողուցինք ապագային կամ պատեհութեան ժամանակի կամաւ և յակամայս . . . ։

Ինչպէս յառաջաբանիս մէջ գրած եմ կը կրկնեմ վերջաբանիս մէջ՝ գրքոյկիս թերութեանցը համար, մանաւանդ ապագրեալ նամակներու մէջ կը տեսնեմք շատ մը սխալներ և մոռացումներ, ոմանք մեր անուշադրութեան ոմանք ապագրական անզգուշութեան արդիւնք. թէ այսպէս և թէ այնպէս ընթերցողաց ներողամտութեան կարօտ ։ (1)

Գլխաւոր մոռացում է երես 27 խորհրդածութեան ներքև հետևեալ խօսքեր չգրուիլը, « այս աւանդութիւն չի համաձայնիր խորենացւոյն գրածին տես երես 358 Գ. Դ։

Նոյնպէս Երիզայի Ս. Սարգիս եկեղեցւոյ 24 մասունքը սը մեծ հնութիւն մ'է։

Երես 18 մոռցուած է ի կարգին Ցաճրակ և Ս. Օհան անուն հայաբնակ գիւղեր

Նոյնպէս Երիզայի թթենին, որ պտուղն է օգտա-

---

(1) Մեր խորհրդածութեանց եւ դիտողութեանց ամենքին հետ պէտք է կարդալ «բացառութիւն յարգելով»։

կար՝ շերամագործութեան պիտանի։ Անուշադրութեան արդիւնք է եկեղեցական Ս. Հարց կամ պաշտօնէից և կամ վաճառական և այլ անձանց ոմանց ածական դը-ըել և ոմանց չգրուիլը։

Նոյնպէս ուրիշ շատ մը մոռացումներ՝ որ կը յուսամ յաջորդ (2) հրատարակութեան առեն յիշել,

Մեր յաջորդ հրատարակութիւնը պարունակել կը յուսամք հետևեալ առարկայք։

Քարբերդ, Արապկիր, Ակն. Մատէն, Տաւրոս, (տեր-սիմ), Բէմախ, Բղի, Փալու, Գայլդեռ, Շէյրան, Գուրու չայ, Կէրճէնիս, Զարսանճագ, Բերդակ, Բաբերդ, Կիւ-միւշխանէ, Տրապիզոն, Զմիւռնիա, Սադըղ, Բատոս, Սամ-սոն, Բիրասոն և այլ քաղաքներ և աւաններու վրայ։

Նաև Տիգրանակերտ, Մարտին, Ճիզրէ. Մծբին և այլ մի քանի քաղաքաց վրայ բաւական տեղեկութիւնք որ ժողուած էր եղբայրս Յարութիւն 1883—85ին այն կողմեր պաշտօնիւ դտնուած առեն։

Ժողուած եմ նաև հետաքրքրականտեղեկութիւն-ներ պաշտօնական կրոնքներէ, իսլամութեան, քրիստո-նէութեան և հրէութեան արտաքոյ, անպաշտօն և փոք-րամասն աղանդաւորներու վրայ։ որք են. հոգեվոխա-կանք, դըղբլպաշ, արեգնապաշտ, լուսնապաշտ. քրիստ-հայ՝ կէս կէս. սադուկեցի. եղապաշտ. դիւապաշտ և այլք

---

(1) Յաջորդ հրատարակութիւններս չ'պիտի կոչեմք երկ-րորդ կամ երրորդ հատոր այս գործիս, քանի որ սա չէ դա-սագիրք, կամ պատմութիւն կամ վիպասանութիւն։

որք գտանին քրիստոնեական Արաբիայ և այլուր.

Մեր Օսմանեան երկրի բերքք, ճանապարհք, երկրագործութիւն, հանք, արհեստ, վաճառականութիւն.

Տարբեր աղգութեանց սովորութիւնք, տեղական և աղգային իշխանութիւնք.

Քաղաքապետական կարևոր պաշտօն և ժողովուրդի անկարևոր ընդունում.

Գիւղական ժողովուրդի վիճակ.

Պոլսոյ, գաւառաց և գիւղացւոց միմեանց վրայ կողմնակի ունեցած երբեմն սխալ գաղափարներ

Օսմանեան սահմանագրութիւն և երեսփոխանութիւն.

Կոստանդնուպոլսոյ պանդուխտներ

1877—78 թուրքիոյ ռուսական պատերազմի և նորա յարակից դէպքերու համառօտ տեղեկութիւնք։

Պոլսոյ վրայ զանազան տեղեկութիւնք։

Գաւառական առածներ.

Տաճկերէն. Հայերէն. Արաբերէն և Քուրդերէն երգերէ ընտրելոյ մի քանիներ.

Կրթական տեսչութեան և տպարաններու վրայ. (1)

---

(1) Վասն զի գաւառացիներէ ոմանք կը կարծեն գրքի մը հրման առնուլը դժուար կամ անկարելի, եւ տպարանի ծախսերը անմատչելի, այս կարծիք սխալ է. որ եւ է գիրք կամ տետրակ որ օգտակար է երկրին, եւ անվնաս ժամանակի եւ պարագայից, շուտօք կը տրուի հրամանը. եւ տրպարաններու գիներ չափաւոր է այժմ. ուստի կը յանձնարարեմ գաւառացի եղբարց որ ունին գրուածներ եւ գրելիքներ, եւ իրենք չունին պատեհութիւն անձամբ Պոլիս գալու,

և այլ ղանաղան տեղեկութիւնք և խորհրդածութիւնք ըստ մեր կարեաց և քննութեանց։

Հոս պարտաւորութիւն կը համարիմ մեր այցելած գիւղերու, աւաններու, քաղաքներու ժողովրդեան, տեղական և ազգային պաշտօնէից երեւելեաց եւ այլոց (բացառութեամբ) որ ինչպէս բոլոր ճամբորդաց նոյնպէս և մեզի ցուցին սէր, յարգանք եւ պատուեցին իրենց ծանօթ հիւրասիրութեամբ։

Արդէն միշտ պարտաւոր եմք մեր բարեխնամ Օգոստափառ Մեծ Սուլթանի կենաց համար աղօթել, հոս կրկնելու պարտաւորութիւն կզգամ, քանզի իր բարձր շնորհիւն է որ կը վայելեմք անդորր կեանք, և այսպէս մի լուսաւոր դար։ Նորին Կ. Վեհափառութեան բարի, ազնիւ նպատակներուն գլխաւորն է ուսման յառաջդիմութիւնը։

Յարգանօք շնորհակալութիւն մատուցանել կպարտիմք այն ամէն հեղինակաց և թարգմանչաց որ մարդկային ընկերականութեան օգտակար և կրթիչ գործեր հրատարակեցին և դեռ կը շարունակեն մեծ զոհողութիւններով, որովհետև մեք մեր գրագէտները չեմք կրնար քաջալերել ուրիշ կերպիւ, գէթ երախտապարտ

---

մի բարեկամնուն կամ տպարանատէր մը հետ բանակցելով կրնան հրատարակել իրենց գործեր, որպէս զի չի կորսուի, որպէս զի ապագայ պատմութեան մասեր պատրաստուի։ Եթէ մեր այցելած քաղաքներու վրայ յատուկ տեղեկութիւններ եւ դիտողութիւնք գրուին մեզ, սիրով կընդունիմք մեր յաջորդ գործոց մէջ հրատարակելու։

գանուիմք, քանզի նոցա աշխատութեան արդիւնքը կը վայելեմք և մեծամեծ օգուտներ կը քաղեմք։

Իսկ այն հեղինակներ և թարգմանիչք որ ի կենդանութեան ծառայելով այժմ կը հանգչին ի յաւիտենականութիւն, նոցա յիշատակ եր օրհնութեամբ և գովութեամբ յիշելու և իրենց անմահութիւնը դիանալու համար կը բաւէ կարդալ հետեւեալ տխուր բանաստեղծութիւնը, որ գրեց վաղամեռիկ Գուրեան, իւր մահուան սև օրերու մօտ։

## Իմ մահը

Եթէ գժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով՝ ինձ իմ դէմ
Շոգիանան ցաւքս ու հոգիս
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթէ ճակատս արտասրազօծ
Ձիս պատանի մէջ ցուրտ գերդ վէմ
Փաստեն դնեն սեւ դագաղը
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթէ հնչէ տխուր կոշնակ
Թոթռուն ծիծաղն մահու դժխեմ
Դագաղս առնէ իւր համր քայլ
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Եթէ մարդիկն այն մահերգակ
Որք սեւ ունին եւ խոժոռ դէմ
Համասխեն խունկ ու աղօթք
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։

Թէ յարդարեն իմ հողակոյտ
Եւ հեծեծմամբ ու սգալէն
Իմ սիրելիքը բաժնուին
Գիտցէք որ միշտ կենդանի եմ։

Իսկ անենչան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ
Եւ յիշատակս ալ թառամի
Ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ։

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ

Երես


Յառաջաբան ..... Զ
Ա. Նամակ Երզնկայ ..... 7
Բ. « Դերջան ..... 30
Գ. « Եփրատ գետ ..... 36
Դ. « Կարին (Էրզրում) ..... 38
Ե. « Երեւան ..... 55
Զ. « Էջմիածին վաղարշապատ ..... 68
Է. « Կիւմրի (Աղէքսանդրապոլ) ..... 83
Ը. « Անի ..... 94
Թ. « Կարս ..... 106
Ժ. « Փասեն, ի վանս Ս. Աստուածածնի ..... 110
ԺԱ. « Կ. Պոլիս ..... 117
ԺԲ. « Հալէպ ..... 149
ԺԳ. « Մէրսինէ, Իսկէնտէրուն, Պէյլէն, Անախոք 176
Վերջաբան ..... 191

# ՎՐԻՊԱԿ

| Սխալ | Ուղիղ | Երես | Տող |
|---|---|---|---|
| 12 | 21 | 8 | 8 |
| խաղաղորդ | խաղախորդ | 9 | 9 |
| թէշքիլեաթ | թէշքիլաթ | 16 | 28 |
| էվկաթ | էֆգաթ | 16 | 28 |
| թէօհվէ | թէօհֆէ | 19 | 7 |
| Նշխարհ | Նշխար (մի քանի տեղ) | 26 | 1 |
| Ա.թանաս | Ա.թենաս | 26 | 14 |
| քար | քան | 30 | 12 |
| լուկնալ | լոգնալ | 43 | 26 |
| խոսրոթ | խոսրով (մի քանի տեղ) | 61 | 8 |
| կոչէ տուր | կոչէր տու. | 67 | 29 |
| նորա | նմա | 77 | 16 |
| հմուտ, | մուտ | 87 | 27 |
| բացադեայ | բացօդեայ | 93 | 19 |
| զի | քանզ | 109 | 18 |
| գորմ | գոմ | 114 | 8 |
| մէջէն | մեծէն | 168 | 28 |

Ասոնցմէ զատ երբեմն օտար բառերու հնչմանց տարասխալներ, նոյնպէս տեղ տեղ համանշման եւ համաձայն գրեր գբ, թդ, գդ, գղ, չշ, սատ, սո, եւ ասոնց նման գրեր իրարու տեղ շարուած է սխալմամբ։

# ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱՒ

# ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԵԱՆ

---

معارف نظارت جلیله‌سی ۹ ذی القاده سنه ۳۰۳ و ۱۸ تموز ۳۰۲
و ٤٤٥ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

---

Հեղինակութեան բոլոր իրաւունքը վերապահեալ է։

7784
7785
7786

2013

0003984
0003992
0003993